9(56)
Ս-85

Ա. Ն. ՄՈՆՏԵԼՅՈՒՄ

Պօլսոյ Ռուսական կայսերական Դեսպանութեան ճախիկի
Առաջին Դրագոման, Անդամ-աշխատակից Միջազգային
Իրաւունքի Ինստիտուտի

ԵՐԻՏԱՍԱՐԴ-ԹԻՒՐՔԵՐԻ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Պատմա-քաղաքական ակնարկ

Թարգմանութեամբ եւ յառաջաբանով

Վ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ (Դ-ճ.)

1377

ՀԱՅԿ. ԳԱ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՈՒԶԵՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
BIBLIOTEKA
Ин-та Востоковед. АН Арм. ССР

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ
Ելիքսաբաշաւժ Տպարան Մայր Աթոռոյ
1916

9(56)
Ս-85

ՀԱՄԵՍՏ ԳՈՐԾՍ ՆԻՐՈՒՄ ԵՄ

ԸՆԶԱԶՈՒԿ ԵՒ ԻՐԱՒԱԶՈՒԿ ԱՇԽԱՏԱՒՈՐԻ
ԿԵԱՆՔԻ ԵՒ ԻՐԱՒՈՒՆՔԻ ԿՈԹՈՂԸ
ԴԱՐԲՆՈՂ *ՄԵԾ ՀԱՅԻ*

ՍԻՄԷՈՆ ԶԱԻԱՐԵԱՆԻ

ԸՆՄՄԸՐ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Մեր «Ցառաջաբանը» տպագրուած էր արդէն ու գրքոյկն էր շարուում, երբ համայն Ռուսիայում փետրուարեան դէպքերը տեղի ունեցան։ Ու եթէ երեկ անհնար էր ամենն ասել, ասել՝ համարձակ ու բացճակատ, այսօր արդէն, թուում է, որ անհնարին պիտի համարել թէ քիկոնքային գործն ու հրապարակային լուռթիւնը ու թէ հին նեխուած կարգերին յաւուրմ՝ դրելու արգահատելի ոճը։

Ցարի խորտակուած դահը այսօր հնարաւորութիւն է ընձեռել և մեզ՝ գրի առնելու այն ամենը, ինչ իր անպատիժ պատյան է արել «հայ Սիոնի» շուրջը սահմանի թէ մէկ ու թէ միւս կողմը։ Նա կապանքներն է քակել մեր բերնի ու գրչի ազատօրէն ասելու՝ թէ որքան կոշտ ու հմօրէն ամենուր իր չարանենգ դաւն էր նիւթած մի վոքրաթիւ ու ազատասէր ժողովրդի տենչերի հանդէպ աշխարհի հզօրը,—թէ ցուրտ հիւսիսում ու թէ սպլթանների ոճրանիւթ հայրենիքում։ Բայց հնարաւորութիւնից դատ այդ ամենը մի առ մի գրի առնելու հրամայական պարտականութիւնն է դրուած այսօր հրապարակի վրայ։ Գէտ է, ժամանակն է, վերջապէս, ձեռք քաշելու մեր հնազանդ սովորութիւնից,—գործել ու չխօսել, պատմութիւն կերտել՝ առանց վերջինս գրի առնելու։ Գործի հետ մէկտեղ այսօր մենք և՛ գրչին պիտի իր բաժին յարգանքը բերենք։ Ու այդ պիտի անեն առաջին հերթին նոքա, որոնք մեր պատմութեան յատկապէս վերջին կրօնն ու կռոնն են եղել։ Թողէք մեր հասարակական անդաստանի գործիչներն իրենց գործերը, տեսածներն ու լսածները հրապարակեն, որպէսզի ապագայ պատմաբանն ի վիճակի լինի այդ ամենը մէկտեղելու ու հայ հողի և ժողովրդի ճշգրիտ պատմութիւնը տալու։ Թողէք նոքա Սազոնովների ու Վորոնցով-Դաշկովների, Ցարի ու նրա արբանեակների, Անմեդ-Բիզանների ու Թալաթների դատաստական խոստումներն ու նոցա արած գործերը հանուրին ցուցադրեն, որպէսզի ամենի համար էլ ակներև լինի այն, թէ ով մեր պլթին այսօրուայ Մեծ Ոճիրը երկնեց։

«Պատմութիւնը—սովորեցնում է». սէնք այդ պատմութիւնը։

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Անվիճելի ճշմարտութիւնների առաւոտներից մէկն էլ, թերևս, այն է, որ քանի այդ ճշմարտութիւնները շատ են անառարկելի՝ այնքան աւելի կրկնելու պէտքն ունին նոքա։ Այդ ճշմարտութիւններից մէկն ու առաջինն էլ—սոցիալական-հումանիտար, աւելի ստոյգ՝ սոցիոլոգիական դիտութիւնների երերուն ու լաւագէս հիպոթեթիկ դրութիւնն է։ Ոչինչ-վերջնական, ոչինչ-հաստատուն, բոլորը լոկ ենթադրութիւններ՝ հիմնուած ենթադրութիւնների վրայ։ Ահա գիտական մտքի այդ բնագաւառում մինչև օրս ձեռք բերած «ամուր» դիրքերը։ Ու, հարկաւ, այդ դրութեանն է մասնակից, ի թիւս այլ հարցերի, և մեր օրերի խոշոր, սոցիալական կնճիռը։ Ինչ է ազգը, ուր է ցեղի ակունքն և որտեղ—նրա վախճանը. որպիսի արգասիքների ծնունդ է ազգութեան այս կամ այն բարդ շաղախը. արդեօք նա, այդ առեղծուածային ֆերմենտն, արդիւնք է պատմութեան ու բնութեան զուտ-զուտ ու զուգակցուած այլ ու այլ գործօնների, թէ խմոն է այստեղ և մեզ մինչ օրս անգիտակ կարող ոյժերի մատը, թէ յաճախ ու շատ բան ի ծնէ է բնատուր մարդկային խմբաւորումներին է վիճակուած՝ գրեթէ նոյնութեամբ անցնելու ժառանգականութեան բարդ խողովակով դարերի ճամբից սերնդէ-սերունդ։ Հարցեր են սոքա, որոնց պատասխանն դուք իդուր պիտ հայցէք այսօրուայ գիտական մտքի գերազանցօրէն ամուլ վիճակից։ Իւր հաւատի մոլեռանդն, անշուշտ, չի տարակուսի հաւատացեալին յատուկ կուրութեամբ ձեզ մի շաբթ տաղտուկ մտքեր թոթովել, որպէս ճշդրիտ ու վերջին խօսքը գիտութեան։ Բայց, դժբախտաբար, նրա «գիտութիւնը» չի դադարի ուղղափառի հաւատը լինելուց, հմտզեցուցիչ՝ լոկ իրեն ու իր նմանների համար ու վերատին—թոթովանք լաւագէս։

Ինչիցն է, որ Ասիայի վաչկատուն նոմադն, այսօր-

ւայ թիւրք ցեղը, մի ամբողջ պատմութիւն թևակոխեց առանց իւր կերպը փոխելու։ Ինչն է պատճառը, որ առաջինն երբեմնի հզօրներից այսօր իւր հին փառքի փլատակներին կառչած՝ ամենանողկալի վիճակի մնօրինողը դարձաւ։ Ո՞ւր է բանալին այն ողբերգական պրպատումի՝ թէ այդ ինչպէս է, որ մօտ հինգ դար Եւրոպայի ամենագեղեցիկ հողաշերտում հիւրընկալուած իշխող տաճիկը տակաւին չ'փոխուեց—միայց նոյնը՝ նոյն արնոտ թաթով, արնոտ ուղեղով Այդ ինչպէս է, որ բեդուինների, սելջուկեան թիւրքերի, օսմանների, թամերլանի ու էլի օսմանների անփոփոխ ու անրապատ միտքը համայն մարդկութեան ու իւր յեանորդ սերունդներին թէ Ասիայի անապատներում ու թէ Վենետայի պարապների տակ, թէ Ոսկեղջիւրի գեղածիծաղ ափերին ու թէ հայ հողի արիւնաներկ դաշտերում ու ձորերում, թէ իւր վատ ու թէ լաւ օրին, թէ երեկ ու թէ այսօր— ոչինչ չ'թողեց, ոչինչ չ'ստեղծագործեց։ Ինչպէս է, որ նա այսօր էլ—նորէն դէպ Ասիա արտամերժած՝ իրեն հետ ոչինչ չ'պիտի տանի, իւր հետևը ոչինչ չ'պիտի թողնի։ Չ'սպասենք պատասխանի։ Մենք էլ չ'նեղուենք տակ ենթադրութիւնների խարուսիկ գերկը, բաւականանանք միայն եղածը փաստագրելով ու այդտեղ էլ կանգ առնենք։ Այդպէս է թիւրքը։ Այսօր աւելի քան երեկուայ նման, ու երեկ ոչ այնքան որշ՝ որքան այսօր։ Ու եթէ կասկածում էք դեռ,—թերթեցէք հէնց մեր պատմութիւնը, հայի պատմութիւնը։

Ինչն է, որ մեզ իրաւունք պիտի տայ երեկն այսօրից տարբերելու ու ներկային որևէ բանում անցեալի հանդէպ գերակշռութիւն տալու։ Ու այդ երբ է,—որ թիւրք տիրողը խաղաղ կենցաղի չատագովն է եղել, եղել է խթանը քաղաքակրթութեան, ազդակը համայն պրոգրեսի։ Մի տակալի կարծրութեամբ ու անյագուրդ կարծես բնածին վրիժառու բնազդով նա մեր պատմութեան դռնն է իւր առքը դրել ու իւր աւեր ու արիւնի առաքելութիւնն մոլեգնօրէն այստեղ ի կատար ածել։ Մորամուխ եղէք մեր արիւնոտ անցեալի մէջ ու տեսէք՝ թէ ինչիցն է,—որ թէ հայ չինա-

կանն ու թէ հայ քաղքենին, թէ հայ աշխատաւորն ու թէ հայ արհեստաւորը, վաճառականն ու պաշտօնեան, թէ հայ համայնքի խաղաղ անպահն ու թէ նրա ըմբոստ զաւակը, թէ մեր անցեալի տպոլիտիկ շրջանում ու թէ նրա ընդվզումների պահուն—մենք միշտ էլ, ու մենք բոլորս, հայկական հայութիւնը, թիւրք տարրի տիրապետութեան տակ անփոփոխ նոյն խեղճ վիճակն ենք ունեցել։ Տաճիկը ոչ պետութիւն կարողացաւ ստեղծել, ոչ պետական կեանք ու ոչ էլ ընդունակ եղաւ պետականօրէն ապրելու։ Ու նա չ'հանդուրժեց, որպէսզի իրենն ստորադաս հայ ցեղն իւր մաճ ու արօրին յենած հայ գրի ու գրականութեան անարգելն զարունը պատրաստի։ Եւ զարմանալին ու նշանակալիցն այն է, որ նա չ'կարողացաւ այդպիսին լինել անգամ վերջին տարիներին, սահմանադրական դրօշի տակ։

1908 թւի յուլիսի 10 ու 11-ին Պոլսի երանի անդորրը պահ մի վրդովեց պարլամենտի հրաւիրման կոչը, իսկ 1909 թւի ապրիլի 14-ին արդէն՝ Սան-Ստեֆանօ չուած տաճկական պարլամենտը, համաձայն Շէյխ-ուլ-իսլամի ֆեթվայի, գահընկեց ադդարարելով Աւեծ Բռնակալին, երկրի տէր ու մնօրէնը դարձրեց նոցա, որոնք Աբդուլի ոճրագործ քաղաքականութեան դէմ իրենց դաւն էին նիւթել։ «Ես ինձ պատկերացնում եմ,—գրում էր Ռուսիայի տաղանդաւոր պետական գործիչ Ս. Իւ. Վիտտէն,—որ կայ նացիոնալիզմ առողջ, համոզուած, ուժեղ, և ազգու՝ ոչ երկչոտ, ձգտող՝ կայսրութեան պատմական կեանքի պտուղները, ձեռք բերուած ժողովրդի արեան ու քրտինքի գնով, պաշպանելու, ու հանող—այդ նպատակին. ու կայ նացիոնալիզմ,—հիւանդոտ, եսական, ձգտող, ըստ երևոյթին, միևնոյն նպատակին, բայց որպէս ենթարկուող ուելի կըրքերի, քան դիտակցութեան, որը յաճախ յանգում է բոլորովին հակառակ հետևանքների։ Առաջին նացիոնալիզմն է՝ դէպ ուեալ ժողովրդի հայրենիքը կազմող կայսրութիւնը տածած սիրոյ ու նուիրուածութեան ամենավեհ արտայայտութիւնը,—երկրորդը կազմում է նոյնպէս արտայայտութիւնը նոյն զգացմունքների, բայց միայն զազրուած վրէժով, կրքերով, և այդու՝ այդպիսի նացիոնալիզմն երբեմն հանդէս է գալիս XX-րորդ դարի համար վայրագ ձևերով։

Բիսմարկն առաջին տեսակի նացիոնալիստ էր, իսկ Աբդուլ Համիդը—երկրորդ։ Ես կարծում եմ, որ առաջին տիպն ուելի է ցանկալի մեր հայրենիքի բարօրութեան համար»[1])։

Թերևս նման երկընտրանքի ծնունդ էր և՛ Թիւրքիայում տեղի ունեցած մարտը տարրերը տարրերի մէջ։ Մեծ Թուիչքները չէր, որ Անդէս-Բիզանեան և Թալաաթները պիտի անէին,—չէր պահանջւում նոցանից մէկէն ի մէկ Թիւրքիան վերածնել ու քաղաքակիրթ աշխարհների շարքը դասել, չէր էլ պահանջւում՝ որպէս զի նոքա տիրապետող ազգերին «ոսկեայ աշխարհների» խոստումներն անէին ու այդ խոստումների անյապաղ իրականացմանն անցնէին։ Բայց անհրաժեշտ էր գոնէ Համիդից մինչ Վիլհելմեան Բիսմարկը եղած տարածութիւնն անցնել, պատմութիւնը պահանջ ունէր Թիւրքերից—ապրելու ու յարատևելու համար դէթ քաղաքակիրթ ոստոստումներ անել։ Բայց, դժբախտաբար, բոլորովին այլ բան կատարուեց։ Տաճկական յեղաշրջումից յետոյ Եւրոպայի ու մեր հայրենիքի հասարակական կարծիքն առժամապէս լրջօրէն զբաղուեց այն հարցով,—թէ տեղի ունեցած երևոյթն որքան է էական ու թէ նա որքան յարատև պիտ լինի։ Եւ ինչպէս միշտ, ու մանաւանդ այս հարցում, էլի «կարծիքների պարլամենտը» ծնունդ առաւ ու այսօր, դժբախտաբար, վերջնական ու լիակատար յաղթանակը յոռետեսներին ճոպաւ Աբդուլն-Ահմետին, դառամեաներն—«երիտասարդներին», հին Թիւրքիան—«նորին» իրենց տեղերը զիջեցին, բայց նորն իրականութիւնը նոյնը ճոպաւ, կրկին երկրի կենսատու խթանը Թրքական եաթաղանը դարձաւ։ Ու ահա այսօր, 16 երկար ու ձիզ տարիներ Տաճկաստանում ապրած ու նրա կեանքին, գործիչներին ու նոցա գործերին

1) Гр. С. Ю. Витте. По поводу націонализма. Нац. Экон. и Фридрихъ Листъ. СП. 1912 г., изд. 2-ое, եր. 4—5.

լաւատեղեակ ու ձեռնհաս դիւանագէտը գալիս է իր բոլոր ամենայնի հետաքրքիր դրքոյկի մէջ մեզ զբաղեցնող ցաւոտ հարցերին իր հեղինակաւոր պատասխանը տալու։ Հազիւ մի ուրիշն ի վիճակի լինէր այդքան քիչ երեսների վրայ նման հմտութեամբ ու համոզեցուցիչ շեշտով ցուցահանելու—թէ թիւրք ժողովրդի անհնկուածեան աղբիւրը, թէ երիտասարդ-թիւրքերի իսկական դիմակը, թէ դիւանագէտների մարդասիրութեան արժէքն ու թէ թղթեայ ահմհանադրութեան ողբերգական անբովանդակութիւնը։ Հազիւ է պատահում, որ դիւանագէտն այդքան անկեղծօրէն իւր դրւիչը շարժի ու քիչ են դէպքերը, երբ այդ դրւիչն ապիկար չէ հանդիսանում նման կարողութեամբ դէպքերը լուսաբանելու։

Բայց մեզ հետաքրքրում է պ. Ա. Ն. Մանդելշտամի ուսումնասիրութիւնն առանձնապէս երեք տեսակէտից։ Նախ՝ կը գտնի այստեղ տաճկական հին ու նոր քաղաքականութեան—Համիդից առաջ ու Համիդից յետոյ—օբ'եկտիւ լուսաբանութիւնն ու համեմատական գնահատումը։ Երկրորդ՝ այստեղ նա կ'հանդիպի Թիւրքիայում իւր ժամանակին ստացած ու ներգործած դեր կատարած քաղաքական կազմակերպութիւններին ու կարող կ'լինի իւրաքանչիւրին իր արժանի տեղը տալ ու մի վերջին անգամ էլ դատաւորը լինել հայ մեծ քաղաքական հոսանքի դէպ երիտասարդ-թիւրքերն ունեցած գործելակերպի, և, վերջապէս, մի երկու խօսք կըլսի անմիջապէս այն մարդուց, որը մի ցաւոտ հարցի ապաստարն է եղել ու հարկել է ճանաչապարհը չարաբաստիկ համաձայնագրի։

Մենք կ'ցանկանայինք միայն վերջին երկու կէտերի շուրջը մի փոքր կանգ առնել։ Ընթերցողն յիշում է անուշադ, թէ որպիսի յարձակումների էր ենթակայ հայ մեծ կազմակերպութիւնն այն գործակցութեան համար, որն ունեցել էր նա մի որոշ շրջանում Թիւրքիայի գլխաւոր քաղաքական հոսանքներից մէկի՝ երիտասարդ-թիւրքերի հետ։ Հայ մամուլի մի մասը իւր ցասումն էր գալիս յայտնելու, նա դժգոհ էր՝ որ այդ գործակցութիւնը տարւում է «Միութեան և Յառաջադիմութեան», այլ ոչ՝ ազատականների, ապակենտրոնական «Իթթիլաֆի» հետ, որի փառաբանութեան դովքն էր նա անում։ Մեղադրանքներ լսւում էին և ուրիշ շրջաններից, որոնք դէմ լինելով «Իթթիլաֆին», դէմ էին և երիտասարդ-թիւրքերին ու վերջիններիս հետ կայացած «բարեկամութեան» մէջ սկզբունքների վաճառումն էին տեսնում։ Հարկաւոր էր, նախ՝ ապացուցել, որ «Իթթիլաֆի» յետեւը Համիդն էր թագնւած և, երկրորդ որ երիտասարդ-թիւրքերին ցոյց տւած աջակցութիւնը վերջին փորձն է հայ տարրի կողմից Թիւրքիան կորստից փրկելու համար։ Ռուս հեղինակաւոր դիւանագէտն այսօր արդէն գալիս է անվերապահօրէն յայտարարելու,—որ «Իթթիլաֆին» գործի մղողն ու ոգևորութիւն ներշնչողը Համիդեան ոսկիներն էին, որոնք կարողացել էին այդ կազմակերպութեան ճիւղերը մինչ Իրդիզ քաշել ու այնտեղից՝ այլ ու այլ տիպողների տակ դէպ գաւառի ու Պօլսի անկիւնները տարածել։ Նա գալիս է նոյնպէս խոստովանելու, որ երիտասարդ-թիւրքերն էին միակ տարրը ամբողջ Թիւրքիայում մնացած բոլոր քաղաքական խմբակցութիւնների հանդէպ, որոնք օժտւած էին, թէև անշան, բայց մի քանի գրական գծերով, 1908 թւի սահմանադրութիւնը յայտարարելուց յետոյ երկրի քիչ-շատ աչքի ընկնող գործիչները մտել էին «Միութեան և Յառաջադիմութեան» կուսակցութեան շարքերը, այդ հոսանքն էր, որ կարողացաւ ցուցահանել եռանդ, որոշ կազմակերպչական ընդունակութիւններ, և, վերջապէս, նա էր, որ ստեղծեց Թիւրքիայում դէթ ժամանակաւորապէս որոշ կուսակցական-քաղաքական կեանք։ Բայց չ'զլանանք ճշմարտութիւնն ամբողջովին ասելու. չ'մոռանանք, որ երիտասարդ-թիւրքերն էին, որոնք չորս տարւայ ընթացքում երկրին կարողացան տալ բիւջէ, հին հարկերի քիչ թէ շատ տանելի կանոնաւորում, ընդհանուր զինւորական ծառայութիւն, անցագրի վերացում ու մի շարք անշան բարենորոգութիւններ։ Անկասկած շատ քիչ էր այսքանը. քիչ՝ մանաւանդ «ըմբոստ» խմբագրների ու «խոհուն» քաղաքագէտների համար։ Բայց

ինչ արած, երբ աւելին անկարելի էր ստանալ։ Հարկաւոր էր վատ դերի հետ հաշտուել, ստիպւած «ըմբոստի» սիրատուն տիպարից հրաժարուել, եթէ միայն այդ տիպարի կուրծքին «սէրը» Սալոնիկեան կարմիր Սիլուէտին նորէն դէպ Բոսֆորի ափերը կարող էր բերել։ Իսկ այդ վախը կար։ Համիդի ուրուականն արդէն սկսել էր Պոլսի փողոցներում շրջել։ Տրիպոլիս, Մակեդոնիա, Ծուննաստան, Արաբիա, Եւրոպական ակրոբատների մի ամբողջ շքախումբ, համիդական «Իթթիլաֆ» ու մութ խոռոչներում ծւարած օտար ու ոչ օտար «ալբանացիներ» երիտասարդ Թիւրքիայի համար վատ ու դժնդակ օրեր էին ստեղծել։ Դահճի արբանեակները նորից դուրս էին բարձրացրել ու անկարող իրենց ոյժերին վստահանալու, նրանք յետադէմ, աւատական ու պետական կեանքին անսովոր Ալբանիային մեծ մեծ խոստումներով ասպարէզ էին նետել։ Հայ պատգամաւորներն ինչպէս վարւէին։ Ցարել Ալբանիայի «աւտոնոմիային» ու «Իթթիլաֆին» աջակցել,—բայց չէ որ Համիդն էր սրանց յետևը թաղնւած, իսկ երիտասարդ-Թիւրքերին վստահութեան քւէ տալը «անկաշառ հայրենասէրի» աչքում պիտ մեկնաբանւէր որպէս շովին կենտրոնացման վաւերացում և ազգային շահերի դերագոյն դաւաճանութիւն։ Հարկաւոր էր չարիքներից փոքրագոյնն ընտրել։ Չէ որ մի Մակեդոնիա վաղը դժւար ժամին կարող էր երեսը դէպ Բուլղարիա դարձնել, սերբը՝ Սերբիա, յոյնը՝ Յունաստան, արաբը հանդիսա իր տանը նստել, ալբանն իր «աւտոնոմիայի» մասին երազել, իսկ հայն ինչ անէր։ Նա չէ որ կեանքի «խաղաղ» թւերին իւր լաւ ապագան Թիւրքիայում պիտ փնտռէր։ Չէ որ հայը Վանից ու Բիթլիսից, Մուշից ու Էրզրումից ուրիշ տեղ չունէր գնալու։ Նա չէ որ տասնեակ տարիներ իր կաշւի վրայ էր կրել արիւնոտ սուլթանի դիւային լուծը,—հարկաւոր էր ամեն ինչ անել, միայն թէ բռնակալի ուրուականը հեռու մնար հայրենի վայրերից։ Այո, հարկաւոր էր վստահութեան քւէ տալ անգամ երիտասարդ-Թիւրքերին։ Այդ էր պահանջում ազգային շահերի նւիրական և անկաշառ պաշտպանութիւնը,

այդ էր թելադրում անկեղծ սէրը դէպ մի չարաւանջ ժողովուրդ։ Քաղաքական դաւանանքի տարբերութեան տեղ չէր և ոչ էլ հաշիւներ մաքրելու ժամ,—ցաւն ընդհանուր էր, ընդունակ՝ մի վեհ ապրեցման մէջ ընդգրկելու բոլոր անկեղծ ու շիտակ մտածողներին։ Տաճկական պարլամենտի հայ պատգամաւորներն անխափոր տանջւած «հայ» խօսքի չորս կողմն հին բոլորած։ Կար տնաբեկւած հայ ու ահաբեկող սուլթան. կար մի ամբողջ ազգային պանթէոն, արիւնալուայ հայրենիք, մահասարսուռ թւականների մի ամբողջ շարան ու պատմական պատասխանատու բոլէ։ Ահա թէ ովքեր էին ահարնները ու երիտասարդ-Թիւրքերը, ու երբ կամ ինչու վերջիններիս հետ հայ գործիչները գործակցեցին ու նոցա դժւարին ժամին իրենց աջակցութիւնը ցոյց տւին։ Եւ, վերջապէս, անկախ այդ բոլորից հայ տարրն իրեն կոչւած պիտ զգար ի սպաս դնելու «երիտասարդ» Թիւրքիային յանուն իւր ժողովրդի ակնկալած բարօրութեան այն բոլորն, ինչ նա ունէր իւր արտադրութեան տակ՝ քանի դեռ չարաղետ չակերտներն էին թագաւորում։ Անհրաժեշտ էր լաւատեսութեան վերջին հեււումին փարել, անհրաժեշտ էր վերջին ճիգը թափել Թիւրքիայում պետութիւն, պետական կեանք ու քիչ-շատ տանելի կենցաղաձև մշակել, կարկաւոր էր այսօր՝ վաղւայ տենչերի ու յոյզերի անարիւն ճանապարհը հարթել։ Հեշտ է այսօր «արկածախնդրական բնազդները» վատաբանել, շատ հեշտ՝ պատմականօրէն «կանխատեսողի» ու գիտականօրէն «կանխորոշողի» զրամիդը հագած բարձրից նայել հայ ժողովրդի թափած ճիգ ու ջանքերին, երբ նա շարունակ որպէս Սիզիֆն է աշխատել ու որպէս Տանտալը—ձեռնունայն ճաշակել։ Բայց որքան դժւար՝ ստեղծագործական աշխարհում սեփական արգասաւոր խօսքով ու գործով հանդէս գալը... Ինչ պիտ անէր հայ ժողովուրդն ու նրա դեկավար մտաւորականը, երբ Աբդուլն էր տապալւած ու Բեշիդը նրա տեղը բազմած, երբ երկրի միակ ընդդիմադիր ուժ՝ կենսունակ տարրը՝ Իւպանեն ու Թալաաթները,

Նազիրներն ու Էնվերներն այսօր խարուսիկ ու խոստումնալից «երիտասարդ-Թիւրք» տիտղոսով զարդարուած, այլ ևս Պարիզի վտարանդիները չէին ու Սոլունի դաւադիրները, այլ դրութեան տէրերն էին, դարբնողը Թիւրքիայի ապագայի։ Մի ամբողջ բողոքի հնոց յանձնուել էր նոցա՝ փորձած շիլող էր հարկաւոր։ Այդ պատմութիւնը զիլող չէ իւր օրինականութեան մէջ։ Պետական մեխանիզմն, իրօք, անցաւ երիտասարդ-Թիւրքերին, բայց միայն ուժեղի հոգեբանութեամբ։ Սկզբունքներին հաւարիմ մնալը միայն Թոյլին է վիճակուած, միայն նա է, որ գիտէ նկատել՝ թէ որտեղ են վերջիններս անարգւում ու որտեղ՝ խնկարկւում։ Ուժեղը մոռացկոտ է, համակերպող, աստուածներ հրկիզող, եթէ նա անգամ միայն այսօր է ուժեղ։ Կենտրոնացման ու համաթիւրքութեան ցաւով բռնուեց և Միութեան ու Յառաջադիմութեան» կոմիտէն։ Ազգային իրահաւասարութեան, ազգայնօրէն կուլտուրական զարգացման հրամայական կարիքը մոռացութեան տրուեց, ու օսմաննների պետական կեանքն սկսեց շովինիզմի տենդով տառապել։ Առանց երկրի արդիւնաբերական գործօններին զարկ տալու, իրաւահաւասարութեան տարրական սկզբունքները կիրառելու, ժողովրդի տնտեսական տագնապը բուժելու, նա կասկածների ու սին խոստումների ճանապարհը բռնեց, մոռանալով՝ որ այսօր դրա համար չէ, որ այդ կազմակերպութիւնն պետական յուրանի գագաթն է բարձրացել։ Հարկաւոր էր համիդական բնազդների դէմ յարատև ու համարձակ կռիւ,—ու այդ կռիւը տարուում էր թէ երկրի ներսում ու թէ պարլամենտի չորս պատերի մէջ։ Բողոքողների առաջապահ շարքերումն էին և հայ գործիչները, —կռւում էին՝ որքան ոյժ ունէին և ինչպէս կարող էին։ Բայց չէ որ երիտասարդ-Թիւրքերն որքան և շովին, որքան և հարուստ համիդական բնազդներով, յամենայն դէպս, իրենց զարթօնքի պահուն դեռ Համիդ չէին։ Լաւ-վատ, բայց ամբողջ Թիւրքիայում միայն նրանք էին, որ շահագրգռուած էին իրենց հայրենիքի բարգաւաճման գործով, նրանք էին, որ գիտէին գոնէ սահմանադրական ոստոս-

ուածներ անել ու այդ ոստոստուածները սիրել։ Ինչ անել, եթէ ոչ՝ հայ աստղաբաշխ երկնքի վերջին շողին չ'ապաւինել. ինչպէս վարուել, եթէ ոչ՝ վերջին փորձին չանցնել ու վերջին հաւատը չ'ընծայել Թիւրքիայի ծննդին, եթէ ոչ՝ մի անգամ ևս նրան օգնութեան ձեռքը չ'մեկնել։ Չէ որ բողոքող լինել՝ այդ դեռ չի նշանակում լինել այդպիսին միշտ՝ այսօր, վաղը, յաւէտ, ամեն հարցում ու ամեն տեղ. չէ որ նման թիւր հասկացողութիւնը խեղկատակին միայն յատուկ է։ Քաղաքական հաստնութեան վկայականը նա ունի միայն, ով գեղեցիկ սինթեզը կարող է տալ Թոքէքի ու հանդարտիկ էւոլիւսիոնի, ով տկար չէ միայն մէկին ըմբռնելու ու միւսը՝ քաւութեան նոխազ դարձնելու։ Ու գերազանցօրէն իրաւացի է ռուս հրապարակախօս-գիտնական Գ. Վ. Պլեխանովը, երբ ուղղամիտ «ըմբոստներին» Լուկիանի երկախօսութիւնն է յիշեցնում՝ տեղի ունեցած կօշկակար Միքելի ու նրա աքաղաղի մէջև։ Աքաղաղը մարդկային լեզուով էր սկսել իւր տիրոջ հետ խօսել, որովհետև մինչև աքաղաղ դառնալը պատիւ էր ունեցել Պիֆագորը լինելու. ու տիրոջ նոր թերահաւատութեան՝ թէ Պիֆագոր լինել նա չէր կարող, որովհետև տասօրինակ Թռչունը մեծ ախորժակով բակլա է գործածում այն ժամանակ, երբ իւր հանճարեղ նախորդը այդ խստիւ արգելում էր, հանգիստ պատասխանում է,—որ «ինքը չի կարող իւր նոր դրութեան մէջ առողջապահական հին օրէնքներին հետևել, և որ մի դէպքում ճնասակարը կարող է օգտաւէտ լինել մի ուրիշում»[1]։ Դժւար է, իրօք, ամեն ժամանակ ու ամեն դէպքում նոյն օրէնքներին հետևել, երբ յարափոփոխ կեանքն այսօր Պիֆագորին աքաղաղ է դարձնում, իսկ աքաղաղին՝ Պիֆագոր։ Դժւար է ու յանցանք,—անարօր դոգմաներին փարած աչ ու ձախ բանալ՝ մարքս Թոքվիլ ու կեանքում՝ անագանագոյն խելամտեցնողներից լինել։ Առաջին իսկ օրից Երիտասարդ Թիւրքիայի» գերեզմանը փորելը շատ էր պատասխանատու։

1) „Современный міръ“ 1916 № 5—6, եր. 53.

եւ, վերջապէս, ուժ հետ պիտ միանար և որի դէմ պայքարէը հայ գործիչը։ Չէ որ Թիւրքիայի բոլոր հպատակ ազգութիւններն ուրիշ երակներով էին տարուած,—չէ՞ որ յոյնը, մակեդոնացին, բուլղարն ու արաբը, ալբանացին ու սերբը, մի խօսքով՝ ազգային այն հաւաքական միութիւնները, որոնք պարտական էին Թիւրքիայի դէմ իրենց հարուածները, որոնք պարտական էին Թիւրքիայի դէմ իրենց հարուածները մէկտեղելու՝ բոլորովին այլ իդէաներով էին առաջնորդուած։ Թիւրիայից անվախ եւ ո՛չ ոքա ճովանու տակ,—պատմութիւնն ու սերունդների պայքարը այս դէպքին էր նոցա ժառանգութիւն թողել ու, հետեւապէս, նոքա իրենց բարօր ապագան ամենևին էլ Թիւրքիայի ծննդի մէջ չպիտի տեսնէին։ Թիւրիայի ոեs ու կիսալուսնի աղօս փայլի տակ,—այս էր, ընդհակառակն այդ օրերին հայի փրկութեան փարոսը։ Ու, թերևս, ճիշտ էր պ. Միլիւկովն, երբ իւր «Балканскій Кризисъ» աշխատութեան մէջ գալիս էր յայտնելու,—որ գրեթէ միայն հայ ժողովուրդն էր, որ պաշտպան պիտ հանդիսանար երիտասարդ–Թիւրքերին, որովհետև վերջիններիս ցեխտրալիզմը նրան վտանգելու պարագաները չունէր, քանի նա, հայ տարրը, ըստ հեղինակի ասութեան, իւր հարազատ հողի վրայ կոմպակտ մասսա չ'ներկայացնելով, ազգային ինքնօրէնական ձգտումներ չունէր։ Թողնենք հանդիսատ պ. Միլիւկովի բացատրութիւնները, որովհետև նրա «առողջապահական» օրէնքները, նայած տեղին ու պայմաններին, շատ ու շատ յաճախակի են փոխոխութեան ենթարկւել, բայց և չ'դոցենք ճշմարտութեան հանդէպ մեր աչքերը, չ'մոռանանք, որ, իրօք, գրեթէ միմիայն հայ ժողովուրդն էր հպատակ ազգերից, որն անկեղծօրէն պատրաստ էր Թիւրքիայի ծննդի գոհաստեղանին դնելու այն ամենն, ինչ նա ուներ։ Բայց, դժբախտաբար, պատմութիւնն այս անգամ էլ եկաւ հայ ժողովրդի յոյսերն իզուր ու գոհերն ապարդիւն դարձնելու։ Անգամ «երիտասարդները» չ'կարողացան գառամեալ երկրի հիւծախտն ամոքել, նա շարունակեց դէպ անդարձ կորստի անդունդը գլորուղ երկրի վերջին հիւթերը ծծել՝

այսօրւայ Մեծ Ոճիրն ու Թիւրքիայի դերեզմանն երկնելու համար։

II

Պակաս արժէքաւոր չէ պ. Մանդելշտամի դրքոյկն նոյն Թիւրքիայի ու նոյն երիտասարդ–Թիւրքերի արտաքին քաղաքականութիւնը բնորոշելու տեսակէտից։ Թուղթի դիտողութիւններ են արւած այս ու այն երեսների վրայ, բայց ընթերցողն ինքը կգտնի,—թէ նոքա որքան են տեղին, որքան՝ արդարացի։ Բայց մենք մեր յառաջաբանում նպատակ ունինք միայն մի երկու յիշեցումն անել չէ թէ երիտասարդ–Թիւրքերի արտաքին քաղաքականութեան, այլ մեր ապաբախտ ժողովրդի արիւնոտ դատի վերջին փաստի՝ յունւարի 29-ի Համաձայնագրի մասին, որի անմիջական ապաստւորներից է եղել և ինքն՝ Ա. Ն. Մանդելշտամը։ Մենք խորը հաւատն ունինք այն բանի, որ հայ ժողովուրդն արդէն յատակօրէն է իւրացրել այն տարրական ճշմարտութիւնը,—որ դիւանագէտների, վեհաժողովների ու համերգների արդարութիւնը, խիղճն ու իրաւունքը և այլ նման ձևի կատեգորիաները յաւապէս ու խորապէս պայմանաւորւած են այնպիսի դրութիւններով ու պարագաներով, որոնք ոչ մի, աւելի ճիշտ, և՛ ոչ մի կապ չունին վերը յիշատակած բարեմասնութիւնների հետ։ Դոքա օրնամենան են՝ փխրուն ու խարուսիկ, այն հիմնական շէնքի, ուր մտնելու համար եօթ անցք կայ,—որոնցից առաջինի դլխին «շահ» գուրա խօսքն է դրւած, երկրորդի վրայ՝ կրկին նոյն խօսքը, երրորդի վրայ՝ նորէն նոյնը, ու այդպէս—միշտ նոյնը՝ անխտիր բոլոր եօթ անցքերի վրայ։ Ու դուք այսօր բնակիչը կլինիք այդ շէնքի, եթէ հզօրների դէմ ժամանակաւորապէս հաւատարակշռւած «շահը» թոյլ կտայ ձեզ «Համաձայնագիր» ու նման այլ ձևի տիտղոսների տակ ուղ դնելու նրա շէմքին, ու դեռ չտեղաւորւած դուրս կվտարւէք այնտեղից, երբ մեր օրերի այդ ամենակարող Աստւածն իւր ուժեղ ու իրաւատէր հաւատացեալներին՝ ապրելու ու էլ աւելի հզօրա-

նալու ուրիշ աշխարհներ, ուրիշ աշխարհներ ցոյց կտայ։ Ու որքան հրահանգիչ են պ. Մանդելշտամի հետևեալ տողերը.—«Յունուարի 26-ի ակռի ամենամեծ նշանակութիւնը Ռուսաստանի համար կայանում է նրանում, որ այդտեղ Դուռը պաշտօնապէս ընդունում է ռուսական հովանաւորութիւնը տանկահայերի վրայ, այսինքն՝ Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածից մենք նորից վերադառնում ենք Սան-Ստեֆանօի 16-րդ յօդուածին»։ «Քուչուք-Կայնարգի դաշնագրութեամբ,—գրում է արևելեան հարցի մի ուրիշ մասնագէտ 1774 թւի յուլիսի $^{10}/_{22}$-ին համամման գիւղում կայացած հաշտութեան առթիւ,—եկատերինա Մեծին յաջողւեց իրականացնել ոչ միայն Պետրոսի ուխտած երազը՝ Սև ծովի ջրերով մեր առևտրի համար ազատ ու անարգել նաւադնացութիւնն ստեղծել, այլ և ձեռք բերել մի ուրիշ ոչ պակաս կարևոր արտօնութիւն, ըստ որի միայն Ռուսաստանին էր վերապահւում Բարձր Դռան գործերին միջամտելու իրաւունքն՝ արեւելքի hրիստոնեայ ժողովրդներին պաշտպանելու նպատակով»[1]։ Թւում է, թէ արևելեան հարցով հետաքրքրւողների կարծիքների ու ըմբռնումների շարանն երկարելու կարիքը չկայ, որովհետև մենք միշտ նոյն անայլայլ իմաստութեանը պիտի հանդիպենք, եթէ անգամ տարբեր բաներ փնտռելու լինենք։ Այդ հարցը քաղաքական տեսակէտից այն չափով է եղել մղիչ ու ազդու, ինչ չափով հնարաւոր է եղել «քրիստոնեայ ժողովրդների» միակողմանի պաշտպանութեան առհասարակ ստեղծել ու տարած յաղթանակն այնքան աւելի մեծ ու բախտորոշող, որքան յաղթողներն ի վիճակի են եղել յիշատակած «միակողմանիութիւնն» իւր ծայրայեղութեան հասցնել։ Ու եթէ մենք 1698 թւի կարլովիցի հաշտութիւնն ընդունենք որպէս անկրկնելի, որից պարզօրէն սկսւում է Եւրոպական մեծ պետութիւնների միջամտութիւնը Ռուսաստանի և Թիւրքիայի արևելեան հարցի

1) Креницынъ, Н. В. „Восточный вопросъ на почвѣ его исторіи и политики“ СП., *1900, եր. 21.* ընդգծումները իմն են։ Դ.Ն.

շուրջը պատող փոխ-յարաբերութիւնների խնդրին, կտեսնենք,—որ մէն-մենակ այդ կէտն, այսինքն այն հանգամանքը՝ թէ ով է «հովանաւորողը» քրիստոնեայ ժողովրդների, կարողացել է հզօրապէս գատել ու զօդել, բարեկամացնել ու թշնամացնել աշխարհի տէրերին, նա հանդիսացել է, եթէ կուզէք, միակ առանցքը, որի շուրջն են պտտւել արևելեան քաղաքականութեան բոլոր վերիվայրումները։ Քուչուք-Կայնարգիում միայն Ռուսաստանը, իսկ 1840 ու 41 թւերի Լոնդոնի կոնվենցիաներից յետոյ 1856 թւի Պարիզի կոնգրէսին գրեթէ ամբողջ Եւրոպան. Սան-Ստեֆանոյում—կրկին միայն Ռուսաստանը, իսկ Բերլինում նորէն ամբողջ Եւրոպան. 1614 թւի յունւարի 26-ի Համաձայնագրով—էլի միայն Ռուսաստանը... ու միշտ էլ... նոյնը՝ նոյն կախարդական շրջանում։ Իսկ թէ այն, ինչ այդքան գերազանցօրէն արժէքաւոր է իրենց՝ «հովանաւորողների» համար, որքան է ազէտաբեր ու չարադիւթ «քրիստոնեայ ժողովրդների» կենսական շահերի տեսակէտից, պերճախօս կերպով ցոյց են տալիս հայ ցեղի գլխին պայթած այսօրւայ անլուր ոճիրն ու ռուս դիւանագէտի հետևեալ իմաստակիր խօսքերը.—«Երբ մեծ վեզիր Սայիդ-Հալիմ փաշան 1914 թւի յունւարի 26-ին ռուս հաւատարմատար Կ. Ն. Գուլկովիչի հետ միասին ստորագրեց այն ակտը, որով Տաճկաստանը պարտաւորւում էր դիմել պետութիւններին Հայկական բարենորոգութիւնների նոտայով, հին սուլթանը, որ դիտում էր այս տեսարանը Բոսֆորի ափում Բեյլերբեյի գեղեցիկ պալատի պատուհաններից, կարող էր լիակատար իրաւունքով բացականչել.—«Ալլահը մե՛ծ է, սրա համար չարժէ՛ր կառավարութիւններ փոխել»[1]։

Մի խօսքով՝ արժէ կարդալ պ. Մանդելշտամի գրքոյկն ու առաւել ևս—դառը խորհրդածութիւնների նիւթ դարձնել նրա մէջ արձանագրած մերկ ճշմարտութիւնները։

Դ—ճ.

1) *Ընդգծումը մերն է։* Դ—ն.

ԵՐԻՏԱՍԱՐԴ-ԹԻՒՐՔԵՐԻ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ

I

ԱԲԴԻԼ-ՀԱՄԻԴԻ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ.

1908 թ. յուլիսի 10 և 11-ին մակեդոնական բանակի երիտասարդ սաճիկ սպաները դրեթէ առանց արիւնահեղութեան վերջ տուին թիւրքական պատմութեան ամենամռայլ շրջաններից մէկին։ Ռեւնայում, Օխրիդայում, Մոնաստիրում, Սալոնիկում, Ուսկիւբում որոտացին թնդանօթներն ի պատիւ սահմանադրութեան վերականգնման։ Սերբական, բուլղարական և յունական չոհատներն յաղթականօրէն մտան մակեդոնական քաղաքներն ու ընկերացան թիւրքերին, իսկ Պոլսում Աբդիւլ-Համիդը—կարմիր Սուլթանը—դողդոջուն ձեռքերով իւր կնիքը (թուղրան) դրաւ իրեն առաջադրած պարլամենտի հրաւիրման ուխտին, որի մէջ՝ ի զուր արիւնհեղութիւնն և օտարների միջամտութիւնը կանխելու մտահոգութեամբ՝ ընդունւում էր ժողովրդական շարժման դիմելու անհրաժեշտութիւնը։

Որպիսի ժառանգութիւն էր թողել Աբդիւլ-Համիդն ըմբոստացած երիտասարդ թիւրքիային։

Երկիրը ներքուստ ներկայացնում էր մի քայքայւող ժառանգութիւն, որի տնօրէնը մէկն էր ամենամեծ բռնակալներից, որոնց երբ և է ճանաչել է Արևելքը։ Սկսած 1876 թ., այսինքն այն ժամակուանից ինչ Աբդիւլ-Համիդը տրել էր առաջին սահմանական պարլամենտի անդամներին, իւրաքանչիւր մի հասարակական և անհատական նախաձեռնութիւն ճնշել է ամենամեծ վայրագութեամբ։ Զարթատոիկ սահմանադրութեան հեղինակ Միդհատ—փաշային յետոյ հազարաւոր թիւրքեր, առաւելապէս

երիտասարդ սպաները, դրկվել են կեանքից իրենց վերագրած ապատամիտ համոզմունքների համար։ Ուրիշ հազարներ փթիլ են քանտերում և տառապել աքսորավայրերում, և այդ էլ շատ դէպքերում շինծու ամբաստանութիւնների շնորհիւ։ Լրտեսութիւնը (խաֆիելըք) զարձել էր պետական հիմնարկութիւն, որի պահպանութեան համար սուլթանը չէր խնայում և ոչ մի ծախք,— հիմնարկութիւն, որը սահմանադրութեան վերականգնումից յետոյ Աբդիւլ-Համիդը յատուկ ուշադրով (1908 թ. յուլիսի 17–ից) ստիպած էր վերացնելու։ Ամենավտանգաւոր բարոյական թոյնը կաֆիլ-կաֆիլ ներս էր ծծում ժողովրդական ուղեղն և դանդաղօրէն, բայց պարզապէս թունաւորում նրան։ Համարձակ կարելի է ասել, որ «ժուրնալ» (ամբաստանութիւն) խօսքը նշանակ էր դարձել աբդիւլ—համիդեան շրջանի։ Աբդիւլ—Ազիզի բոլոր օգտաւէտ բարենորոգութիւններն առ ոչինչ էր յայտարարել։ Քաղաքային ու շրջանային ինքնավարութիւնները գոյութիւն ունէին միայն անուանապէս։ Չէր տարուում կանոնաւոր պետական տնտեսութիւն. բիւջէ ամենևին չէր յայտարարուում։ Աբդիւլ—Համիդն առանց քաշւելու անդադրում պահանջում էր վալիներից (գեներալ—նահանգապետներից) խոշոր վճարներ յօգուտ սուլթանական գանձարանի, իսկ վալիներն էլ իրենց հերթին ապօրէն տուրքերով ծանրաբեռնում էին ազգաբնակութիւնը։ Տարեկան հաշւեպակասն այդ իսկական աւազակային տնտեսութեան հասնում էր մօտ երկու միլիոն լիրայի, որը ծածկւում էր փոխառութիւնների և ամենաանհրաժեշտ ծախքերի կրճատման գնով։ Զինւորները շարունակ քաղցած էին։ Պաշտօնեաները ու սպաները շատ անկանոն ռոճիկ էին ստանում, երբեմն տարւայ մի քանի ամսւանը միայն,—այդ պատճառով էլ նոքա սովորաբար վաճառում էին ռոճիկ ստանալու իրենց իրաւունքը վաշխառուներին՝ 50, երբեմն՝ 30, մինչև անգամ և 15%։ Դրա հետ միասին կաշառակերութիւնն այլանդակ չափերի էր հասել, մանաւանդ դատարանում։ Այդ վաճառուած դատարանը, գտնւում էր բացի դրանից, սերտ կախման մէջ պալատից ու վարչութիւնից, առաւելապէս, ի հարկէ, քաղաքական գործերում։ Տաճկական մամուլը անքում էր նախնական անագորոյն գրաքննութեան լծի տակ և ամենևին չէր կարողանում մօտենալ կառավարութեան ոչ ներքին և ոչ արտաքին քաղաքականութեան.—նրան թոյլատրւում էր միայն ամենաքծու դարձւածներով սողալ Սուլթանի առաջ և պատմել նրա սեւամէջի այցի մասին։ Ժողովրդական լուսաւորութեան գործը կենտրոնացած էր ամենագռեհիկ ձեռքերում, և ստորին ու բարձրագոյն դպրոցներից անինայ հալածւում էր ճշմարիտ-գիտական ոգու ամեն մի առկայծում.—անգամ մի քանի թրքական սուրբ գրքերի

վրայ Սուլթանի հրամանով արգելք էր դրւում, նոցա մէջ արծարծւած՝ խալիֆի դէպ ժողովուրդն ունեցած պարտականութիւնների «ազատ» մտքերի առթիւ։

Ինչ վերաբերում է, մասնաւորապէս, Սուլթանի հրիստոնեայ հպատակներին, այստեղ արդէն եկեղեցական, դպրոցական և իրաւական (պակաղրութեան և կտակների սահմանում) արտօնութիւնները, որոնք հնուց պատկանում էին պատրիարքութիւններին, քէպէտ և ձեւականօրէն նոցանից խլւած չէին, բայց և յաճախ ոտնահարւում էին։ Աբդիւլ—Համիդի կառավարութիւնն անգամ չէր բացատում պատրիարքների իրեն ուղղած հարցապնդումների իրաւունքը։ Բայց թէև պատրիարքների բողոքներն արտօնութիւնների խախտման դէմ, առաւել ևս երբ այդ բողոքներին հետևում էր եկեղեցիների փակումը, երբեմն և ունենում էին որոշ հետևանքներ,—նոքա երբէք նպատակին չէին հասնում, երբ Սուլթանը որևէ պատճառի շնորհիւ գտնում էր կարևոր դիպչելու չէ թէ այդ արտօնութիւններին, այլ իւր քրիստոնեայ հպատակների կեանքին։ Հարիւր հազարաւոր դժբախտ հայեր՝ խողխողւած 90-ական թւականների վերջերին իրեն՝ Աբդիւլ—Համիդի անձնական հրամանով, տասնեակ հազարաւոր մակեդոնացիներ՝ նահատակւած դահիճների ձեռքերով, որոնք գործել են էլի նրա թելադրանքի ու սադրանքի շնորհիւ, վկայում են պատմութեան առաջ Աբդիւլ—Համիդի դէպ իւր քրիստոնեայ հպատակներն ունեցած իսկական վերաբերմունքի մասին։

Օտարերկրացիներից ոմանք գտնւել են սուլթանական իշխանութեան կարողութեան սահմաններից դուրս։ Միանգամայն հասկանալի է, որ քանի շատ էր ծանրանում ու վատթարանում տաճկական ռեժիմը, այնքան աւելի նախանձախնդրօրէն օտար պետութիւնները պահում—պահպանում էին իրենց հպատակների իրաւունքները, ապահովւած հնօրեայ դաշնագրութիւններով և անգամ ձգտում էին ըստ կարելոյն նոցա շրջանակների լայնացման։ Ինչպէս յայտնի է, ըստ այդ դաշնագրերի իւրաքանչիւր օտարերկրացի Թիւրքիայում էքստեռիտորիալ է. նրա ոտնը տաճիկ ոստիկանութիւնն առանց նրա հիւպատոսարանի համաձայնութեան չի կարող ոտք դնել, առանց այդ համաձայնութեան էլ նա չի կարող բանտարկւել։ Օտարերկրացիների մէջ եղած գործերն ենթակայ են չէ թէ տաճկական, այլ հիւպատոսական դատարանների իրաւասութեան։ Թիւրքերի և օտարերկրացիների մէջ տեղի ունեցած խառը գործերը քննւում են տաճկական դատարաններում, բայց նոցա առթիւ եղած որոշումներն անվաւեր են, եթէ նոքա հաստատւած չեն ներկայ գտնւող հիւպատոսական ներկայացուցչի կողմից։ Նախնական բանտար-

դելութիւնն եւ պատիժը օտարերկրացին պիտի կրի չէ քէ տաճկական, այլ հիւպատոսական բանաձեւումն։

Այդ այսպէս անուանեալ իրաւական դաշնագրերը [1] ամենէն էլ չեն սպառում Տաճկական Պետութեան օտարերկրեայ հպատակների արտօնութիւնները։ Ըստ դաշնագրերի, օտարերկրացիներին արել է Թիւրքիայի սահմաններում ազատ առեւտրի լիակատար ապահովութիւն, և արտահանման մաքսերն որոշած են եղել 8% ad valorem. միայն 1907 թ. Դուռը կարողանում է պետութիւնների համաձայնութեամբ բարձրացնել մինչև 11%, ու այդ էլ այն պայմանով, որ եկամուտների աւելորդը գործադրւի մակեդոնական բարենորոգութիւնների վրայ։ Հարկեր չեն կարող վերցնել օտարերկրացիներից առանց իրենց պետութիւնների համաձայնութեան.—այսպէս, օրինակ, ըստ տաճկական 1867 թ. անշարժ կայքերի օրէնքի՝ նոքա վճարում են հողային տուրք ընդհանուր այն հանգամանքի միայն, որ այդ օրէնքն ընդունւել է պետութիւնների կողմից։ Դրան անաչեական կախումը պետութիւններից ուժեղանում է և նրանով, որ կառավարութիւնը մեհմանորների հաստատման իրաւունք չունի։ Վերջապէս, ինչպէս յայտնի է, մեզ հետ ունեցած վերջին պատերազմից յետոյ անանկացած Տաճկաստանը ստիպուած էր 28 մուհարեմի 1299 (1881 թ. դեկտեմբերի 20) հրովարտակով Թոյլ տալ հիմնելու Պոլսում յատուկ յանձնաժողով, բաղկացած Դրան օտար պարտատէրերի ներկայացուցիչներից, օսմանեան պետական պարտքը (Dette Publique Ottomane) ծածկելու համար։ Այդ յանձնաժողովին էին տրւած վեց պետական հարկերից (ձկախոտից, ալից, ձկնորսութիւնից, մետաքսագործութիւնից, օղուց, նոյնպէս և դրոշմային հարկից ստացւած մուտքերը, իսկ այդ մուտքերն էլ Dette Publique—ի վարչութիւնն էր հաւաքում իւր սեփական մարմինների միջոցով։

Տաճկական պետականութեան ստորին մակարդակը միանգամայն բնականօրէն Եւրոպական միջամտութեանն էր ենթարկել օսմանեան կառավարութեան և ուրիշ շրջանները։ Այսպիսով, XVIII դ. վերջին տաճկական հողի վրայ առաջ եկան օտարերկրեայ պռոտեկցիոն հիմնարկութիւններ, լուծեցան ճանաչւած Դրան կողմից։ 1840 թ. Պոլսում հիմնւեց օտարերկրացի ու տաճիկ անդամներից՝ միջազգային սանիտարական խորհուրդ, որի նպատակն էր պաշտպանել Տաճկաստանը, իսկ նրա միջոցով և Եւրոպան, վարակիչ հիւանդութիւններից.—խորհուրդն առևտրական նաւագնացութիւնից յօգուտ իրեն տուրք է վերցնում և ունի ամբողջ Պետութեան մէջ իր տրամադրութեան տակ բազմանդամ սանիտարական կազմ։ Կայ նոյնպէս փարոսների միջազգային յանձնաժողով և ջրերի վրայ փրկութեան միջազգային յանձնաժողով։

Իմ մատնանշած տաճկական գերիշխանութեան սահմանափակումները տարածւում էին ամբողջ Պետութեան վրայ։ Բացի դրանից, առաւելապէս արգահատելի Աբդիւլ—Համիդի ու նրա արբանեակների քմահաճ կառավարութիւնն այս կամ այն ազգաբնակչում՝ առաջ էր բերում Եւրոպական միջամտութիւն Պետութեան և այդ մասի գործերի մէջ։ Այսպէս, 1895 թ. հայկական կոտորածն առաջ բերաւ Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի միջամտութիւնն և ստիպեց սուլթանին տալ 1895 թ. հոկտեմբերի 20 հայկական բարեկարգութիւնների հրովարտակը, որը, սակայն, մեռած տառ մնաց։ Իրերի դրութիւնը կրետայի վրայ պետութիւններին ստիպեց յատուկ ռեգլամենտ մշակել, ըստ որում կառավարութիւնը տրւում էր պետութիւնների համաձայնութեամբ Սուլթանի կողմից նշանակւած գեներալ—նահանգապետին։ Սուլթանը ռեգլամենտն ընդունեց 1896 թ. օգոստոսի 27-ին։ Այդ ժամանակւանից չորս պետութիւններ (Ռուսաստան, Ֆրանսիա, Անգլիա և Իտալիա) իրենց հովանաւորութեան տակ են առնում կրետայի ինքնավարութիւնը. 1898 թ. նոքա ստիպում են Թիւրքիային դուրս տանել իւր զօրքերը, իսկ 1899 թ. մատնակցում են կրետական սահմանադրութեան մշակմանն։ Մակեդոնիայում քրիստոնեաների հալածանքների քաղաքականութիւնը նախ բերեց 1903 թ. ապրստամբութեան, յետոյ՝ ռուս—աւստրիական նախագծի, տաճկական գեներալ-ինսպեկտորին քաղաքացիական ներկայացուցիչներ տալու ճանապարհով, իսկ յետագայում՝ Մակեդոնիայում միջազգային ժանդարմերիայի և միջազգային ֆինանսական յանձնաժողովի հաստատման։

Այսպիսով, ի մի բերելով նամդիեան բաղաքականութեան արդիւնքները, կարելի է ասել,—որ նա զարգացրեց մինչ ծայր աստիճան այն բոլոր բացառական կողմերը, որոնք յատուկ են ընդհանրապէս տաճկական պետականութեան.—բռնապետութիւն բոլոր հպատակների նկատմամբ. առանձնապէս անողորմ հալածանք, իսկ երբեմն և ջարդ քրիստոնեաների. ժողովրդի մէջ տգիտութեան եւ կրօնական մոլեռանդութեան պահպանութիւն։ Նման քաղաքականութիւնը միանգամայն բնականօրէն ամբողջ Թիւրքիայում թէ օտարերկրացիների իրաւունքների Եւրոպական պաշտպանութիւնն ուժեղացրեց ու թէ կառավարութեան որոշ շրջանների վրայ միջազգային հսկողութիւնը հաստատեց։

[1] *Մանրամասն նկարագրութիւնը ժամանակակից դաշնագրական ռեժիմի* (капитуляціонный режимъ.) *կարելի է գտնել իմ գրքում* «La Justice Ottomane dans ses rapports avec les Puissances Etrangères». Paris, 1911.

Բայց անկախ այդ համաեւրոպական միջամտութիւնից, որն իրագործւում էր յանուն իրաւունքի և ցիւիլիզացիայի շահերի, Աբդիւլ-Համիդը թոյլ տուաւ և մի ուրիշ ազդեցութիւն, արդէն միանգամայն եսական, որի զարգացումից պիտի կործանուէր նրա պետութիւնը։ Այդ—Գերմանիայի ազդեցութիւնն էր։

Աբդիւլ-Համիդի ժամանակ էին հրաւիրւած գերմանական զինուորական վարժիչները։ Նրա ժամանակ Վիլհելմ կայսրն երկու անգամ այցելեց Թիւրքիան և յայտարարեց իրեն բարեկամ բոլոր մուսուլմաններին։ Նրա ժամանակ գերմանական ընկերութեան՝ Բաղդադի երկաթուղագծի առանձնաշնորհումը տուեց։ Նրա ժամանակ գերման գաղութաբնակիչների ալիքն Ասիան հեղեղեց։ Ոչ այլ ոք, եթէ ոչ նա, բաց արաւ գերմանացիների առաջ տաճկական տան առաջին, արտաքին դարպասները։ Երիտասարդ-Թիւրքերը բաց արին երկրորդը—ներքինը։ Մուսուլմանական աշխարհի աչքում նոյն մեծ անարգանքն ընկնում է թէ Սուլթանի ու թէ երիտասարդ Թիւրքիայի վրայ։ Երիտասարդ-Թիւրքերից ոչ պակաս մեղաւոր է Աբդիւլ-Համիդն այն բանում, որ գերմանացիները ներս մտան ոչ միայն սուլթանատի հնացած վերնատունն, այլ և իրենց աւազակային ձեռքերով հանեցին այնտեղից խալիֆանների կանաչ դրօշը։

II

ԵՐԻՏԱՍԱՐԴ-ԹՐՔԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

I. ԵՐԻՏԱՍԱՐԴ-ԹԻՒՐՔԵՐԻ ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ։

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ

(1908 թ. յուլիսի 10—1909 թ. ապրիլի 13)

Երիտասարդ-Թրքական յեղափոխութիւնը պայթեց չէ թէ Պոլսում, այլ դաւառում—Մակեդոնիայում։ Այդ ամենևին էլ պատահական երևոյթ չէր, այլ տրամաբանօրէն բղխում էր համիդեան ռեժիմի պայմաններից։ Մի կողմից՝ սուլթանն աննկուն քշում էր քիչ-շատ կասկածելի տարրերը դէպ դաւառ, որը վերջ ի վերջոյ վխտում էր դժգոհներով. միւս կողմից՝ Մակեդոնիան հարուստ էր՝ ոյժի միջոցով իր անարդւած իրաւունքները պաշտպանելու վարակիչ օրինակներով։ Երկար տարիների ընթացքում հետամուտ լինելով չեռնիկներին, կուբ դուրս գալով թոյլերի դէմ, երիտասարդ տաճիկ սպաները շատ բան էին սովորել իրենց ալաւն և յոյն հակառակորդներից։ Ամենատկանաւոր երիտասարդ-Թիւրք գործիչներից ինձ պատահել է լսել, որ «Միութեան և Յառաջադիմութեան» գաղտնի ընկերութեան սկզբնական կանոնադրութիւնն ու նրա ամբողջ կազմակերպութիւնը նոքա ընդօրինակել են ոչ այլ ոքից, եթէ ոչ տաճկական տիրապետութեան ոխերիմ թշնամուց—մակեդոնական ետերիճ կազմակերպութիւնից։

Վաթարդի երիտասարդ-Թիւրքերը, այսպէս կոչւած „Jeunes Turcs“, սովորաբար ճանալով Ֆրանսիայում և յեղափոխական գրքոյկներով այնտեղից հեղեղելով իրենց հայրենիքը, ի հարկէ, նոյնպէս աշակցել են ազատագրական շարժման յաջողութեան, առաւելապէս մեծ են այդ տեսակէտից Թիւրքիայում շատ տարածւած պարիզեան «Մէշվերեաթ» հրատարակչի, Ահմեդ-Ռիզայի [1] ծառայութիւնները։ Ես պէտք է, այնու ամենայնիւ, մատնանշեմ, որ Աբդիւլ-Համիդին յաճախակի յաջողւում էր կաշառքի միջոցով էմիգրանտներից շատերին համոզել Պոլիս վերադառնալու։ Այսպէս, Թուլամորթ գնաց գայթակղութեան առաջ անգամ քուրմը տաճիկ ազատամիտ երիտասարդութեան, «Միփտահ» հրատարակիչ Մուրադ-բէյը։ Այսպիսով, տաճկական էմիգրանտութիւնն եթէ որ և է դեր կատարել է Թիւրքիան Աբդիւլ-Համիդից ազատագրելու գործում, այդ եղել է, յամենայն դէպս, ոչ զեկավարող դեր։

Պոլսական զինուորական դպրոցից դուրս ելած Օսմանեան, բանակի երիտասարդ սպաները, անկասկած, Թիւրքիայի ամենատաղաչէմ տարրն էին ներկայացնում։ Այդ ուսումնարանը միակ դպրոցական հիմնարկութիւնն էր, ուր Սուլթանը կարիքից ստիպւած թոյլ էր տալիս Եւրոպական գիտութիւնների դասաւանդումը,—այդ պատճառով էլ սպաները տիրապետում էին որոշ կրթութեան։ Միւս կողմից՝ դպրոցում գոյութիւն ունեցող կարգերը լցնում էին նոցա սրտերն ամենախոր տեղութեամբ դէպ Սուլթանը, որը հաշւում էր այդ կերթ պատանիների հետ որպէս անխուսափելի չարիքի, իր լրտեսների միջոցով հետամուտ էր լինում նոցա իւրաքանչիւր մի քայլին և ամեն շրջանառարտներից զատելով անվստահելիների մի որոշ մաս՝ քշում էր նոցա կամ Աֆրիկայի խորքերը, կամ թէ ենթարկում էր մահւան պատժի։ Այսպիսով, ճոռոմաբած տաճիկ երիտասարդ սպայութիւնը միանգամայն բնականօրէն իրեն կոչւած էր համարում ազատագրելու հայրենիքը համիդեան ռեժիմից։

Մակեդոնական սպայութեան այդ զգացումներին միացաւ,

---

1) Ցետագայում պատգամաւորների պալատի նախագահ։

սկսած 1903 թ., և մի ուրիշը՝ Տեսնելով՝ թէ ինչպէս բարենորոգութիւնների ներմուծման հետ միասին Մակեդոնիան ընկնում է օտար տկողութեան տակ, ինչպէս քաղաքացիական աստիճանաւորներից յետոյ հրևան են դալիս օտարազգի ժանդարմական սպաներ և օտարերկրեայ ֆինանսական յանձնաժողով, տաճկական սպաները, որպէս ջերմ հայրենասէրներ, անկարող էին, ի հարկէ, չդդալ իրենց խորապէս վիրաւորուած։ Նոցա թւում էր, թէ Սուլթանը վաճառում է հայրենիքն օտարազգիներին։ Իսկ երբ կայանում է ռեվելեան տեսակցութիւնն և լուրեր են տարածւում ի լոյս մակեդոնական բարենորոգութիւնների՝ լայն լիազօրութիւններով քրիստոնեայ գեներալ–նահանդապետ նշանակելու մասին, այդ ժամանակ արդէն տաճիկ սպաների և «Միութեան ու Յառաջադիմութեան» դաղտնի կազմակերպութեան և ուրիշ մահմետական համբերութեան բաժակն է լցւում։ Էնվեր ու Նիազի «ազատութեան հերոսները» բարձրացնում են ապստամբութեան դրօշը, մի քանի օրւայ ընթացքում շարժումը ծաւալւում է ամբողջ Մակեդոնիայում,—և Աբդիւլ–Համիդը՝ մշտապէս յառած լինելով իր ուշադրութիւնը մայրաքաղաքի վրայ ու չնկատելով մարքերի պղտորումը դուրսը, աւելի խոհեմ է դտնում ժամանակաւորապէս զսպել իր թոյնն ու վիշտը։ 1908 թ. յեղափոխութիւնն երկրին նատում է մի քանի կեանք միայն։

Դոյութիւն ունի մի այնպիսի կարծիք, որի համաձայն երիտասարդ–թրքական յեղափոխութիւնը գլխաւորապէս մասոնների գործ է։ Կասկած չկայ, որ Սալոնիկում եղած մասոնական ժողովարանները մեծապէս օգնել են երիտասարդ–թիւրքերին, որոնցից շատերն անդամագրւած են եղել այդ ժողովարաններին։ Բայց մասոնների այդ մասնակցութիւնը չպէտք է վերագրել չափազանցեցրած նշանակութիւնն։ Իմ մասնասչած պատճառները կատարեալապէս բաւ էին շարժում ստեղծելու համար, իսկ մասոնական, գլխաւորապէս, նիւթական օժանդակութիւնը կարող էր միայն բռնկումն արագացնել։

Երիտասարդ–թիւրքերը, դառնալով Թիւրքիայի լիակատար տէրերը, այնու ամենայնիւ, վճռականութիւն չունեցան բաց ճակատ երկրի կառավարութեանը ձեռնամուխ լինելու։ Սկզբնական շրջանում նոքա պետական իշխանութեան գաղտնի հսկիչների դերը դերադասեցին։ Սուլթան Աբդիւլ–Համիդին նոքա թողեցին իր դահի վրայ, բայց տարադրեցին նրա մտերիմներից նոցա, որոնց ամենից շատ էին ատում ու մտցրին սուլթանի ապարանքն իրենց նուիրւած մարդկանց։ Ճիշտ նոյն ձևով էլ նոքա մեծ եպարքոսի պաշտօնին դրին զառամեալ Քեամիլ–փաշային, որը քանիցս եպարքոս էր եղել Աբդիւլ–Համիդի ժամանակ, և տամմանափակեցին միայն մի

քանի պորտֆելներ տալով իրենց կողմնակիցներին, ինչպէս Խակիք ու Մանիասսի–Ջադէ–Ռեշիդ–բէյերն էին։ Գաւառներում էլ համիդեան կարգերի բոլոր փայլուն ներկայացուցիչները պաշտօնանկ եղան, բայց նոցա տեղերը տրւեցին չէ թէ յեղաշրջման գործիչներին, այլ նոցա, որոնք անցել էին իրենց կողմը յեղափոխութիւնից նոր յետոյ միայն։

Երիտասարդ–թիւրքերի գործելակերպի նման դդոյշ ձևը բացատրւում է, իմ կարծիքով, նոցա շաքքերի նօսրութեամբ, և լուրջ պետական գործունէութեան համար իրենց լիակատար անպատրաստականութեան դիտակցութեամբ։ Այդ բոլոր երիտասարդ սպաները, ժողովրդական դպրոցների ուսուցիչները, այդ բոլոր էնվերները, Ջավիդները, Թալէաթներն ու Թալաաթները հաւասարաչափ ոգևորւած էին և՛ հայրենասիրական գաղափարներով, և՛ իշխանութեան տենչով։ Բայց նոքա իրենց անցումը մակեդոնական գետնափոր նկուղներից դէպ Բարձրագոյն Դուռը որոշեցին կատարել չէ թէ միանդամից, այլ աստիճանական քայլերով։

«Միութեան և Յառաջադիմութեան» (Իթթիհատ–վէ–Թերաքքի) կուսակցութեան գլուխ մնաց կանդնած Սալոնիկեան գաղտնի կենտրոնական կոմիտեն, որը հրահանգներ էր տալիս կազմակերպութեան հաւատացեալներին կամ ակումբներից, որոնցով պատած էր ամբողջ երկիրը։ Ու թէև կենտրոնական կոմիտէի անդամների անունները չյայտարարւեցին, բայց նոքա շուտով հանրածանօթ դարձան, շնորհիւ իրենց հրապարակորէն երևան գալուն։ Ոչ ոքի համար նոյնպէս գաղտնիք չէր, որ կոմիտէի Գոլսի ներկայացուցիչներն ամեն օր «խորհրդակցում են» կառավարութեան անդամների հետ, այսինքն թելադրում են նրանց իրենց կամքը։ Երջանային ակումբների անդամները միանգամայն բացարձակ խառնւում էին վարչութեան գործերին, պահանջում էին նահանգապետներից փոխել իրենց անհաճոյ պաշտօնեաներին, և կարողանում էին կենտրոնական կոմիտէի միջոցով հրաժարեցնել անհնազանդ նահանգապետներին։ Դիւրակրօնի դերն ակումբներում կատարում էին սպաները։

1908 թւի սեպտեմբերին «Միութեան և Յառաջադիմութեան» կուսակցութիւնը հրատարակեց իր հաղաքական ծրագիրը, ըստ որի պահանջւում էր 1876 թ. սահմանադրութեան փոփոխութիւնն աւելի ազատամիտ ոգով,—այսպէս, առաջադրւել էին՝ մինչև տարեվերջ ազատախոհական ընտրութեան, պալատներին օրէնսդրական նախաձեռնութեան իրաւունքի վերադարձման, անհատի 2/3 ժողովրդից ընտրելու, ընդհանուր ձայնատւութեան իրաւունքի պահանջները. ապահովւել էր բոլոր քաղաքացիների լիակատար հաւասարութիւնն օրէնքի առաջ առանց ցեղի և հաւատի խտրութեան,

ընդունել էր միութիւնների ազատութիւնն և դաշնադրութեան ազատութիւնը, ընդհանուր զինուորական ծառայութիւնը տարածուել էր բոլոր մուսուլմանների վրայ։ Ծրագիրը կրում էր իւր մէջ նոյնպէս և սոցիալական կարգի դրութիւններ, ցոյց տալով գիւղացիական հողատիրութեան ուժեղացման և գործատէրերի ու բանուորների յարաբերութիւնների կարգաւորման անհրաժեշտութիւնը։ Մի խօսքով՝ երիտասարդ-թիւրքերն ազդարարեցին, որ նոքա ձգտում են տանկական բռնակալական մուսուլմանական աստուածպետութիւնը փոխարինել օսմանեան ազատաւիտ իրաւական կայսրութեամբ, որը պիտի կառավարուէր պարլամենտական հիմունքներով։

Կասկած չկայ, որ երիտասարդ-թրքական յարմման պարագլուխները սկզբնական շրջանում անկեղծօրէն նւիրւած էին իրենց ծրագրին և հաւատում էին նրա իրականացման կարելիութեան։ Հաւատաց նոյա ու նոցա ծրագրներին և ամբողջ Եւրոպան, հրաժարւելով մահմեդական բարենորոգութիւնների վրայ իւր ունեցած հսկողութիւնից, յոյս կանչելով՝ քաղաքացիական պաշտօնեաներին, ժանդարմական սպաներին և ֆինանսական յանձնաժողովին։ Բայց երիտասարդ-թիւրքերին վիճակւած էր իրենց ճանապարհին հանդիպելու ահագին դժւարութիւնների, որոնց յաղթահարելը վեր էր այդ մի քանի մարդկանց յյժերից ու որոնց շնորհիւ նոքա պիտի շեղւէին իրենց կանոնաւոր ընթացքից։

Բուլղարիայի անկախութեան յայտարարութիւնն ու Բոսնիայի և Հերցեգովինայի միացումն Աւստրիային ամենից առաջ խաւսեցրին երիտասարդ թիւրքիայի արշալոյսն ու ստեղծեցին նրա համար մի շարք արտաքին խոչընդոտներ։ Բայց երկրի ներսումն էլ, և, գլխաւորաբար, մայրաքաղաքում՝ սահմանադրութեան տարաբարման ուղեկցող ցնծութիւններից արդէն մի քանի ամիս անց, սկսւել էր ուժեղ իրարանցում։

Երիտասարդ-թիւրքերի սկզբնական գործողութիւնները չէին կարող, ի հարկէ, չհարւածել շատ շահեր, որոնք կապ ունէին նախկին կարգերի հետ։ Արձակւած պաշտօնեաները, տապալւած պալատականները, լրտեսների արտաքսւած ահագին բանակը— դոքա բոլորը միացած էին ընդհանուր ատելութեամբ դէպ երիտասարդ-թիւրքերը։ Դժգոհների գլուխ էին անցել Մուրադի պէս մարդիկ, որոնք, չնորհիւ իրենց մութ անցեալի, չէին ընդունել «Միութեան և Յառաջադիմութեան» կազմակերպութեան շարքերը։ Արշաւանքն երիտասարդ-թիւրքերի դէմ սկսւեց Մուրադի Միզան թերթից, որը գալիս էր երիտասարդ-թիւրքերին մեղադրելու շերիաթին (մուսուլմանական սրբազան իրաւունքին) դաւաճանելու մէջ. շուտով դրանից յետոյ տեղի է ունենում սոֆտաների ցոյցը Սուլթանի

ապարանքի առաջ. պրովոկատորներն առաջ են բերում ամբոխի կողմից յոյնի ու նրա կողակից-թրքուհու ապտնութիւնը. խմաւիները մի քանի քաղաքամասերում ներս են խուժում սրճատներն ու թատրոնները և պահանջում վերջ տալ իրը թէ շերիաթին հակառակ ներկայացումներին. մի խօսքով՝ հին կարգերի արբանեակներն ամեն կերպ զրգռում էին խուժանի մոլեռանդութիւնը։ Երիտասարդ-թիւրքերն ձեռնամուխ են լինում վճռական միջոցների, ձերբակալում են աղմկարարներին, լրագրներում ապացուցում են իրենց հաւատարմութիւնն իսլամին, բայց, այնու ամենայնիւ, սև ու մութ ոյժերն հասնում են իրենց նպատակին։ Մուսուլմանական ամբոխին ներշնչել էին այն միտքը, որ նոր կարգերը դէմ են իսլամի ոգուն։

Մի ուրիշ, գաղափարական, հակառակորդն երիտասարդ-թիւրքերի հանդիպանում է Ֆրանսիայից վերադարձած աքսորական պրինց Սաբահ-էդ-Դինը, Աբդիւլ-Համիդի ազգականը՝ մօր կողմից։ Պրինցն իրեն յայտարարում է ամենից առաջ սոցիալական բարենորոգիչ, նպատակ դնելով արթնացնել դարաւոր քնից տաճիկ ժողովրդին ու զարգացնել նրա մէջ անհատական ձեռներէցութիւնը. բացի դրանից, Սաբահ-էդ-Դինը ներկայանում է որպէս ջերմ ջատագով քաղաքական ապակենտրոնացման (ադեմի-մերքեզիեթ)։ Ուրիշ խօսքով՝ պրինցը սուր կերպով դնում է երիտասարդ Թիւրքիայի համար տեղական ինքնավարութեան ամենից փափուկ և վտանգաւոր հարցը՝ լուծեան տւած երիտասարդ-թրքական ծրագրի մէջ, որը միայն խոստացել էր 1876 թ. սահմանադրութեամբ արդէն կանխատեսած շրջանային իշխանութիւնների (վիլայեթի—մեղունիեթ) «իրաւազօրութիւնների լայնացում» ասել է՝ վարչական ապակենտրոնացում։ Այդ պատճառով էլ պրինցի հիմնած «Անհատական ձեռներէցութեան ու ապակենտրոնացման» լիգան առաջ է բերում ուժեղ դժգոհութիւն երիտասարդ-թիւրքերի մէջ, որոնք մեղադրում են այլազգիների մէջ բաւականին համակր ունեցող պրինցին վերջիններիս դէպ շրջանային ինքնօրէնութիւնը տւած ձգտումների հովանաւորութեան մէջ,—ձգտումներ՝ որոնք հաշտ չէին երիտասարդ-թրքական օսմանականութեան գաղափարի հետ։ Սաբահ-էդ-Դինի ասպարէզ գալը ստիպում է երիտասարդ-թիւրքերին այդ հարցում անյապաղ դիմել աւելի որոշ քաղաքականութեան։ Պրինցի, անկասկած գաղափարական, բայց անհող տեսաբանի ու թուլակամ մարդու վրայ ճնշումն է գործադրւում, ու նա յայտնում է իւր հրապարակական դասախօսութեան մէջ, որ միանում է «Միութեան և Յառաջադիմութեան» ծրագրին, որովհետև իրը «ապակենտրոնացումն» ընդգրկւում է «իրաւազօրութիւնների լայնացման»

դաղափարով։ Հաշտութիւնը, հարկաւ, արտաքուստ էր, սակայն, Սաբահ–էդ–Դինը կորցնում է իւր ժողովրդականութեան մեծ մասը։ Այսպիսով երիտասարդ–թիւրքերը յաղթանակ են տանում, բայց միայն իրենց ապագայ քաղաքականութեան համար ճակատագրական հարցի վարագոյրի բացման դնով։

Շուտով Սաբահ–էդ–Դինի լիգայի քայքայումից յետոյ, 1908 թ. նոյեմբերին, Կոմիտետը, ինչպէս սկսել էին ամենուրեք անուանել «Միութեան և Յառաջադիմութեան» կազմակերպութիւնը, վաստակում է մի նոր թշնամի—ի դէմս ահռաւեների (ազատականների) միութեան։ Այդ կուսակցութեան մէջ մտնում են շատ քիչ թիւրք, էլի, գլխաւորապէս, «Միութեան և Յառաջադիմութեան» վիրաւորուածների շարքերից, բայց անհամեմատ շատ աւելի այլազգիներ, առաւելապէս՝ յոյներ և հայեր։ Կուսակցութիւնը մըտնում է գաղտնի յարաբերութիւնների մէջ Սաբահ–էդ–Դինի հետ, բայց, իրաւուած փորձից, առաջադրում է այնպիսի ծրագիր, որը ոչնչով չի տարբերուում «Միութեան և Յառաջադիմութեան» ծրագրից։ Սակայն ահռարները պնդում են, որ միայն նոքա են տոգորուած իսկական ազատամիտ ոգով, իսկական համբերատարութեամբ դէպ ոչ–մուսուլմանները, իսկ երիտասարդ–թիւրքերն, ըստ նոցա համոզման, թեքւել են դէպ նեղ ազգայնամոլութեան կողմն ու դիմում են ամենաանհանդուրժելի արմատականութեան բոլոր միջոցներին։

Այս միտդրանքների մէջ հշմարտութեան մի խոշոր մաս կար։ Երիտասարդ–թիւրքերն, ըստ երևոյթին, հաշւի չէին առել իրենց սկզբնական նպատակների ժամանակ այն վտանգը, որը թագնուած էր օսմանականութեան մէջ՝ օսմանեան պետութեան համար, ուր նոքա փոքրամասնութիւն էին կազմում։ Այլազգիների բռնած զրգռեցուցիչ ընթացքը, յատկապէս յոյների, պարլամենտական ընտրութիւնների ժամանակ, շատ շուտով առաջ բերեց նոցա մտքերի մէջ համապատասխան ռեակցիա։ Մէկը երիտասարդ–թրքական ականաւոր գործիչներից, Հիւսէյն–Ջահիդ–Բէյը, հոկտեմբերի 25-ին հանդէս եկաւ իւր Թանին լրագրում մի ազդարարութեամբ,—թէ տիրապետող ազգը երկրում (մըլլեթի խաւիմե) է և պիտի մնայ սանճակաները։ Ու թէև շատ երիտասարդ–թրքական գործիչներ Հիւսէյն–Ջահիդի յօդուածն երևան գալու րոպէին քննադատեցին նրան նրա աւելորդ սրութեան համար, սակայն յետագայի դէպքերն եկան ապելու, որ հեղինակը մեծ հոգատարութեամբ կանխազգացել ու արտայայտել է երիտասարդ–թիւրքերի դէպ Պետութեան ուրիշ ազգութիւնները ատած տրամադրութեան մէջ առաջացած փոփոխութիւնը։

Ճիշտ է, այդ նոր տրամադրութիւնը որոշակի ոյժով չանդրա-

դարձաւ այլազգիներին պարլամենտում տեղեր յատկացնելու վերաբերեալ հայերի և յոյների յարձակումները երիտասարդ–թիւրքերի վրայ ընտրութիւնների ժամանակ վերջիններիս կողմից կատարած կեղծիքների առթիւ թէև չափազանցած, որովհետև մեր լուսաբերի պալատի 275 ընտրուած անդամներից,—60 տաճիկներ էին, 25 ալբանացիներ, 23 յոյներ, 12 հայեր, 3 սերբեր, 4 բուլղարներ, 1 կուցովլաքս և 5 հրեաներ. այսպիսով գրեթէ կէսը պալատի բաղկացած էր այլազգիներից։ Մայրաքաղաքում, որտեղ թիւրքերն ունէին բացարձակ մեծամասնութիւն, «Միութեան և Յառաջադիմութեան» կուսակցութեան անդամներն անց են կացնում 5 թիւրքի, 2 յոյնի, 2 հայի և 1 հրէայի։ Բայց կուսակցութիւնը ձեռք է առնում բոլոր միջոցները, որպէսզի թիւրք–մեծամասները գրեթէ ամենից էլ իւր կազմից լինեն.—պալատում ազատամիտներից և անկախ թիւրքերից լինում են հաղիւ տասը մարդ։ Այստեղ հարկաւոր է յիշատակել, որ «Միութեան և Յառաջադիմութեան» անդամները յատուկ եռգռմով պարտաւորւել էին ամեն բանում ենթարկուել կենտրոնական կոմիտէին. կուսակցութիւնից դուրս գալը, ինչպէս ինձ իւր ժամանակին, ոչ առանց հեղնանքի, բացատրել էր նրա յայտնի անդամներից բժիշկ Բեհադդին–բէյը, կապուած էր «որոշ բիսկիթ» հետ։ Այսպիսով, կուսակցութեան կոմիտէն յոյս ունէր պահել իւր անժխտելի իշխանութիւնը պարլամենտական փրակցիայի վրայ ու նրա օգնութեամբ դրաւել և օրէնսդիր իշխանութիւնը, ինչպէս նա տէր էր դարձել արդէն և գործադիր իշխանութեան։

Տաճկական պարլամենտը բացւեց 1908 թւի դեկտեմբերի 4/17–ին։ Նստաշրջանի սկիզբը չարդարացրաւ, սակայն, «Միութեան և Յառաջադիմութեան» կուսակցութեան սպասելիքները։ Չնայած նրա բոլոր ճիգերին, նրան չյաջողուեց դէպ իւր շարքերը թեքել՝ ոչ արաբներին, ոչ հայերին և ոչ ուրիշ այլազգիներին. բոլոր չհամոզուած իրար հետ, նոքա այնու ամենայնիւ ձայն էին տալիս հակառակ երիտասարդ–թիւրքերին։ Ու միանգամայն անսպասելի կերպով կուսակցութեան շատ անդամներ, չնայած իրենց ուած երդման, սկսում են պահանջել ազատ ձայնատուութեան իրաւունք։ Այդ պատճառով էլ, այն ալշաւանքը, որը վաղուց արդէն սկսուած էր կուսակցութեան կողմից մեծ եպարքոս Քեամիլ–փաշայի դէմ, որին ոչ առանց հիմունքների կասկածում էին երիտասարդ–թրքական կարգերի դէմ յարուցած խարդախութիւնների մէջ, կրում է կատարեալ ֆիասկո.—Դեկտեմբերի 31–ին պալատը յայտնում է Քեամիլ–փաշային իւր վստահութիւնը։

Կոմիտէի թշնամիների յաղթանակը, սակայն, շատ կարճատև է լինում։ Մեծ եպարքոսը մեծացնում է այլազգիների ձայների

օգնութեամբ տարած իւր յաղթանակի նշանակութիւնն, և որոշում, —որ արդէն հասել է իրեն տեսնելի կուսակցութեան խորտակման ժամը, որը մի անհասկանալի թիւրիմացութեամբ իրեն է վստահացել կառավարութեան դեկը: Նա նախ փորձում է հեռացնել Ստամբուլից Կոմիտէին նեխրւած սալոնիկեան գնդերը, իսկ երբ այդ չի յաջողւում, ինքնակամ հեռացնում է մինիստրութիւնից «Միութեան և Յառաջադիմութեան» ամենից փայլուն կողմնակիցներին—զինւորական և ծովային նախարարներին:

Քեամիլի նման վարչագողութիւնը ստիպում է կուսակցութեան ի մի բերել իւր բոլոր ոյժերն՝ նրան տապալելու համար: Պայքարն ունենում է լիակատար յաջողութիւն: Նախարարները՝ ներքին գործոց Հիլմի—փաշան և արդարադատութեան Ինեֆիկ—բէյը, դուրս են գալիս կաբինետից, իսկ պաշտօնանկ նախարարները՝ բողոքով դիմում են պալատին—ընդդէմ իրենց հակասահմանադրական արձակման: Նաւատորմիղը յայտնում է պարլամենտին, որ հրաժարւում է ենթարկւել նոր ծովային նախարարին. 1909 թւի յունւարի 31-ին Քեամիլ-փաշային հարցապնդուում է ուղղւում նրա գործադրած միջոցների առթիւ: Մի շարք երիտասարդ-թըրքական հռետորներ, դոցա թւում և պատւելի ուլեմ Մուստաֆա Ասիմը, կրակոտ ճառերով ազդարարում են պարլամենտին կառավարութեանը ստորադասւելու սկզբունքը: Իսկ մեզուս մայոր Թաբիք—բէյը յայտարարում է, որ տաճիկ զօրքի սիւնները կխանգարեն Քեամիլի դիտաւորութիւնների իրագործմանը: Օթեակներում և նրբանցքներում երիտասարդ-թըրքական սպանների մեծ թւի ներկայութիւնը Յաբիրի յայտարարութեանը տալիս է համապատասխան նշանակութիւն, ու յունւարի 31-ի նիստը վերջանում է «Միութեան և Յառաջադիմութեան» լիակատար յաղթանակով: Քեամիլ-փաշային 198 ձայնով ընդդէմ 8-ի յայտնւում է անվստահութիւն, ու նա իւր հրաժարականն է տալիս.—մեծ եպարքոսութիւնն անցնում է Մահմուդ Շեվկեթ-փաշային:

Բայց իշխանութեան համար մղած կռիւը ոչ միայն չի վերջանում, այլ և աւելի կատաղի ձևեր է ընդունում: Մի կողմից՝ ահռարցները (ազատականները) ու նրանց թիկունքում կանգնած այլազգիները ամէն օր բազմաթիւ թերթուկների մէջ յարձակւում էին «Միութեան և Յառաջադիմութեան» կազմակերպութեան վրայ, մեղադրելով նրան՝ եաղուբականութեան, պրեսորիականութեան և կառավարութիւնն իր ղեկատարութեանն ենթարկելու մէջ. միւս կողմից՝ մուսուլման տարրին հոգևորականութիւնը նոր կարգերին թշնամի «Մուհամեդական միութիւն» կազմակերպութիւնն է ստեղծում. իսկ սոֆտաները աստւածաբանութեան

այդ յաւիտենական ուսանողները, ժողովրդի մէջ երիտասարդ-Թիւրքերի Թիւրքիան ու իսլամը դէպ կործանումը տանող հաւատաղծութեան լուրերն են տարածում: Ու թեև որ, որոնք տարածւում էին այդ հակոտնեաներից—սոֆտաներից ու ահռարներից, կենտրոնանում էին նոյն մարդու՝ Սուլթան Աբդիւլ-Համիդի ձեռքերում:

Այժմ կարելի է հաստատուած համարել, որ Կոմիտէի դէմ դիւթած ամբողջ դաւադրութիւնը մտածւած է եղել ապարանքում, Իլդըզում, և ի կատար ածւած նրա ղեկավարութեամբ: Ի հարկէ, ինչպէս այլազգիներն ու ահռարները՝ որոնք ձգտում էին ապակենտրոնացման, նոյնպէս և մոլեռանդ սոֆտաները՝ որոնք ցանկանում էին դարձը սահմանադրութիւնից դէպ շերիաթ, նպատակ ունէին տապալելու իրենց ընդհանուր թշնամուն—«Միութեան և Յառաջադիմութեան» կազմակերպութիւնը: Բայց միայն Համիդեան ոսկին նոցա իրենց ծրագրների իրագործման հնարաւորութիւնն ընձեռեց: Այդ ոսկին թոյլ տւաւ սոֆտաներին ձեռնամուխ լինել դաւադրութեան ամենատանգաւոր մասի ի կատար ածման, այսինքն՝ պոլսական բերդապահ զօրքի զինւորներին դէպ Իլդըզի կողմը թեքելուն. ու այդ նոցա յաջողւեց, որովհետև ներշնչել էին զինւորներին,—որ նոցա սպաները ֆրանմասոններ են, որոնք կերակրի հետ զոր են ածում խողի միս, ու ամրապնդել էին այս պատճառաբանութիւնները սուլթանական հնչուն դրամով: 1909 թւի մարտի 31-ին մի դէպք պատահեց, որը երիտասարդ-Թիւրքերն անւանում են խադիսէի մուէլիմէ, այսինքն՝ տխուր ացէ, իսկ նոցա հակառակորդները՝ իճիթլաբի շերի—յեղաշրջում յանուն սրբազան իրաւունքի: Վաղ առաւօտեան զինւորներն ըմբոստանում են իրենց սպանների դէմ, կոտորում նոցա մի մասն ու բռնում սր. Սոֆիայի հրապարակը, պահանջելով՝ որ կաբինետը հրաժարական տայ, երիտասարդ-թըրքական պարագլուխներն քշւեն հայրենիքից ու շերիաթը վերականգնւի: Որ այդ թշւառական զինւորներն իրենց պահանջների ու գործողութիւնների մէջ ամենափոքրիկ հաշիւն անգամ չէին տալիս իրենց, ակնհայտ է դառնում հենց այն ծիծաղաշարժ փաստից (որն ինձ վիճակւել է անձամբ դիտել), որ միաժամանակ շերիաթի վերականգնման պահանջների հետ միասին այդ իսլամի մոլեռանդները բացականչում էին քրիստոնեայ մեբուսների իրենց առաջուց թեկտրած անունները որպէս նախապարական թեկնածուների...

Երիտասարդ-թըրքական պարագլուխները, յանկարծակիի եկած, փախուստի են դիմում. պարլամենտը չի ցուցահանում քաղաքացիական քաջութիւն ու քաղաքի խռովարար զինւորների համաշխարհի տակ դիմումն է ուղղում երկրին, ուր յայտարարում

է, որ ընդունում է այդ պետությունների—«հայրենիքի պատանիների պահանջները. իսկ Սուլթանը ցուցաբարձներին ներումել չնորհում ու յանձնարարում վառամեալ Թիվիլիկ-փաշային հրաւիրել նոր կազմ, որին և հրահանգում է սրբութեամբ հետևել շերիաթին:— Աբդիւլ-Համիդը փայլուն կերպով իւր վրէժն է լուծում երիտասարդ-թիւրքերից, տապալելով նոցա մի հարուածով,—որը նոյնքան անսպասելի և տպաւորիչ էր, որքան և իրեն պատուիրող 1908 թուի յուլիսի 11-ի հարուածը:

Ինն ամսւայ խրեց ոչ հրապարակական տիրապետութեան ընթացքում երիտասարդ-թիւրքերը չկարողացան հասնել դրական հետևանքների, որոնք կարողանային ներողաբար դէպ իրենց տածած վսասհութիւնն արդարացնել: Շիշա է, մերուներն պալատի լուսաւորիալ փոքրամասնութիւնը տենդային կերպով աշխատում էր նոր կարգերի ստեղծման վրայ. պալատն իւր հաւանութիւնն էր տուել պետութեան ու հասարակութեան կեանքի ամենակարևոր կողմերին վերաբերող մի շարք հարցերին,—ու սակայն Հայաստանում, Բիւրդատանում, Ալբանիայում, Սիրիայում, Եմենում ու Հիջասում մուսուլմանների ու քրիստոնեաների թշնամութիւնն, անգամ միայն մուսուլմաններին իրար մէջ շատ յաճախ փոխադրինւում էր բացարձակ երկպառակութեամբ. անգամ Մակեդոնիայում նորից աւազակախմբերն են երևան գալիս:

Զպիտի, հարկաւ, մոռանալ՝ որ Երիտասարդ-Թիւրքերի համար այս շրջանն ռազմական էր ամենալիակատար իմաստով և որ նոքա ամբողջովին կլանւած էին իշխանութիւն ձեռք ձգելու համար իրենց հակառակորդների դէմ մղած կուռվ, որոնց լոյալութիւնը սակայում էր շատ բան ցանկանալ: Անկասկած է, որ երիտասարդ-Թիւրքերն ապատութեան առաջին օրերին մասածում էին փրկել Թիւրքիան՝ նրան Եւրոպայից անկախ օսմանեան կայսրութեան վերածել, ուր բոլոր քաղաքացիները պիտի լինէին հաւասար օրէնքի առաջ. բայց հասկանալի է, որ այդ ծրագրի յաջողութիւնը չէր կարող հրապուրիչ լինել՝ ոչ յոյներին, ոչ սլաւոններին, ոչ հայերի և ոչ էլ արաբների համար, որոնք վաղուց ի վեր չէ թէ Թիւրքիայի վերածնունդն էին երազում, այլ միացումն իրենց ցեղակից պետութիւնների հետ, անգամ՝ իրենց անկախութիւնը.—այդ պատճառով էլ նոքա ձգտում էին ապակենտրոնացման, որի մէջ երիտասարդ-Թիւրքերն չպիտի յապաղէին տեսնելու սկիզբն իրենց վախճանի: Այսպիսով, շատ շուտով երիտասարդ-Թիւրքերի ու այլազգիների յարաբերութիւններն ընդունեցին անվստահութեան բնոյթ, իսկ յետոյ և թշնամութեան:

Սրկզբում՝ երիտասարդ-Թիւրքերին վիճակւած էր վճռել մի ուրիշ մեծ խնդիր,—տնտեսական իրաւական ու սոցիալական կեանքի

ազատագրելն իսլամի կապանքներից: Շատ բնորոշ է, որ բաւականին հայրենասէր բարձր հոգևորականութիւնը—ուլեմները, այդ հարցում նոցա կողմն էր ու մեծ պատրաստակամութեամբ համաձայնեցնում էր նոր կարգերը Դուրանի դերազանց առաձգական սուրանների (տաղաչափութիւնների) հետ: Յեղաշրջման մօտալուտին Շեյխ-ուլ-Իսլամը յայտարարում է, որ շերիաթն ոչ մի վտանգի չի ենթարկւում.—և, վերջապէս, նրան չէր կարող վտանգ սպասնալ մի պարլամենտ, ուր բաղմած էին մինչև 80-ի չափ ուլեմներ:—Բայց երիտասարդ-Թիւրքերի բոլոր վհեռուտքայլերը դէպ քիչ թուլացնել մուսուլմանական յուսահատց ոգու՝ կեանքի վրայ ունեցած հղծիչ ազդեցութիւնը, առաջ էր բերում խոչոր և եթ բազմաթիւ ստորին հոգևորականութեան շարքերում ու յատկապէս սոֆտաների՝ նկատելի յուզում, որովհետև նոր կարգերն ուժեղ կերպով դիպչում էին այս շահերին. այսպէս, օրէնսդիրը, որի համաձայն սոֆտաներն ենթարկւում են դինւորական ծառայութեան, եթէ որոշ տարիների ընթացքում աստւածաբանական քննութիւնները չտան, առաջ բերաւ նոցա մէջ անպրին խռովութիւն, որը և ուժեղ չափով անդրադարձաւ յեղաշրջման մէջ ունեցած նոցա մասնակցութեան վրայ.—այդ նոյն սոֆտաներն ու նրանց մոլեռանդացրած խուժանն արդիլք հանդիսացան տանիկ կնոջ ազատագրման, որին ձեռնամուխ էին եղել արդէն երիտասարդ-Թիւրքերը: Ես ինքս եմ տեսել, թէ ինչպէս սոֆտաներն ու խուժանը յարձակւում են փողոցներում այն երիտասարդ-Թիւրքերի վրայ, որոնք յանդգնութիւն էին ունեցել իրենց կանանց, աղջիկների և քոյրերի հետ միասին երևալու, ու ծեծում նոցա:

Վերջապէս, երբարդ, չպիտի աչքաթող անել տանիկ հասարակութեան արտասովոր յեռանմեացութիւնն ու տգիտութիւնը: Երիտասարդ-Թիւրքերի պարագլուխներն ու սպաները այդ ժամանակ անկեղծօրէն բարենորոգութիւններ էին ցանկանում. բայց յեղափոխութիւնից յետոյ նոցա յարձակների մեծամասնութիւնը միայն անհատական բարիք էր փնտռում ու պատրաստ էր առաջին իսկ անաջողութեան ժամին լքել նոցա.—յեղաշրջումից յետոյ պարլամենտի բռնած խայտառակ դիրքը դրան փառաւոր ապացոյց է ծառայում:

Այսպիսով, արդէն իսկ մարտական շրջանում երիտասարդ-Թիւրքերն իրենց ազգերգական դրութեան մէջ գտան: Սուլթան Աբդիւլ-Համիդն օգտւեց նոցանից մի հրաշալի ճարպկութեամբ: Բայց հենց որ երիտասարդ-Թիւրքերը Նոր Մակեդոնիայից—Սաոնիկից—փախան ու ոտք դրին իրենց հարազատ Մեզենայի—Սալոնիկի—հողի վրայ, նոքա նորէն աչքը դարձան իրենց նախկին ոյժի: Աբդիւլ-Համիդը հաշւի չէր առել երիտասարդ պատառային

1377
1993
2003

ապանների հայրենասիրությունն ու դեպ իրեն տածած ատելության աստիճանը։ Ու փախստականների կողմն էին ոչ միայն մակեդոնական ու էդիրնէի զօրքերը։ Շատ բուլղարական, սերբիական, յունական չետնիկները, վտահանալով երիտասարդ–թիւրքերի նոր խոստումներին, նորէն որոշեցին կապել իրենց բախտը նոցա հետ ու գնացին միատեղ արիւն թափելու յանուն հուրրիաթի— յանուն ազատութեան։ Աբդիւլ–Համիդի յաղթանակն միայն 13 օր շարունակեց։ Ասիական զաւառամասերն եղած անցուդարձերը չհասկացան ու չեկան նրան օգնութեան։ Միակ յաջողութիւնը, որն ունեցան համիդական գործակալներն՝ այդ Ադանայի վիլայէթում հայերի դէմ կազմակերպած մուսուլմանական ցոյցն էր։ 1909 թւի ապրիլի 13 ին, փողոցներում տեղի ունեցած յամառ կուիւց յետոյ, Մահմուդ–Շեֆկետ–փաշայի զօրքերը վերցնում են Պոլիսն ու կարմիր Սուլթանի թագաւորութիւնը խեղդւում է, վերջապէս, նրա գայթակղեցրած տաճիկ զինուորների ու Ադանայում խողխողած 30,000 հայերի արեան հեղեղատում։ Ապրիլի 14/27 վախից զգաստացած ու դեպ Սան–Ստեֆանօ չեած պարլամենտը, համաձայն Շէյխ–ուլ–իսլամի ֆետվայի, դահընկէց է անում Աբդիւլ–Համիդին ու սուլթան յայտարարում նրա եղբօրը Մահմետ–Րեշադին։

ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ

(1909 թ. ապրիլի 13—1912 թ. յուլիսի 9)

Իրենց տիրապետութեան երկրորդ շրջանում, սկսած Մահմետ–Րեշադի թագաւորութիւնից ու վերջացած Սաիդ–փաշայի կաբինետի տապալումով, երիտասարդ–թիւրքերը դուրս եկան իշխանութեան գաղտնի հակիչների դերից ու իրենց ձեռքն առան երկրի կառավարութեան դեկը։ Ճիշտ է, այդ շրջանի երեք նախարարութիւնների գլուխ էին անցել Աբդիւլ–Համիդի հին պաշտօնեաները՝ Հիլմի–Խակկի ու Սաիդ–փաշաները։ Բայց այդ բացատրում էր լոկ անյարմարութեամբ հակառակ տաճկական սովորութիւնների նշանակել դեռ տակաւին չահել եպարքոսներ, և նոյնպէս նոցա ցանկութեամբ—օգտել այդ պետական գործիչների փորձառութիւնից, իսկ ղեկավար դեր այդ նախարարութիւններում խաղում էին նոցա կազմի մէջ մտնող «Միութեան և յառաջադիմութեան» կուսակցութեան կարևորագոյն անդամները—Թալաաթ, Ջավիդ, Խաջի, Ադիլ, Խալիլ, Իզմայիլ Խակկի–Բաբան–զադե։ Եւ հենց որ մէկը մեծ եպարքոսներից—Հիլմի–փաշան—դադարեց

հաճոյ լինել կուսակցութեան, նա հեռացւեց եպարքոսութիւնից, և այն էլ այն յաղթանակից յետոյ, որը տարել էր նա պարլամենտում Լիճչի գործի առթիւ։

Նոր սուլթանի կայսրութեան առաջին ամիսներին կառավարութեան կողքին գոյութիւն ունէր և մի ուրիշ—ընդհանուր հրամանատար Մահմուդ–Շեֆկետ–փաշայի, նոր կարգերի փրկարարի իշխանութիւնը։ Մի ժամանակ մինչև անգամ թւում էր, թէ երկիրը դէպ զինուորական դիկտատուրան է գնում։ Բայց Մահմուդ–Շեֆկետ–փաշան չկարողացաւ կամ չցանկացաւ օգտագործել իւր հեղինակութիւնն, և 1910 թւի սկզբին ինքն էլ մտաւ Խակկի–փաշայի նախարարական կազմի մէջ, որպէս զինուորական նախարար, ու դրանով էլ վերջ դրեց իւր բացառիկ դիրքին։ Այդ պատճառով, յիշատակած շրջանում երիտասարդ–թիւրքերն, անկասկած, իսխանութեան մօտ էին կանգնած, և պատմութիւնն էլ իրաւունք ունի նոցանից հաշիւ պահանջելու,—թէ արդեօք յանուն երկրի բարօրութեան իրենց իշխանութեամբ նոքա ինչպէ՞ս օգտւեցին։

Պետական շինարարութեան սահմաններում երիտասարդ–թիւրքերը նախ և առաջ պարտաւոր էին, ի հարկէ, իրենց յարաբերութիւնները դէպ սուլթանն ու պարլամենտը որոշել։ Դեռ մինչև մարտի 31-ի յեղաշրջումը հին սահմանադրութեան նորեն ոչխի անցնելը յանձնւած էր մի յատուկ յանձնաժողովի, վերաքննւած պալատներից ու 1909 թւի օգոստոսի 8—ին հաստատւած սուլթանի կողմից։

Երկու սահմանադրութիւնների մէջ եղած էական տարբերութիւնները հետևեալներն են՝

Ըստ հին սահմանադրութեան սուլթանը նշանակում և արձակում էր բոլոր նախարարներին. նորի համաձայն նա իրեն վերապահած ունէր միայն արձակման իրաւունքը «կարիքը եղած դէպքում» և «համաձայն կանոնների». իսկ նշանակում էր նա այժմ անուղղակի՝ միայն մեծ եպարքոսին և Շէյխ–ուլ–իսլամին. մնացած մինիստրներն արդէն ընտրւում են մեծ եպարքոսի կողմից ու սուլթանից միայն հաստատւում (յօդ. 7 և յօդ. 27)։ Սահմանադրութեան մի ուրիշ փոփոխութեամբ, այսուհետև երկու պալատներն էլ հաւաքւում են սովորական նստաշրջաններին առաջ նրաւէրի յօդ. 43), իսկ պարլամենտի արտակարգ նստաշրջանի հրաւիրման ու նրա երկարացման իրաւունքը սրանից յետոյ վերապահւած է ոչ միայն սուլթանին, այլ և պալատի անդամների բացարձակ մեծամասնութեան. իսկ նստաշրջանի ժամանակի երկճառման իրաւունքը բոլորովին է վերացւած (յօդ. 44)։ Սուլթանը կորցրել էր նոյնպէս և պալատի նախագահի ընտրութեան իրաւունքը, վերջինիս կողմից մատնանշած երեք թեկնածուներից,

—ըստ նոր սահմանադրութեան նախագահի ու նրա օգնականի ընտրութեան մասին սուլթանին միայն զեկուցւում է (յօդ. 77)։ Ըստ նոր սահմանադրութեան օրենսդրական նախաձեռնութեան իրաւունքը պատկանում է իւրաքանչիւր նախարարի, ծերակուտականի և մեբուսի, այն ժամանակ, երբ նրա կենտրոնացած էր միայն կառավարութեան ձեռքում, որին պալատը ներկայացնում էր միայն օրէնքները հրատարակելու կամ փոփոխելու միջնորդագրերը (յօդ. 53)։

Ինչպէս հին, նոյնպէս և նոր սահմանադրութեան համաձայն՝ պալատներից ընդունւած օրէնսգծերն օրէնքի ոյժ են ստանում սուլթանի կողմից հաստատուելուց յետոյ միայն։ Բայց 1909 թւի սահմանադրութիւնը մտցնում է երկամսեայ ժամանակամիջոց, որի ընթացքում օրենսգծերը կամ պիտի հաստատւեն, կամ թէ պիտի վերադարձնւեն պալատ վերստին քննութեան առնելու համար։ Պալատի վերադարձրած օրէնսգիծը համարւում է ընդունւած երկրորդ անգամ միայն այն ժամանակ, եթէ յօդուտ նրան կարտայայտւի անդամների երկու երրորդ մեծամասնութիւնը։ Օրէնքը ոչինչ չի ասում, սակայն, այն մասին՝ թէ ինչ կլինի, եթէ սուլթանն երկրորդ անգամն էլ մերժի իւր հաւանութիւնը տալ (յօդ. 54)։

1876 թւի սահմանադրութիւնը վերապահում էր նախարարական խորհրդին, պաթլամենտի նստաշրջանի փակման ժամանակ, որոշումներ հրատարակելու իրաւունքի, *որոնք սուլթանական օրէնսդրոյթի հիման վրայ ժամանակաւոր օրէնքի ոյժ են ստանում, մինչև մեբուսները պալատի այս առթիւ եղած որոշումների հրատարակութիւնը. նախարարական խորհրդի այդ իրաւունքը ծայրայեղ անհրաժեշտութեան պարագաներով էին նախապայմանւած,—երբ ժամանակ չկայ պալատի նստաշրջանը հրաւիրելու և երբ այդ իրաւունքի կոնկրետ կիրառումը հակասական չէ սահմանադրութեան։* Նոր սահմանադրութիւնն աւելացնում է, որ «Նախարարական խորհրդի որոշումները ներկայացնւում են պալատին, հենց որ նա հաւաքւում է (յօդ. 36)։

Նախարարական պատասխանատուութիւնը *1876 թւի սահմանադրութեամբ* ձևակերպւած է միանգամայն ընդհանուր գծերով, ու այն էլ առանց ոևէ հաւանութեան յիշատակման։ 1909 թւի սահմանադրութիւնը յայտարարում է.—*Նախարարները պալատի առաջ կրում են փոխադարձ պատասխանատուութիւն կառավարութեան վարած ընդհանուր քաղաքականութեան համար. իսկ այն հարցերում, որոնք վերաբերում են միայն նոցա վարչութիւններին, նոցանից իւրաքանչիւրը պատասխանատու է անհատապէս (յօդ. 30)։* Նախարարին անվստահութիւն արտայայտելը

պարտաւորեցնում է միայն հրաժարական տալու, իսկ նախարարական խորհրդի նախագահին անվստահութեան քւէ տալը կրում է իւր հետ և ամբողջ կազմի տապալումը (յօդ. 38)։ Այսպիսով, պալատի արտայայտած անվստահութեան հետևանքները, որոնք Արևմուտքում կազմում են պարլամենտական սովորոյթների օրենքի մի մասը, Թիւրքիայում սահմանադրւած են նեցց իրեն սահմանադրութեան բնագրի մէջ։

Վերջապէս, *ըստ 1876 թւի սահմանադրութեան՝ նախարարութեան հետ եղած ընդհարման դէպքում սուլթանին վերապահած պալատը ցրելու իրաւունքը,—մի իրաւունք, որը նա կարող էր իրագործել անորոշ անգամներ, նոր սահմանադրութեամբ ուժեղ սեղմւած էր։ Այսուհետ սուլթանը կարող էր ցրել պալատը միայն մի ու խստօրէն որոշակի դէպքում,—այն է՝ երբ նախարարութիւնը, մանելով ընդհարման մէջ պալատի հետ, չի ցանկանայ ենթարկւել վերջինիս որոշման ու իւր հրաժարականը կտայ, իսկ նոր նախարարութիւնը հին տեսակէտի վրայ կկանգնի։ Ընդհարման դէպ այդ շրջանում սուլթանը կարող է, ու նա էլ միայն սենատի համաձայնութեամբ, ցրել պալատը՝ նշանակելով նոր ընտրութիւնների եռամսեայ ժամանակամիջոց։ Իսկ նախարարութեան ու նոր պալատի մէջ տեղի ունեցած ընդհարման ժամանակ, այս վերջինի որոշմանն ենթարկւելը դառնում է պարտադիր (յօդ. 35)։* Այս 35-երորդ յօդւածն երիտասարդ—թիւրքերը տանկական պարլամենտարիզմի ջեռնի անկիւնաքարն են համարում։

Հաստատելով արմատական սահմանադրութիւն, որից յետոյ այնքան ուժեղ տուժում էին սուլթան—խալիֆի իրաւունքները, երիտասարդ—թիւրքերը, խրատւած դառը փորձից, դիմեցին բոլոր միջոցներին՝ սրբազան շերիաթի խախտման նոր մեղադրանքները կանխելու մտահոգութեամբ։ Սահմանադրութեան բնագրի մէջ մտնում է մի յօդւած (7), որով շերիաթը պահպանողը սուլթանն է հանդիսանում, և մի ուրիշը (118), որի համաձայն՝ *օրէնքներ հրատարակելիս հիմք պիտի ընդունւեն այդ շերիաթի սկզբունքները։* Բայց ամենամեծ *օգնութիւնը լիբերալիզմը իսլամի հետ հաշտեցնելու գործում երիտասարդ—թիւրքերին ցոյց է տւել նոցա համակիր բարձր հոգևորականութիւնը։ Շեյխ-ուլ-իսլամ Սահիբ—Մոլլան մի կոչով դիմում է ժողովրդին, ուր յայտարարում է՝ որ միայն կառավարութեան սահմանադրական ձևն է հաշտ շերիաթի հետ։*

Դատճակցութիւնն ուղեմների հետ, *որոնք մեծ համառութեամբ գիտեն մեկնել Ղուրանն ու սրբազան գրքերը յօդուտ ժողովրդական դերիշխանութեան, շատ շուտով պէտք եկաւ երիտասարդ—թիւրքերին հենց իրեն պալամենտի մէջ, այն է—սենատում։*

Արդէն 1910 թւի փետրուարին սենատոր Դամադ–Ֆերիդ–փաշան, ըստ երևոյթին, առանց կանխապայմանի թագաժառանգ Իւսուֆ–Իզեդդինի հետ, մի նախագիծ է մտցնում սենատ նոր սահմանադրութեան այն յօդուածների փոփոխութեան առթիւ, որոնք սուլթանի իրաւունքներն էին շօշափում։ Մատնանշելով՝ որ սուլթանը ոչ միայն աշխարհական թագաւոր է, այլ և խալիֆ է երեք հարիւր միլիոն մուսուլմանների, որին յատուկ է հրամայել, բայց երբէք հպատակուել, Դամադ–Ֆերիդ–փաշան գնում է սուլթանի իշխանութեան սահմանափակումը՝ չերիաթին ոչ համաձայն.—բացի այդ, փաշայի կարծիքով, ժողովրդական ներկայութեան ուսմունքն անկերտուելի է մի քանի ազգութիւններից բաղկացած օսմանեան կայսրութեան նկատմամբ, որովհետև նա կարող է տանել դէպի ապակենտրոնացում ու կայսրութեան կազմալուծում։ Դամադ–Ֆերիդ–փաշայի նախագիծն ենթարկուում է նախկին Շեյխ–ուլ–իսլամ Մուսա–Քեազիմի կողմից անողոք քննադատութեան։ Մուսա–Քեազիմը վճռականօրէն յայտարարում է՝ որ ժողովրդական ներկայութիւնը բղխում է թէ Ղուրանից և թէ Մահմետ մարգարէի գործունէութեան ոգուց, որը միշտ ենթարկուել է orkնիին, և որ այդու անկարելի է հանդուրժել՝ որպէսզի մարգարէի յանդորրն իրեն լիակատար հպատակութեան պահանջներն առաջադրի, առանց որևէ պայմանի։ Ի վերջոյ սենատը մինչև անգամ թոյլ չի տալիս Դամադ–Ֆերիդ–փաշայի նախագիծն ըստ էութեան քննելու։

Դնելով այդպիսով, նոր կարգերն իսլամի պաշտպանութեան տակ, երիտասարդ–թիւրեր ամենաճանաչ ետևում են իրենց աջակցութիւնը կայսրութեան սկզբունական դիրքից և շուտով դառնում են Աբդիւլ–Համիդի պանիսլամականութեան ոգու հետևորդներ։ Մօտիկից ճանաչելով երիտասարդ–թրքական գործիչներին, ես ինձ վրայ համարձակութիւն եմ վերցնում պնդելու՝ որ պանիսլամականութիւնը նոցա համար ճիշտ նոյնպիսի էտիկետ էր, որպիսին էր առաջ՝ ֆրանմասոնութիւնը.—մարտի 31–ի յեղաշրջումից յետոյ նոքա իսլամի մէջ այն ոյժը գտան, որը հարկաւոր էր ունենալ իրենց հետ, բայց ոչ իրենց դէմ։ Եւ այդ պատճառով էլ Թալաաթի գործակալները սկսեցին երևան գալ այնտեղ, որտեղ առաջ Համիդի պատիրակներն էին խոովութեան սերմերը ցանում։ Ու յետաձգաց սրբազան չերիաթի որոշումները, որոնք տրուած էին Մահմետ մարգարէի ժամանակների բեդուինների համար, շարունակեցին նախկին ձևով ճնշել տաճիկ ժողովրդի քաղաքացիական կեանքը։

Երիտասարդ–թիւրքերի նման թեքումը դէպ չերիաթ բերեց նոցա եւ դէպ frիստոնեաներն ու բնդհանուրապէս, դէպ այլազգիները Դիտառած հնօրեայ համիդեան բաղաքականութեան։ Մակեդոնական չեանիկները ի զուր թափեցին իրենց արիւնը Սամսրուլի փողոց-

ներում։ Հանդէպ ապակենտրոնացման ու բալկանեան պետութիւնների ոտնձգութիւնների ունեցած վախն երիտասարդ–թիւրքերին ոչ միայն թոյլ չտուաւ բարենորոգութիւնների անցնելու Մակեդոնիայում, այլ և հարկադրեց նոցա անգամ վերջ տալու այն համալսական կեանքին, որը սկսել էր այնտեղ նոր օրերի առաջին ամիսներում։ Այսպէս, աստիճանաբար գոցեցին մակեդոնական տարբեր ազգութիւնների բոլոր կազմակերպութիւնները ու ակումբները։ Հրաժարուելով բարենորոգութիւններից, երիտասարդ–թիւրքերը դարձան համիդեան քաղաքականութեան հին ձևերին՝ դէպ ժողովրդի զինաթափումն ու կուր չեռնրկութեան հետ, ու այս նպատակով էլ նոքա հրատարակեցին՝ «Ռումելիական ճանապարհում ապագութիւնների վերջ տալու» արտակարգ դաժան օրէնքը (1909 թ.)։ Դժբախտ մակեդոնական ժողովուրդը շուտով զգաց իրեն ճիշտ նոյն վիճակի մէջ, ինչ վիճակի մէջ նա եղել էր Աբդիւլ–Համիդի օրօք.—աւազակների հետ կռուելու պատրուակով աքօղած, սկսեցին մուսուլմանների քրիստոնեաների վրայ գործադրած կոտորածները, թալանն ու ամեն տեսակի բռնութիւնները համաճարակի բնոյթ ստանալ, որոնց մասին, ի միջի այլոց, պերճախօս կերպով վկայում են նոյնանման թաքրիրները, 1911 թ. յունիսի 4–ին ներկայացրած արդարադատութեան նախարարին տիեզերական պատրիարքի ու բուլղարական էկզարխատի կողմից։

Ալբանիայում ևս դրութիւնը սրում է չնորհիւ ընդհանուր հարկատուութեան և հանուրի պարտադիր զինուորական ծառայութեան օրէնքների սահմանելուն, որոնց հետ ազատասէր ժողովուրդն ոչ մի կերպ հաշտուել չի ցանկանում։ Երիտասարդ–թիւրքերը չէին կասկածում իրենց դէմ կանգնեցնել մի ժողովուրդ, որը նոցա բնական դաշնակիցն էր սլաւոնների դէմ մղած կռուում։ 1910 թւին Զավիդ–փաշայի պատժողական խումբն աւերում է հիւսիսային Ալբանիայի մեծ մասը, քարուքանդ անելով մեծ թւով ալբանական կուլհներ (դղեակներ)։ 1911 թւին Շեֆկետ–Թուրգութ–փաշան սպրդած էր խաղաղացնելու միջոցներին ու մալիսորներին.—իսկ 1912 թւին, բալկանեան պատերազմի սկզբին, ամբողջ Ալբանիան արդէն կլանած էր ազգային շարժումով ընդդէմ երիտասարդ–թրքական կարգերի։

Ինչ վերաբերում է հայերին,—այստեղ էլ երիտասարդ–թիւրքերը վերջ չդրին այս գժբախտ ժողովրդի ծանր տանջանքներին, այն երիտասարդ–թիւրքերը՝ որոնց հետ հայ դաշնակցականները մի ժամանակ ձեռք–ձեռքի աշխատում էին Աբդիւլ–Համիդին գահընկէց անելու համար։ Ճիշտ է, Ադանայի կոտորածից յետոյ մասսայական ջարդեր չեղան, բայց հայկական նահանգներում ամեն մի հայի կեանքը, պատիւն ու ունեցուածքը առաջւայ

պէս քրդական բէկերի քմահաճոյքից էր կախուած.—1896 թւի կոտորածից յետոյ հայկերից խլուած հողերը յետ չտուեցին իրենց, ու հայ պատրիարքարանի բոլոր դանգատներն անհետևանք մնացին։

Երիտասարդ-Թրքական գլխաւորները չկարողացան դժգոհութիւնները հարթել և կայսրութեան ամենախոշոր թիւ ունեցող մուսուլման տարրի—արաբների հետ։ Սիրիայի ու Միջագետքի արաբական ցեղերը շարունակական ըմբոստացման դրութեան մէջ էին գտնւում։ Եմենում և Ասսիրում երիտասարդ-թիւրքերը շարունակեցին Աբդիւլ-Համիդի անկայուն քաղաքականութիւնը,—կամ կռիւ մղելով Եահայի և Իդրիսի շէյխերի դէմ, կամ թէ ինքնօբէնութեան հարցի շուրջը նոցա հետ բանակցութիւնների մէջ մանելով։ Սրա հետ միասին նոքա տարտղին ձգտում էին և միւս շրջանների արաբների մէջ յօգուտ ինքնավարութեան ծաւալուող շարժման պատասխանել։

Նման վերաբերմունք դէպ այլացեղերի ազգային ձգտումները, ի հարկէ, պարտաւորեցնում էր երիտասարդ-թիւրքերին արդարացնելու իրենց օսմանեականութիւնը, ասել է՝ մտցնել բարեփոխութիւններ, որոնք անխտիր բոլոր օսմանեան հպատակների շահերին ընդառաջ էին։ Ի՞նչ արաւ այդ ուղղութեամբ երիտասարդ-թրքական կառավարութիւնը 1909—1912 տարիների շրջանում։

Նա մշակեց՝ մասնաւի, ժողովների ու միութիւնների ազատութեան վերաբերեալ բաւականաչափ լիբերալ օրէնքներ. դժբախտաբար, այդ օրէնքները սովորաբար չէին գործում, որովհետև մայրաքաղաքում և կայսրութեան շատ քաղաքներում, փոքրիկ ընդմիջումներով միայն, դինուորական դրութիւնն էր տիրապետում։ Որոշ թերմացում մուծուել էր միայն քաղաքացիական ու զինուորական վարչութիւնների մէջ։ Հրատարակեցին «պատժոցիաներից ետաստում թողնելու» խելացի օրէնքները, որոնց հիման վրայ յատուկ յանձնաժողովներ քննութիւն էին կատարում բոլոր նախապարութիւններում և աշխատում էին շատատում պահել ամենից ընդունակ ու բարեկիրթ պաշտօնեաներին։ Զինուորական ատեաճանների վերաքննութեան օրէնքն ոչնչացրեց ազազակող անարդարութիւնների բոլոր հետքերը, որոնք հին կարգերի ժամանակ ամեն օր տեղի էին ունենում բանակում և նաւատորմիղում,—երբ յաճախ իշղղին ան-հաճոյ սպաները տարիներ շարունակ չէին արժանանում յաջորդ աստիճաններին, իսկ բոլորովին երիտասարդները, որոնք աչքի էին ընկել իրենց բանասարկութիւններով, միանգամից գնդապետ կամ գէներալ էին դառնում։ Ես պիտի, սակայն, ասեմ, որ շատ շուտով կապերը սկսեցին ահագին դեր կատարել երիտասարդ-թիւրքերի ընթացիկքաղաքականութեան մէջ։

Իւր գոյութեան սկզբում երիտասարդ-թրքական կառավարութիւնը օտարերկրացի մասնագէտներին օսմանեան ծառայութեան կանչելու գաղափարին համակրութեամբ էր վերաբերւում։ Բայց այդ ցանկութիւնը տարբեր վարչութիւններում իրագործւում էր շատ անհամաչափ ու անվճռականօրէն։ Այսպէս կոչւած տեխնիկական բնոյթ կրող նախարարութիւններում օտարերկրացի մասնագէտներին, իրօք, հնարաւորութիւն էր տրւում օգտակար լինելու։ Այսպէս, եռանդուն Ֆինանսների նախարար Ջավիդ-բէյը, օտարերկրացիներից բաղկացած յանձնաժողովի օգնութեամբ, ֆինանսների վարչութիւնը քիչ-շատ բաւարար դրութեան բերաւ. Sir Grawford արաւ նոյնը մաքսային վարչութեան նկատմամբ։ Որոշ օգուտ բերին և կոմս Րոբիլանտի ղեկավարութեամբ գործող օտարերկրացի ժանդարմիական սպանները։ Հրաւիրուեցին ճարտարապետներ ու տեխնիկներ հասարակական աշխատանքներ կազմակերպելու համար։ Բայց դրանով գրեթէ ամեն ինչ էլ սահմանափակւում էր։ Հրաւիրուած արդարադատութեան նախարարութեան մէջ խորհրդատու կոմս Օստրոգորդ ստիպուած տարի ու կէսից յետոյ հրաժարւում է իւր պաշտօնից, հանդիպելով չարամիտ խոչընդոտների հենց իւր նախարար Մուլլա Նեջմեդդին—բէյի կողմից։ Ժողովրդական Լուսաւորութեան նախարարութիւնը շարունակեց բարձր պահել Աբդիւլ-Համիդի դրօշը.—Եւրոպական ոգով ամենափոքրիկ բարենորոգութիւններն անգամ նրա մէջ չկատարուեցին, իսկ տաճիկ ուսանողներին Եւրոպական համալսարաններն ուղարկելը ողորմելի հետևանքներ ուաւ ու շուտով հոգևորականութեան պահանջի համաձայն էլ դադարեցրուեց։ Երկու տասարիների Եւրոպական ոգու ներս թափանցելը շերիաթն անկարելի համարեց թոյլատրել, դրա—լուսաւորութեան և արդարադատութեան սպարէզները էին։ Երիտասարդ-թիւրքերն այստեղ ևս ծունկ իջեցրին շերիաթի առաջ,—ու դրա մէջ է նրանց անկման երկու պատճառը։

Ընդհանուր բարենորոգութիւններից ես պիտի յիշատակեմ պարտադիր զինուորական ծառայութեան տարածումը և ոչ մուսուլմանների վրայ, որը մինչ այժմ փոխարինւում էր հարկով։ Բարենորոգութիւններն, ի հարկէ, ըստ ամենայնի «Օսմանեական» էին։ Բայց նա դուր չեկաւ ոչ տաճիկներին, ոչ էլ քրիստոնեաներին։ Առաջիններն շատ էին սովորել զօրքի վրայ նայել, որպէս դուսմուսուլմանական ոգու կրողի, և վախենում էին, ոչ անհիմն տեղից, նրա մարտական ուժի թուլացումից. Երկրորդներն առանց խանդավառութեան մտան թիւրքերի զօրքերի տակ, որովհետև վերջիններիս մէջ տեսնում էին իրենց հարստահարիչներին։ Ու այսպիսով ստեղծուեց մի բաւականին կեղծ կացութիւն։

Երիտասարդ-Թրքական բարենորոգութիւնների անմտածուա-

ծութիւնը, կցկտուր լինելն ու անհետևողականութիւնը հասկանալի է դառնում, երբ ի նկատի ունենանք, որ այս ամբողջ շրջանում իշխանութիւն ձեռք ձգելու համար երիտասարդ-թիւրքերը դիմադրում էին իրենց թշնամիների—ներքին ու արտաքին—ամենայախուռն դրոհին։

Արիւնաներկ խտութիւններն այն անձնաւորութիւնների դէմ, որոնք մասնակից էին 1909 թւի մարտի 31-ի յեղաշրջման, «Միութեան և Յառաջադիմութեան» կուսակցութեան անբաժան տիրապետութիւնն երկրի վրայ երկար չտևեցրեց։ Պարիզի վտարանդիները Ներիֆ-փաշայի չորս կողմը խմբուեցին. պարլամենտում ահրարների տեղը բռնեցին «Ժողովրդականը» և «Ազատութեան ու Համաձայնութեան» կուսակցութիւնները,—բացի այս՝ մարտի 31-ի փորձը ցոյց տուաւ, որ կուսակցութեան մէջ ներքին միութիւն չկայ, և որ նրա մի թևն արմատական պարագլուխների հետ ամենևին էլ գաղափարական նկատումներով չէ միացած։

Երիտասարդ-թրքական առաջնորդների նոր քաղաքականութիւնը՝ իսլամի ու նրա աւանդների հաւատարիմ ծառաները ինալ, ի հարկէ, զինաթափ չարաբաստիկ թշնամիներին։ Առանց հիմքի չէր, որ նոքա թերահաւատ վերաբերուում ունէին դէպ այդ քաղաքականութեան անկեղծութիւնը։ Բայց էապէս ասած, այդ հարցը նոցա քիչ էր հետաքրքրում։ Առաջ ամենքին էլ անյայտ մի անշան խմբակի կողմից իշխանութեան գրաւումն, ու անկախ դրանից ոչնչով, բացի իրենց խիղախութիւնից, աչքի չընկած —բաւականաչափ տաճիկ կիսակիրթ մտաւորականների ու սպաների անյագ ախորժակները գրգռեց.—նոքա, որոնց յաջողել էր տաքուկ տիղաւորուել «Միութեան և Յառաջադիմութեան» հովանու տակ, ի հարկէ, վերջինիս կողմն էին,—առաւել ևս՝ որ կուսակցութիւնն այդ տեսակէտից շատ շուտով իւրացրել էր Արդիւլ-Համիդի ձևերն ու նորէն մտցրել կառավարութեան մէջ ամենաանպատակաւ խնամիութեան սիստեմը. բայց որովհետև միանգամայն հասկանալի կերպով հնարաւոր էր երկրային բարիքների ընչաքաղցների միայն մի մասին գոհացուցիչ տալ, այդ պատճառով էլ աստիճանաբար սկսեց նոր կարդերից դժգոհների մեծ բանակն առաջանալ։

Իրենց իդէաները քողարկելու համար «Միութեան և Յառաջադիմութեան» թշնամի կուսակցութիւնները ստիպւած էին, ի հարկէ, առաջադրել որևէ բաղաձական ծրագիր։ Այդ ծրագրները նոյնքան կեղծ էին, որքան և երիտասարդ-թրքականը։ Ինչպէս երիտասարդ-թիւրքերը պաշտօնապէս խոնարհւել էին իսլամի ու թիւրքութեան առաջ, այնպէս էլ նոցա թշնամիները սկզբունքով չարգում էին և ուրիշ ազգերի իրաւունքները և ընդունում՝ սահմանադրութեան

անհրաժեշտութիւնը։ Երկու ծրագրերի մէջ եղած տարբերութիւնը ներքուստիներն ու մանրամասների մէջ էր։ Իսկ հակակառավարչական պլատֆորմների ծանրութեան կէնտրոնն ընկած էր «Միութեան և Յառաջադիմութեան» կուսակցութեան անդամներին ֆրանմասոնութեան ու միահեծանութեան՝ կաշառող մեղադրանքների մէջ։

Արդէն 1910 թւի յունիսին բացւում է երիտասարդ-թրքական կառավարութեան դէմ նիւթած դաւադրութիւնը։ Իսկ 1911 թւի սկզբին, երկրում օրը-օրին աճող դժգոհութեան ճնշման տակ, Թալաաթ բէյն, անկասկած ամենից փայլուն դէմքը երիտասարդ թիւրքիայի, ստիպւած էր Ներքին գործոց նախարարութեան պորտֆելը զիջելու Խալիլ-բէյին, իւր, այնու ամենայնիւ, մօտ հոմախոհին։ Բայց կուսակցութեան իսկական ճգնաժամը սկսւում է նոյն 1911 թւի ապրիլից, երբ պարլամենտական ֆրակցիայի անդամներից մեծ թիւ, գլխաւորութեամբ խոջա Մեդջդի, անջատւում առանձին խմբակ է կազմում (խիսբի Ջեդիք) և առաջադրում տասը կէտերից բաղկացած մի նոր ծրագիր։

Այլազանների քաղաքական իդէալները արտայայտւած են այդ ծրագրի մէջ շատ մութ ձևով։ Ազգարարւում է՝ որ պիտի պահել թէ ազգային ու կրօնական սովորութիւնները ու աւանդութիւնները ու թէ պիտի տարածել արևմտա-եւրոպական քաղաքակրթութիւնը. հարկաւոր է հետևել պատմական աւանդներին, բայց միայն սահմանադրութեան սահմաններում. այլազանները առաջւայ պէս օսմանեան ազգութիւնների միութեան կողմն են. հարկաւոր է փոփոխել սահմանադրութեան այն յօդւածները, որոնք վերաբերում են խալիֆութեան ու սուլթանութեան արբազան իրաւունքները՝ միապետի իշխանութիւնն օրէնսդիր ու գործադիր իշխանութիւնների հետ հաշտեցնելու մտահոգութեամբ, նախարարական պատասխանատուութեան սկզբունքն և օրէնքները խստօրէն պիտի պահպանուեն։ Բայց այդ ընդհանուր և անորոշ պահանջներից, այլազանների ծրագիրը պարունակում է իւր մէջ, սակայն, և մի քանի ուրիշ կէտեր՝ ուղղւած բացարձակօրէն «Միութեան և Յառաջադիմութեան» օլիգարխների դէմ։ Այսպէս, մեր աչքերին թռչլատուում է նախարարութեան պաշտօնը սահմանել՝ միայն կուսակցութեան ձայների երկու երրորդի մեծամասնութեան որոշման համաձայն։

Չնայած համակրութիւնը, որն արտայայտել էին այդ ծրագրին պետութեան թշնամի մամուլի բոլոր օրգանները, դալիս էր փարատելու այլազանների ոգևորող իսկական դգացմունքների մասին եղած բոլոր կասկածները։ Ճանկանալով ինչ գնով ուզում է լինի կանխել վտանգաւոր անջատումն, երիտասարդ-թրքական

դեկավարները շատ ճարպիկ քայլի դիմեցին.—Նոքա ընդունեցին այլադաւանների ամբողջ ծրագիրը, որը նրանց պարապմունքի կողմից կոչւում էր պահպանողական ծրագիր, միայն պայմանադրուեցին՝ ներկայացնել այդ տասը կէտերը կուսակցական վեհաժողովին հոկտեմբեր ամսին։ Դեռաբոյս «պահպանողականները» վստահացան իրենց «ազատամիտ» ընկերների դիմումի անկեղծութեան ու ճշացին կուսակցութեան մէջ։ Իսկ աշնանը վեհաժողովին ամրապնդելով արտաքին հաշտութիւնը, բոլորովին էլ, ի հարկէ, վերջ չտաւ կուսակցութեան ներսում տեղի ունեցող նենգութիւններին։

Այլադաւանների շարժման թև էր տալիս, գլխաւորապէս, գնդապետ Սադրող, մէկը երիտասարդ–թրքական յեղափոխութեան գլխաւոր գործիչներից, որը լիակատար հիմք ունէր իրեն վիրաւորուած համարելու Կոմիտէից։ Շուտով կուսակցութեան ծայրերի մէջ եղած արտաքին հաշտութիւնից յետոյ Սադրղ–բէյը (1911 թւի մայիսի 6) հրատարակեց իր քաղաքական ծրագիրը՝ նոյնքան մշուշապատ ու անորոշ, որքան և այլադաւանների տասը կէտերը։

Սադրղն ընդունում է,—որ սահմանադրութեան անանկութիւնը գերեզման կլինէր օսմանականութեան և միութեան ու յառաջադիմութեան վսեմ գաղափարի համար, նա նոյնպէս ընդունում է, որ թէ այդ ու թէ այդ գաղափարը մարմնացնող կոմիտէն ներկայանում են, որպէս պատասխանատու օսմանեան կարգերի։ Բայց Կոմիտէն պիտի զարդանայ իր բնական պայմանների մէջ, որպէսզի բոլոր օսմանների ամենաուժեղ ազգային կազմակերպութիւնը դառնայ՝ անկախ ցեղից ու դաւանանքից։ Այն ինչ, կենտրոնական Կոմիտէն ու նրա ակումբները, ունենալով իրենց կազմի մէջ պաշտօնական անձնաւորութիւններ, մի հրկրորդ կառավարութեան բնոյթ են ստանում, որը և անդրադառնում է երկրի վրայ կորստաբեր կերպով։

Սադրղը զինւում է նոյնպէս և ֆրանմասոնութեան դէմ, կամ, աւելի ճիշտը, նրա՝ քաղաքականութեան մէջ ունեցած մասնակցութեան դէմ։ Նա յարդում է մարդկութեան յառաջադիմութեանը ծառայող բոլոր գործօնները, մի պայմանով միայն՝ որ նոքա անմիջական աղերս չունենան քաղաքականութեան հետ.—քաղաքական կրքերը կարող են այլանդակել ամենավսեմ գաղափարներն անգամ։

Բանակը պէտք է սահմանադրութիւնը պաշտպանի, չէ թէ մի սահմանափակ խմբակի քաղաքական հայեացքները. սպաներն ոչ պիտի քաղաքականութեամբ զբաղւեն և ոչ էլ կոմիտէների անդամներ լինեն։ Ընդհանրապէս չպիտի թոյլ տալ, որ առանձին անհատներն երկրի ամբողջ յեղափոխական ոյժի մարմնացնողների

յատակութիւնն ունենան, որովհետև նոր Թիւրքիան ստեղծել են չէ թէ մի քանի հանճարները, ինչպէս այդ Իտալիայում է եղել, այլ նա ծնունդ է համեստ ու աննկատ մարդկանց հաւաքական ճիգերի.—օսմանականութեան տարբեր տարրերի միացումն առանձին անհատների շուրջը չի կարող ստեղծւել։ Զպիտի, սակայն, միանգամայն ենթարկւել և «ամբոխի տրամաբանութեան», ժողովրդական գերիշխանութեան տեղը բռնկեցնելով նրան,—ամբոխի մոլեռանդութեանն ենթարկւելը երկիրը կարող է դէպի կորուստ տանել։

Եղբայրակութեան մէջ Սադրղ–բէյն արդահատանքով է բողոքում իրեն վերադրած յետադէմ հայեացքների դէմ, յիշեցնելով իւր յեղափոխական անցեալը։

Շուտով պաշտօնից հրաժարեցւած Սադրղ–բէյը՝ «Ֆրանմասոններին» ու «Միութեան և Յառաջադիմութեան» օլիգարխներին դէմ դաւառամասերում իւր հանդուն պայքարն է սկսում։ Կուսակցութիւնը ժամանակաւորապէս անհրաժեշտ է համարում զոհաբերել Զավիդին ու Բարան զադէին, առաջարկելով նոցա հրաժարւել իրենց պորտֆելներից, և անդամ Թալաաթին Փրակցիայի նախագահութեան պաշտօնից է զրկում։ Բացի դրանից 1911 թւի յունիսին կառավարութիւնը ծայրայեղ–մուսուլմանական ոգով Սուլթանի ճանապարհորդութիւնն է կազմակերպում դէպ Կոսսովայի դաշտը, ուր Մուրադի գերեզմանի վրայ կրօնական ծիսակատարութիւն է տեղի ունենում։ Ենթադրւում էր այդ ճանապարհով ազդել ալբանացիների վրայ և երկրում ընդհանրապէս կրօնական տրամադրութիւնը բարձրացնել։ Այնու ամենայնիւ, թշնամութիւնը կուսակցութեան համախոհների ու հակառակորդների մէջ աւելի ու աւելի է մեծանում։ Սրա զոհն է դառնում Սադրղի կողմնակից լրագրող Զեկքին, որը 1911 թւի մայիսի 27–ին անյայտ մարդկանց—անկասկած «Միութեան և Յառաջադիմութեան» համախոհների—ձեռքով սպանւում է Գալատա. վերջիններիս վրայ ընկնում է ուժեղ կասկած դեռ 1910 թւականին ընդդիմադիր օրագրող Սամիմին հեռացնելու մէջ, իսկ կարող է պատահել, որ սոցա զործն է և 1909 թւի՝ հրապարակախօս Հասան Ֆեհմիի սպանութիւնը։ Զեկքիի սպանութիւնն անկասկած նշաններից էր մօտեցող անաբեկութիւների—կարմիր ու սպիտակ։

Իտալօ–տաճկական պատերազմը սրբում է և Խակքի–փաշայի նախարարական կազմը, բայց վերջ չի դնում երիտասարդ–թրքական ոէժիմին. ծերուկ Սախդ–փաշան համաձայնում է «Միութեան և Յառաջադիմութեան» անդամներից կազմած կաբինետի գլուխն անցնել։ Այդ պատերազմն ոչ մի հաշտեցնող ազդեցութիւն չունեցաւ կուսակցութիւնների վրայ, ու նոցա կռիւն առաջւայ պէս շարունակեց ընթանալ։

1911 թւի վերջերի երիտասարդ–թրքական կառավարութիւնը վերջնականապես հիասթափւում է դէպ պարլամենտն ունեցած հաւատի մէջ, որի առաջին նստաշրջանին նկատւող լուրջ օրէնսդրական գործունէութիւնը վաղուց արդէն դիջել էր իւր տեղը պոլիտիկոսութեան ու անհատական նենգամտութիւնների,—իսկ ընդդիմադիր հոսանքների ոյժն էլ աւելի ու աւելի էր աճում։ Դրա հետ միասին երիտասարդ–թիւրքերին վիճակւեց փոշմանել և սահմանադրութեան 35-րդ յօդւածի թեթևասլիկ փոփոխութեան մէջ, որի համաձայն սուլթանական գրման իրաւունքը ծայր աստիճան սեղմւած էր,—պայմանաւորւած լինելով սենատի համաձայնութեամբ ու սահմանափակւած այն դէպքով՝ երբ պալատը նախարարութեան հետ ունեցած ընդհարումից և վերջինիս հրաժարականից յետոյ մտնում է ընդհարման մէջ նոր նախարարութեան հետ։ Գտնելով այժմ նման կարգը ճնշիչ իրենց համար, երիտասարդ–թիւրքերն այստեղ ևս երկար չտատանւեցին իրենց նախկին գաղափարներից ձեռք վերցնելու առաջ և ազդարարեցին սուլթանի սրբազան իրաւունքների ուժեղացման անհրաժեշտութիւնը։ Ընդ սմին, շատ հաճոյ կերպով նոցա համար դասաւորւել էր այն պարագան՝ որ սուլթանի առանձնաշնորհումների ուժեղացումը մէկն էր այլադաւանների ծրագրի կէտերից, որը նոքա ընդունել էին կարիքից ստիպւած։ Եւ իրօք, կառավարչական օրէնսգիծը, որի համաձայն սուլթանին վերապահւում էր պալատի գրման իրաւունքը նրա մի նախարարութեան հետ ունեցած ընդհարումից յետոյ, այլ ոչ—երկու, և սենատին դիմելը թողնւում էր միապետի բարեհայեցողութեան,—մտցնւում է պալատ Սայիդ–փաշայի հեղինական նկատողութեան տակ, թէ օրէնսգիծը համապատասխան է ընդդիմադիր հոսանքի տեսութիւններին։

«Հիմնական օրենքների պարլամենտական յանձնաժողով», ուր անցնում է պետական օրէնսգիծը, ներկայացնում է պալատին բաւականին հետաքրքիր զեկուցում, որի մի քանի տեղերը փայլուն լոյս են սփռում մեր լուսաբանութեան ենթակայ շրջանի վրայ։ Սահմանադրութեան 35–րդ յօդւածի փոփոխութիւնը, ասւում է զեկուցման մէջ, խանգարել է ոչ միայն կայսրութեան մէջ եղած ոյժերի փոխ–յարաբերութիւնը և թուլացրել սուլթանութիւնը, նա հարւածել է և օսմանեան ազգութիւնը։ Երկրում տիրապետողն է այժմ հիւանդագին ցնորքեամբ տառապող կացութիւնը։ Սուլթանը—քաղաքական հոսանքներից բարձր կանգնած անաչառ դատաւորը—զրկւած է հնարաւորութիւնից, պալատի հետ ունեցած անհամաձայնութեան դէպքում, դիմել ժողովրդին, որով, ի հարկէ, ժողովրդական գերիշխանութիւնն աւելի սեղմւում, քան լայնանում է։ Մի‌ւս կողմից, խախտւած է

գործադիր և օրէնսդիր իշխանութիւնների հաւասարակշռութիւնը նրանով՝ որ կառավարութիւնը դիջում է պալատին նրա հետ ունեցած առաջին ընդհարումից յետոյ, իսկ պալատը միայն—առաջինին պաշտպանող՝ երկրորդ կառավարութիւնից յետոյ։ Շնորհիւ դրան պալատը դարձել է պետութեան բոլոր ոյժերի միակ մղիչն ու կարգաւորողը, ունենալով ահագին ազդեցութիւն նախարարութեան բախտի ու կեանքի վրայ։ Իսկ դրա հետ միասին այդ անպատասխանատու պալատն անոյժ է հանդիսանում ազդեցութիւնից զրկւած կառավարութիւնն ոգևորելու արդիւնաւէտ աշխատանքի համար։

Յանձնաժողովն ուժեղ կերպով դէմ է դուրս գալիս սենատի՝ գրման իրաւունքի մէջ ունեցած մասնակցութեան, որը, մի կողմից, մասնակից է անում անպատասխանատու հիմնարկութիւնը կապւած մեծ պատասխանատուութեան հետ գործադիր իշխանութեան ակտին, իսկ մի‌ւս կողմից—կարծես թէ մեղմացնում է կառավարութեան այդ պատասխանատուութիւնը։ Այդ ճանապարհով խախտւում է պալատների մէջ եղած հաւասարութեան սկզբունքը, որովհետև սենատը չի կարող գրւել պալատի համաձայնութեամբ։ Ստեղծւում է մի տաւտրիճակ աստիճանականութիւն.—սենատը տիրապետում է պալատի վրայ, պալատը—նախարարութեան, ու այսպիսով էլ խախտւում է այս բոլոր ոյժերի հաւասարակշռութիւնը։ 35–րդ յօդւածի այժմեան խմբագրութեան պահելը սպառնում է երկրին անիշխանականութեամբ, այդ պատճառով էլ յանձնաժողովը յօդուտ կառավարութեան առաջարկների է արտայայտւում, որովհետև միայն նոքա կարող են տանել դէպ պարտաւորաբար սուլթանութեան հետ ներդաշնակ ժողովրդական գերիշխանութիւնը [1]։

Հետաքրքիր է նշել, թէ որպիսի իրարանցում մտցրեց Ընդդիմադիրների շարքերը հենց իրենց զէնքով հասցրած հարւածը։ Նոքա օբստրուկցիայի դիմեցին, բայց կաբինետն իսկոյն և եթ իւր հրաժարականը տւաւ՝ կանխատեսելով՝ որ նոր կաբինետ կազմելը կյանձնարարւի Սաիդ–փաշային, և որ, նոր ընդհարում տեղի ունենալու դէպքում, նա հնարաւորութիւն կտանայ ցրել պալատը համաձայն գործող 35–րդ յօդւածի,—ընդդիմադիրներն որոշում են դիմել արտակարգ միջոցի՝ մասնակից անել բնդհարման եւ միապետին։

«Ազատութեան և Համաձայնութեան» ներկայացուցչութիւնը,

---

1) Զեկուցում յանձնաժողովի 1911 թւի 11/24 դեկտեմբերից, տե՛ս առաջին լեգիսլատուրայի 1327—1328 նստաշրջանի № 23. յանձնաժողովի նախագահ՝ Թալիլ–բէյը, զեկուցող՝ Իզմայիլ–Թակկի–Բաբանզադէ։

Իզմայիլ–բեյի առաջնորդութեամբ, 1911 թւի դեկտեմբերի 18/31 ներկայանում է սուլթանին ու յայտնում նրան,—որ ընդդիմադիրներն ամենևին էլ դէմ չեն միապետի իրաւունքների լայնացման, որը նոքա առաջինն իրենք են մացրել իրենց ծրագրի մէջ, բայց որ նոքա չեն ցանկանում ալեկոծիլ պալատի վրայ ճնշում գործադրող Սադդ–փաշայի ծրագրներին,—այդ պատճառով էլ խնդրում են Սուլթանին նոր նախարարութիւն կազմիլը նրան չյանձնել։ Մահետ–Բէշադը, սակայն, շատ կարուկ պատասխանում է,—որ մեծ եպարքոս նշանակիլը սուլթանի բացառիկ իրաւունքն է, ու նոյն օրը երեկոյեան պալատի նախագահի միջոցով անում է մի յայտարարութիւն, ներկնչած նրան, ըստ երևոյթին, «Միութեան և Յառաջադիմութեան» կուսակցութեան կողմից,—այդ յայտարարութեան մէջ Սուլթանը, ելակէտ ունենալով ներկայացուցչութեան խօսքերը, հաստատում է կուսակցութիւնների մէջ չեզած սկզբունքային տարաձայնութիւնների բացակայութիւնը և ցանկութիւն է յայտնում, որպէսզի «Համաձայնութեան» կուսակցութիւնը խոչընդոտ չհանդիսանայ սահմանադրութեան վերականգնութեան։ Որից յետոյ նախարարութիւն կազմիլը յանձնարարւում է Սադդ–փաշային։

Այսպիսով ընդդիմադիրներն ոչ միայն կրում են վճռական պարտութիւն, այլ և իրենց անխոհեմ ու հակասահմանադրական քայլերով հնարաւորութիւն են ընձեռում «Միութեան և Յառաջադիմութեան» կուսակցութեան ներշնչել երկրին, որ Սուլթանն իր կողմն է։ Գտնելով երկընտրանքի առաջ,—կամ ընդունել սահմանադրութեան 35-րդ յօդւածի փոփոխութիւնը, կամ թէ հեռացրած լինել անյապաղ ցրման միջոցով, ընդդիմադիրը հոսանքն ընտրեց վերջինն ու մերժից կառավարչական օրէնսգիծը, որով և առեղծեց երկրորդ նախարարութեան հետ, թէև կազմած նոյն Սադդ–փաշայի ձեռքով, ընդհարման փաստը։ Սրանից յետոյ, 1912 թւի յունուարի 5/18, ցրւեց երիտասարդ Թիւրքիայի առաջին պալատը։

Ազատւելով ընդդիմադիրը պալատից, երիտասարդ–Թրքական կառավարութիւնը ձեռնարկեց բոլոր միջոցներին ապագայ պարլամենտը իր ձեռքին հնազանդ գործիք դարձնելու։ Ընտրութիւնները կատարուեցին վարչութեան ուժեղ ճնշման տակ, ու նոր պալատը, հաւաքւած ապրիլի 5/18-ին, բաղկացած էր, ի հարկէ, իր ճնշող մեծամասնութեամբ կառավարութեան կողմնակիցներից։ 35-րդ յօդւածի փոփոխութիւնն ընդունւած ու յանձնւած էր սենատին։

Բայց պարլամենտի նման ճնշումն ու ընդդիմադիրներին դէպ գաղտուկ գործունէութեան դրդիլը, ինչպէս և պէտք էր սպասել, ուժեղացրեց յեղափոխական խմորումն երկրում, առաւելապէս

—բանակի մէջ։ Ու նորէն, ինչպէս և 1908 թւին, Մոնաստիրեան կոմպուսի ուժգիմից դժգոհ մի քանի սպաներ իրենց վաշտերով բարձրացան սարերն ու այնտեղից սահմանադրութեան իրականացման հետևելու պահանջներն առաջադրեցին։ Տեսնելով, որ երկրում նորէն կարող է բռնկւել ներքին երկպառակութիւն, որի ելքը կարող է իրենց համար ճակատագրական լինել, երիտասարդ–Թիւրքերն որոշում են, վերջապէս, կորուկ միջոցների ձեռնարկել բանակի պոլիտիկոսութեան դէմ։ Մահմուդ–Շեֆկետ–փաշան, սահմանափակելով մինչ այժմ իր ազդեցութիւնը պոլիտիկանութեամբ զբաղւող սպաների վրայ ոչ ոքի կողմից ուշադրութեան չառած շրջաբերականներով, պարլամենտում մի օրէնք անցկացրեց, որով քրէական խիստ պատիժների սպառնալիքի տակ արգելւում էր սպաներին ու զինւորներին որևէ քաղաքական գործունէութիւն։ Բայց այդ ուշացած խոհեմութիւնը չկարողացաւ, ի հարկէ, կանգնեցնել ընդդիմադիր սպայութեան մէջ առաջ եկած շարժումը։ Չկանգնեցրեց նրան և Մահմուդ–Շեֆկետ–փաշայի հրաժարականը։ Սառեցրեց «հայրենիքի ազատարարների» (*«Վաթանբերուանի միլլեթ»*) զինւորական լիգան։

«Հայրենիքի ազատարարների» մանիֆեստն, անկասկած, վկայում է այն մասին, որ նրա կազմողները իրենց լիակատար հաշիւ են տւել Կայսրութեան անել կացութեան մասին։ Օսմանեան հայրենիքը, աղքատացրած է մանիֆեստը, գլխապատյտ արագութեամբ դէպի անդունդն է գնում, որին այնքան մօտ էր Աբդիւլ–Համիդի թագաւորութիւնը։ Սահմանադրութիւնը երկրի վերջին պայթիւնն էր։ Այդ պայթիւնը նպատակի չհասաւ, և Եւրոպան էլ չուշացաւ այդ հանգամանքից այն եզրակացութիւնն անել՝ որ օսմաններն անընդունակ են ինքնուրոյն կեանքի՝ անգամ սահմանադիր կարդերի դրօշի տակ։ Սահմանադրութեան ներմուծման ազդեցութեան տակ Եւրոպան ժամանակաւորապէս հրաժարւեց Թիւրքիան անդամահատելու իր մտադրութիւնից և բռնեց սպասողական դիրք։ Բայց երբ մենք սկսեցինք գործել, ինչպէս Համիդի ժամանակներում էր, իսկ երբեմն էլ ավելի էինք ախտասալ անցած կարգերը, այդ ժամանակ Եւրոպան փոխեց իր վերաբերումը դէպ Թիւրքիան, որը երևաց, ի մէջի այլոց, արիպոլիսեան պատերազմի ժամանակ։ Այդ ի նկատի ունենալով, լիգան իր պարտքն է համարում նորից դիմել Թիւրք սպաների հայրենասիրութեան, հակառակ իր չերմ ցանկութեան՝ տեսնել նոցա հեռու քաղաքականութիւնից։ Սահմանադրական իրաւունքները, որոնք նպատակն էին կազմում 1908 թւի զինւորական յեղափոխութեան, ապահովւած չեն, այլ յանուն անհատական շահերի կամայականութիւն խախտւում են։ Այդ պատճառով էլ Աբդիւլ–Համիդի բռնա-

կալութիւնը խորտակող սպանների վրայ պարտականութիւն է ընկնում ազատել հայրենիքը, առաւել ևս, որ կրթւած հասարակութեան ճնացած մասը, բաղկացած գլխաւորապէս պաշտօնեաներից, զուրկ է դրա համար անհրաժեշտ համապատասխան բարոյական ոյժից։

Վերն ասածները ի նկատի ունենալով, զինւորական լիգան առաջադրում է հետևեալ ընդհանուր քաղաքական պահանջները.— 1) փոխարինուիլն այժմեան կառավարութեան մի ուրիշով, որն ընդունակ լինէը Եւրոպայի վստահութեանն արժանանալու, 2) անպատասխանատու գործօնների չեզոքացուիլն երկրի կառավարութեան գործերին միջամտելուն, 3) ցրումը պալատի, եթէ կապացուցւի ընտրութիւնների ոչ օրինական լինելը, և նոր ընտրութիւնների կատարուիլն առանց ոստիկանութեան միջամտութեան։ Բացի այս լիգան պահանջում է բանակի համար.—քաղաքականութեան վտարումը նրանից, երբ ընդունւած կլինեն առաջադրւած պահանջները. վերադարձը դէպ բանակի շարքերն այն սպանների, որոնք քաղաքացիական պաշտօններ ունեն կամ կուսակցութիւնների ներկայացուցիչներն են. վերջապէս, կիրառուիլն արդարացիութեան սկզբունքի, այսինքն՝ պատասխանատուութեան գործադրութիւնը սորին սպանների հետ միասին և բարձրաստիճան սպանների նկատմամբ, զինւորական դատարանների անկախութիւնը և աստիճանների բարձրացուիլն անկախ կողմնակի ազդեցութիւններից, միայն ցոյց տւած ծառայութիւնների համար։ Վերջում լիգան յայտնում է,—որ կդիմի բոլոր միջոցներին, թէ իր նպատակներին հասնելու համար և թէ չեզոքացնելու նոցա, որոնք այդ բանին պատւար կհանդիսանան։

«Հայրենիքի ազատարարներիի» պայքարն իւր կողմը գրաւեց սպայութեան խոշոր մասը։ Յուլիսի 6-ին ներկայացուցչութիւնն առաջադրում է իր պահանջները իրեն՝ Սուլթանին։ Երիտասարդ–Թրքական կառավարութիւնը վախենում է դիմել իրեն հաւատարիմ սպանների օգնութեան և առաջ բերել քաղաքացիական պատերազմ ու հրաժարական է տալիս։ Ոչինչ այնպէս ցայտուն կերպով չի նկարագրում այդ ժամանակ տիրապետող անիշխանականութիւնը, ինչպէս այն փաստը, որ «Հայրենիքի ազատարարների» ներկայացուցչութիւնն ընդունելուց հենց հետևեալ օրը (յուլիսի 7), Սուլթանն, ըստ երևոյթին երիտասարդ–թիւրքերի ազդեցութեան տակ, մի խիստ հրահանգ է տալիս բանակին, որի մէջ պատասպարտում է լիգայի պահանջները, որպէս՝ սահմանադրութեան և խալիֆայութեան ու սուլթանութեան հակառակ պահանջներ.— զինւորների վարքը, որոնք քաղաքականութեամբ են զբաղւում ու չեն ենթարկւում իշխանութիւններին, հրահանգի մէջ ուղղակի

պատաճանութիւն է համարւում, որի հետևանքով բացատրւում է խտալացիների մայրաքաղաքի դարբասների առաջ երևան դալը (Դարդանելի մօտ)։

Սաստիկ հրահանգը, ինում է, սակայն, առանց որևէ ազդեցութեան երերի ընթացքի վրայ։ Յուլիսի 9-ին Դ.ազի–Ահմեդ–Մուխտար–փաշան նոր կաբինետ է կազմում, որի կազմի մէջ մտնում են ընդդիմադիր հոսանքի ամենից ականաւոր գործիչները, ինչպիսիք են.—Երիտասարդ–թիւրքերի հին թշնամի Ռեամիլ–փաշան, Նազիմ–փաշան (զինւորական նախարար) և, որպէս արտաքին գործոց նախարար, հայ Նորատունկեանը։

ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

(1912 թի յուլիսի 9-ից մինչեւ 1913 թի յունւարի 10-ը)

Այսպիսով ստեղծւած դրութիւնն, ի հարկէ, բնական լինել չէր կարող։ Երիտասարդ–Թրքական կառավարութիւնն ընկաւ,—չնայած այն բանին, որ պարլամենտը նրա կողմն էր, իսկ նոր «լիբերալ» կառավարութիւնն իրեն կանգնած տեսաւ Երիտասարդ–Թրքական պալատի առաջ։ Ու պալատն էլ ամեն կերպ խուսափում էր կառավարութեան հետ ընդհարումներ ունենալուց, նրա ցրման վտանգը կանխելու մտահոգութեամբ։ Սակայն, չքաշելով իւր հակառակորդներից աւելի, կաւ միջոցների ընտրութեան մէջ, Մուխտար–փաշայի կաբինետը շատ շուտով Սուլթանի համաձայնութիւնը ստացաւ պալատը փակելու համար այն պատրւակով, որ նա հրաւիրւած է եղել միայն սահմանադրութեան 35–րդ յօդւածն ընդունելու համար. այն ինչ, իւր գահակալ ճառի մէջ, որով Սուլթանն ապրիլի 5-ին պալատն էր բանում, վերջինիս պարտականութիւնները բոլորովին էլ չէին սպառւում 35–րդ յօդւածի վերջաբանութեամբ, ու նրան, ի միջի այլոց, առաջարկւում էր որքան կարելի է շուտ բիւջէին անցնել։ Պալատը կարողացաւ, սակայն, միևչեւ փակման հրովարտակը կարդալն իւր անվստահութեան քւէն տալ կառավարութեան ու յետաձգել նրա նիստերը մինչև նախագահի կողմից նորէն հրաւիրելը (1912 թ. յուլիսի 23)։ Այսպիսով ստեղծւում է տանկական պարլամենտարիզմի մի նոր կուրիոզ,—ընդհատում նախարարութեան ու փակւած պալատի միջև։

Նոր նախարարութեան փորձը՝ հանգստութիւն մտցնել երկրի մէջ, յաջողութեամբ չպսակւեց։ Դրութեան երկկայ տէրերն անցան այսօր ընդդիմադիրներից Թողած դժգոհների բանակը։ Նախարարութիւնն յատուկ երդումով պարտաւորեցնում է սպաներին

հրաժարւել ամեն տեսակի քաղաքական գործունէութիւնից, պահանջում է նման հրաժարական և բոլոր քաղաքացիական ատիճանաւորներից և վերցնում է պաշարողական դրութիւնը, որը յանրացել էր մայրաքաղաքի և մեծացած քաղաքների վրայ երիտասարդ–Թրքական ռեժիմի ամբողջ ժամանակաշրջանում։ Բայց նոր տէրերի ու երիտասարդ–Թիւրքերի դէպ մէկը միւսին տածած ատելութիւնը շատ էր խոր, որպէսզի հնարաւոր լինէր քաղաքական կռիւն յետագայում ընական սահմանների մէջ տանել։ Բացի դրանից նախարարութիւնն առաջին իսկ օրերին մի մեծ սխալ է անում.—ընդհանուր ներումն շնորհելով, նա վարչական կարգով աքսորւածների ցանկն է մոցնում Աբդիւլ–Համիդի բոլոր կողմնակիցներին, որով մուխ ուժերին քօղարկւած համակրութեան մեղադրանքին առատ նիւթ է տալիս երիտասարդ–Թիւրքերն, իրենց հերթին, ուժեղ պայքար են շարունակում.—ու մի ամսից յետոյ «լիբերալ» նախարարութիւնը նորից մոցնում է պաշարողական դրութիւն և զինւորական դատարաններ. իսկ ծայրագաւառներում վարչութիւնը, «վերակազմւած» նկատելի չափով, պատի նոր ընտրութիւններն է պատրաստում երիտասարդ–Թրքական միջոցներին ոչնչով չզիջող ճանապարհով։ Այդ նոյն ժամանակ ամենուրեք գլուխ է բարձրացնում այլացեղերի յեղափոխութիւնը։ Ալբանական ապստամբներն առաջադրում են մի շարք պահանջներ, որոնք պիտի վերապահէին նոցա մի շարք արտօնութիւններ՝ լեզւի, դպրոցական գործի ու զինւորական ծառայութեան սահմաններում։ Հայաստանում ևս է ծաւալւում անիշխանականութիւնը, և, վերջապէս, քրիստոնեայ ազգաբնակութեան անել կացութիւնն Մակեդոնիայում բերում է վաղուց հասունացած պատերազմին իրենց բնական հովանաւորողների, անկախ բալկանեան պետութիւնների հետ։

Բալկանեան պատերազմը սոիպում է, վերջապէս, տաճիկ սպայութեան դէմ առժամապէս վերջ տալ ներքին երկպառակութիւններին։ Բայց երիտասարդ–Թրքական քաղաքական գործիչները չեն վերջացնում իրենց պայքարը, ցանկանալով իշխանութիւնը նորէն գրաւելու համար օգտագործել պատերազմի անցնող ելքը։ Մուխտար–փաշային մեծ եպարքոսի պաշտօնով փոխարինող (1912 թւի հոկտեմբերի 17) Քեամիլ–փաշան դիմում է դաժան միջոցների ու անդամ ձերբակալում «Միութեան ու Յառաջադիմութեան» կուսակցութեան շատ պարագլուխներին ու անդամներին։ Բայց տաճիկ բանակի անկազօրութիւնները, կրած երիտասարդ–Թիւրքերի Թշնամի Նազիմ–փաշայի հրամանատարութեամբ, պարարտ հող են մատակարարում զինւորական շրջաններում մղած երիտասարդ–Թրքական քարոզին։ Դրա հետ միասին վերադարձած

Տրիպոլիսից ու նոր փառքով շրջապատւած Էնվեր–բէյն իր ամբողջ ազդեցութիւնն է ի սպաս դնում կուսակցութեան։ Վերջապէս, երիտասարդ–Թիւրքերին և շատ յաջող ուղիք է հանդիսանում իրենց իշխանութեան դարձին հայրենասիրական բնոյթ տալ։ 1913 թւի յունւարի 4–ին վեց պատուիրակների ներկայացուցիչները Դռան հատուկ նոտագիր են ներկայացնում՝ որով ստիպողաբար խորհուրդ են տալիս Թիւրքիային համաձայնւել ու զիջել Իդրինը Բուլղարիային։ Յունւարի 9-ին բարձրաստիճան տաճիկ պաշտօնատարների ժողովը, հրաւիրւած մեծ եպարքոսի կողմից, արտայայտւում է որպէս կողմնակից հաշտութեան։ Իսկ միւս օրը, 1913 թւի յունւարի 10, Էնվերն ու Թալաաթը, գլուխ անցած երկու հարիւր երիտասարդ–Թիւրքերի, նախարարական կազմի նստի ժամանակ ներս են խուժում Դուռը, սպանում են նրանց դէմ դուրս եկած Նազիմ–փաշային ու Ռեամիլ–փաշային ստիպում են իր հրաժարականը ստորագրել։ Այդ նոյն երեկոյեան Մահմուդ–Շեֆկեթ–փաշան մեծ եպարքոս է յայտարարւում, և իշխանութիւնը նորէն երիտասարդ–Թիւրքերի ձեռքն է անցնում։ Լուռ էր Պոլսի ազդարնակութիւնը։

«Միութեան և Յառաջադիմութեան» «ազատամիտ» թշնամիներն իրենց վեց ամսւայ տիրապետութեան ժամանակաշրջանում ցուցահանեցին աշխարհին ներքին անանկութեան մի այնպիսի փայլուն օրինակ, որը դալիս էր գերակշռելու երիտասարդ–Թիւրքերինը։ Ինչպէս ցոյց տւեց, «Համաձայնութեան և Ազատութեան» («Իթթիլաֆ վէ Հուրրիեթ», ֆրանսերէն՝ „Entente Libérale“) ու ժողովրդական կուսակցութիւնների ազատամիտների պաշտօնական ծրագրերն ոչնչով չէին տարբերւում երիտասարդ–Թրքական ծրագրից.—էապէս «ազատականները» համախմբւել էին բացառապէս դէպ երիտասարդ–Թիւրքերը տածած իրենց անհատական ատելութեամբ և իրենց հերթին երկրի վրայ իշխանութիւնը գրաւելու ցանկութեամբ,—նոցա շարքերում յետադիմականների մեծ թիւ կար։ Բացի այս, բոլոր այսպէս կոչւած ազատական գործիչները, ունենալով երիտասարդ–Թիւրքերի բոլոր արատները, զուրկ էին վերջիններիս յատուկ առաքինութիւններից՝ եռանդից ու որոշ կազմակերպչական ընդունակութիւններից։ Սահմանադրութեան ազդարարման 1908 թւին բոլոր քիչ–շատ աչքի ընկնող մարդիկ մտել էին «Միութեան և Յառաջադիմութեան» շարքերը, որը և կազմեց երկրի միակ կուսակցութիւնը, այդ խօսքի իսկական իմաստով։ Տեղ–տեղ առաջացած միւս «լիբերալ» միութիւններում չերևաց և ոչ մի հատ լուրջ քաղաքագէտ.—հօ չէ՞ կարելի գործնական պետական գործիչներ համարել անհող տեսաբան պրինց Սաբահ–էդ–Դինին ու մուխ միտիկ գնդապետ Սադըդինն։

Այդ պատճառով «ազատականներն» ակամայից սկսեցին համախմբվել հին կարգի աստիճանաւորներ՝ Ղազի–Անմետ–Մուխտար–փաշայի, Ջեմիլ–փաշայի ու Նորատունկեանցի չորս կողմը. բայց նոքա չենթարկեցին վերջիններիս իրենց, ինչպէս այդ արել էին երիտասարդ–թիւրքերն մեծ եպարքոսներ՝ Հիլմի, Մակքի ու Սաիդի հետ, այլ միանգամայն վատահացան նոցա «Ազատականներին» սիրապետութեան շրջանում ամբողջ իշխանութիւնն աստիճանաբար կենտրոնացել էր պատմեալ Ջեմիլ–փաշայի ձեռքերում։ Բայց այդ տաճիկ բիւզանդականը, փորձած համիդեան կարգերի բոլոր պալատական նենգամտութիւններում մէջ, չէր կարող, ի հարկէ, թարմ հոսանք պատուաստել օսմանեան պետական կեանքին ու կարելի է համարձակ ասել, որ այդ կառավարութիւնը միայն կրկնում էր ու անգամ խորացնում երիտասարդ–թիւրքերի սխալները, չտալով վերջին հաշուով երկրին և ոչ մի օգուտ։

Զգիտի, այդու, զարմանալ՝ երբ Էնվերն ու Թալաաթը երկու հարիւր աւազակների հետ կարողացան այդքան հեշտութեամբ իրենց հակառակորդների ձեռքից իշխանութիւնը խլել։ Բոլոր յեղաշրջումները, տեղի ունեցած երիտասարդ Թիւրքիայում 1908 Թ. յուլիսից մինչև 1913 թւի սկիզբը, [1]) բանակի մեծամասնութեան այս կամ այն տրամադրութեան արտայայտութիւններ էին, որը միշտ կուսակցութիւնների կողմից կանխատեսւում էր մի անտեսւոր զգայունութեամբ. այդ պատճառով էլ նոքա անցնում էին առանց նկատելի արիւնահեղութեան։ Երբ «հայրենիքի փրկարարները» հանդէս եկան իրենց պահանջներով, երիտասարդ–թիւրքերը զգացին, որ զօրքի մեծամասնութիւնը նոցա կողմն է, ու այդ պատճառով էլ դերազանցեցին ժամանակաւորապէս հեռանալ ասպարիզից և զօրքի մէջ գաղտնի քարոզչութեամբ զբաղւել։ Իսկ երբ այդ քարոզը յաջողութիւն ունեցաւ, նոցա հարկաւոր էր մարդկանց մի աննշան խմբակ միայն նորէն բարձրացրն Դուռը գրաւելու համար։ Իսկ մայրաքաղաքի և շրջանների ազգաբնակչութիւնը նոյնքան անտարբեր գտնւեց դէպ 1913 Թ. յունւարի 10–ի յեղաշրջումը, ինչպէս անտարբեր էր նա և դէպ «Հայրենիքի փրկարարների» 1912 Թ. յունիսեան յեղաշրջումը։

---

1) Ըստ առաջին քեամբ 1909 Թւի մարտի 31 Աբդիւլ–Համիդի ծեռքով սարքած յեղաշրջումի։

ՉՈՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

(1913 թւի յունւարի 10–ից—մինչեւ 1914 թւի յունիսի 29–ը)

Երիտասարդ–Թիւրքերի թշնամիների ժամանակաւոր սիրապետութիւնը ստիպեց առաջիններին՝ բանակում հոսանքների նման չաճախակի փոփոխութիւններից վերծ մնալու համար վճռական որոշումն ընդունել քաղաքական խուզարկութիւնների բարելաւ կազմակերպման ու իրենց թշնամի տարրերի նկատմամբ խստագոյն միջոցներ գործադրելով։ Երիտասարդ–Թրքական տէրութեան չորրորդ շրջանը—Նազիմ–փաշայի սպանութիւնից մինչև «Դերենի» ու «Բրնալաուի» Դարդանելում երևալը—հանդիսանում է, այդ պատճառով, որպէս երիտասարդ–թրական անաբեկման շրջան, այդ խօսքի ամենանշանաւորեալ իմաստով։ Այդ ամբողջ 18 ամիսները գունաւորւած են վերստին իշխանութեան հասած օլիգարխիայի չվերջացող ու անխնայ կռւով նոր ու նոր հակառակորդների հետ, որոնք ձգտում էին նրա տեղը բռնել,—մի կռւով, որն ընթանում էր տաճիկ ժողովրդի ահագին մեծամասնութեան խորն անտարբերութեան ներքոյ։

Ես այստեղ կարող եմ, ի հարկէ, բերել միայն այդ կռւի գլխաւոր մոմենտները։

Նազիմ–փաշայի սպանութիւնը չէր կարող նոր երկպառակութիւն չբերել բանակի մէջ, ուր նա ունէր շատ կողմնակիցներ, որոնք իսկոյն կազմեցին գաղտնի պինւորական միութիւն. դժգոհութիւնը սպանների մէջ նոր թնւնդ է տնում 1913 Թւի մայիսին Լոնդոնում ստորագրած հաշտութեան նախնական պայմաններից յետոյ,—երբ պարզւում է, որ երիտասարդ–թրքական յեղաշրջումն չերկեց Իդրինն ու Թիւրքիան նրա տէրը չդարձաւ։ Ինչպէս միշտ, ատորին հոգևորականութիւնը—սոֆտաներն ու խոջաները—անցնում է երիտասարդ–թիւրքերի թշնամիների կողմը։ Շերիֆ–փաշայի պարիզեան կոմիտէն ահագին դումարներ է զոհաբերում ու իր գործակալների միջոցով պայքարը շարունակում։ Վերջապէս, 1913 Թւի յունիսի 2–ին Նազիմ–փաշայի վրէժն է լուծւում.—սպանում է պինւորական նախարարութիւնից դէպ Դուռն ուղևորւելիս ինքնաշարժ գնացքում մեծ եպարքոս Մահմուդ–Շեֆկետը։

Մահմուդ–Շեֆկետ–փաշայի սպանութիւնն իսկական անաբեկումների ազդանշանն է դառնում։ Սկսւում են կախաղանները, մասսայական ձերբակալութիւններն ու կառավարութեան հակառակորդների աքսորները։ Այդ նոյն ժամանակ իշխանութիւնը

շարունակում է կենտրոնանալ աւելի փոքրաթիւ մարդկանց ձեռքերում.—նախարարութեան գլուխ է անցնում մէկը եւրոպական փայլով, բայց առանց որեւէ քաղաքական նշանակութեան, եդիպտական պրինց Սաիդ–Խալիլ–փաշան։ Երկրի բախտը գտնւում էր եռանդուն կաբրոնարիի ձեռքերում—ներքին գործոց նախարար Թալաաթ–բէյի, ծովային խորամանկ գեներալ Ջեմալ–փաշայի և Էնվերի։ Այդ շրջանի ազդեցիկ մարդկանց թւին կարելի է կցել և մերուսների պալատի նախագահ Խալիլին, ֆինանսների նախարար Ջավիդին և կոմիտէի գլխաւոր քարտուղարները Ցեքիի–բէյին ու Միդհատ Շուքրուն։ Իսկ ինքը կոմիտէն աստիճանաբար սկսում է այդ մի քանի փաշասէրնների հոգս գործիքը դառնալ, ինչպէս այդ առաջ պալատն էր անում։

Յուլիս ամսում բուլղարներից մաքրած Իդրինի գրաւումը, կատարած էնվերի կողմից հերոսութեան և այժի այնպիսի վատնումով, որպիսին հանդէս էր բերել նա Թիւրքիան ազատագրելու գործում 1908 թւին՝ դէպ սարերը փախստի դիմելով, վերջնականապէս շշմեցրեց երիտասարդ–թրքական օլիգարխներին։ Նոցա կամայականութիւնն էլ ոչնչով չէր տարբերւում Աբդիւլ-Համիդի բռնակալութիւնից։ 32 տարեկան էնվերը շուտով բռնեց սպանւած դինւորական նախարար Նազիմ–փաշայի տեղը, և էնվեր–Թալաաթ–Ջեմալեան երրորդութիւնն եռանդուն կերպով անցաւ երկիրն իրենց հակառակորդներից մաքրելուն։ 1914 թւի փետրուարի սկիզբներին արդէն հաշւում էր մինչև 1300–ի չափ արձակւած (անբարեյուսութեան համար) գեներալներ ու սպաներ։ Վարչութեան քիչ–շատ պատասխանատու պաշտօններում տեղաւորւած էին կառավարութեան կողմնակիցները. պալատի ընտրութիւնները տեղի ունեցան գերազանցօրէն վրդովեցուցիչ ու աղաղակող գեղծումների տակ. ընտրողների ցուցակներն էին մտցւում բացառապէս կառավարութեան կողմնակիցները։ Պաշտօնաթող գեներալները, սպաներն ու աստիճանաւորները կազմում են մի քանի գաղտնի յեղափոխական կոմիտէներ, բայց, չնորհիւ խուզարկու ոստիկանութեան, կազմւած Ջեմալ փաշայի ձեռքով մի այնպիսի ճարպիկութեամբ, որին, հաւանօրէն, կնախանձէր և ինքն Աբդիւլ-Համիդը, բացւում են այդ բոլոր դաւադրութիւնները ու դաւադիրները աքսորի ենթարկւում։ Այդ ժամանակաշրջանի վերջերին ընդդիմադիր տարրերը քշւած էին դէպ արտասահման—Պարիզ, Ազթենք, Սոլուն, Դահիրէ։

Կարելի էր մտածել, որ բալկանեան պատերազմի դժբախտ վախճանը կարող էր ստիպել երիտասարդ–թիւրքերին արմատապէս փոխել իրենց ներքին քաղաքականութիւնը.—հրաժարւել պանիսլամական նկրտումներից ու տաճկական ազդայնամոլութիւնից, տալ երկրին որոշ ապակենտրոնացում, իսկ այլացեղ ազգաբնակութեամբ որոշ շրջանների—ինքնօրէնութիւն. վերջապէս, վերակազմել կառավարչութիւնն եւրոպական ոգով։ Անաչառ պատմաբանն ստիպւած պիտի լինի, սակայն, ընդունել, որ երիտասարդ–թիւրքերը բոլորովին չօգտւեցին անցեալի դասերից։

Ճիշտ է, երկրի կատաբեալ տնտեսական քայքայումը ստիպում էր նոցա ձեռնամուխ լինել որոշ միջոցների, որոնք արտահանում որոշ չափով նոցա վարիչը պիտի բարձրացնէին։ Ֆինանսների նախարար Ջավիդ–բէյն տահմանադրութեան 36–րդ (մեր 87) յօդւածի կարգով անց է կացնում ցուրս օրէնք, որոնց նպատակն էր թիւրքական ռոդատիրութեան վրայ շերիաթով դրւած դարաւոր կապանքները վերցնել։ Այս օրէնքներով առաջին անգամ ներմուծւում է ճիշտ հողաշափութիւնն ու անշարժ կալքերի գնահատումը. վակուֆային հողերը ժառանգելու օրէնքն է տարածւում մինչև 12 աստիճան ազգականների վրայ, որը պատկանում էր առաջ ազգականներին մինչև 7 աստիճան. առաջին անգամ թոյլատրւում է իրաւական դէմքերին ձեռք բերել անշարժ կարողութիւն, և, վերջապէս, մուծւում է գրաւի սիստեմը։ Հրատարակւում են և մի քանի ուրիշ օրէնքներ, որոնց նպատակն էր երկրի տնտեսական բարօրութիւնը բարձրացնել։ Նորից հրաւիրւում են թիւրքական ծառայութեան մի շարք օտարազգի մասնագէտներ։ Ու այս է այն ամէնն ինչ այս շրջանի երիտասարդ-թրքական ռեժիմի երախտագիտութեան արժանի գործ կարելի է համարել։ Մնացած բոլոր բաներում երիտասարդ-թիւրքերի ներքին քաղաքականութիւնը կարելի է բնոյթագրել որպէս դարձ Աբդիւլ–Համիդի կառավարչական ձևերին։

Այսպէս, Թրակիայի այն մասի ուղղափառ ազգաբնակութիւնը, որը 1913 թւի յուլիսին նորից թիւրքերը գրաւել էին՝ ենթարկւում է մասամբ ջարդի, մասամբ վայրագ ճնշումների, որը սիստեմ է բռնականին ժողովրդի, գլխաւորապէս յոյներին, գաղթել երկրից։ Ցոյների ներտապդումները շուտով սկսւում են և Փոքր Ասիայում, ու միանգամայն պարզ կերպով ցոյց տալիս տաճիկ կառավարութեան նպատակները՝ առաջ բերել քրիստոնեաների մասնայական արտագաղթ, նոցա լքած հողերը Մակեդոնիայի տաճիկ փախստականներով բնակեցնելու համար։ Փոքր Ասիայի յոյն ազգաբնակութեան ճնշումներն 1914 թւի յունիսին առաջ են բերում, վերջապես, եւրոպական պետութիւնների միջամտութիւնը։ Դուռը սիրալիր կերպով առաջարկում է վեց դեսպանութիւններին ներկայացուցիչներին Փոքր Ասիայում «կարգը վերականգնելու» համար Թալաաթին ուղևորել նրա ձեռնարկած ճանապարհորդութեան ժամանակ։ Յանձնաժողովը գալիս է այն անխախտ համոզման,

որ ցաւալի անցքերն առաջ են բերել կառավարութիւնը ու «Միութեան և Յառաջադիմութեան» Կոմիտէի գործակալները։

Աւելի անհ կացութեան մէջ էր գտնւում Հայաստանը, մինչև որ Ռուսաստանն ստիպում է երիտասարդ–Թրքական կառավարութեան ատորդրել 1914 թ. յունւարի 26 համաձայնագիրը,— որով Հայաստանի կառավարութիւնը յանձնւում էր երկու օտար–երկրացի դիտեալ–ինսպեկտորներին, իսկ ազգարնակութեանն էլ տրւում էր որոշ առանձնաշնորհումներ ինքնավարութեան, դատաստանի, լեզւի ու գիւղական ծառայութեան սահմաններում։ Ու դեռ նոր էր սկսել պատերազմը Դեկեմբերի ու մեր մէջ, երբ Դուռը շտապում է de facto առ ոչինչ համարել բարենորոգութիւնները, յետ կանչելով գիտելալ–ինսպեկտորներին։

Աւելի քաղաքական խոհեմութեամբ չի արտայայտւում երիտասարդ–Թիւրքերի վերաբերումը դէպ արաբները։ 1913 թւի յունւարին սկսում է շարժում յօգուտ արաբական շրջանային ինքնավարութեան։ Երիտասարդ–Թիւրքերը փակում են բարենորոգութիւնների Կոմիտէն, բայց, վախենալով շարժումից, Պարիզում, «Միութեան և Յառաջադիմութեան» գիտելալ քարտուղար Միդհատ–Շուրի–բէյի միջոցով գաղտնի համաձայնութեան են գալիս արաբների հետ, որով նրանց մեծ զիջումներ են տրւում։ Իդրիսի գրաւումը բարձրացնում է, սակայն, երիտասարդ–Թիւրքերի տրամադրութիւնը մինչ այն աստիճան, որ նոքա շուտով հրաժարւում են այդ համաձայնութիւնից, և օգոստոսին, արդէն Պոլսում, նոր համաձայնութիւն են կապում, որով նախատեսի կերպով սեղմւում են արած զիջումները։—այնու ամենայնիւ արաբական նահանգների միջնակարգ և տոսրին դպրոցներում դասաւանդումը հարազատ լեզւով և նշանակելն այդ շրջանների պաշտօններում այն անձնաւորութիւններին, որոնք տիրապետում են արաբական լեզւին, ապահովւում են։ Բացի սրանից, արաբներին տրւում է նախարարութեան մէջ երեք պորտֆել և որոշ թիւ սենատորական ու մերուսական տեղերի։ Բայց անգամ և այդ համաձայնութիւնը չի յայտարարւում։ Կառավարութիւնը նրա միայն աննշան պատուիրներն է ազդարարում՝ արաբական լեզւի դորձածութեան, տեղում գիւղական ծառայութիւնը կրելուն և վակուֆները կառավարելու նկատմամբ։ Հասկանալի է, նման վերաբերումն առաջ է բերում արաբների մէջ ահագին դժգոհութիւն։

Վերջապէս, ըմբոստանում են երիտասարդ–Թիւրքերի դէմ և որոշ fրդական ցեղեր, ու մի ժամանակ կառավարութիւնը ստիպած է լինում լուրջ կերպով քարշ գալ Բիթլիսի fրդերի յետևից։ Մի խօսքով, ամենուրեք Թագաւորում էր մեծ խռովութիւն։

Շատ բնորոշ է, որ երիտասարդ–Թրքական կառավարութիւնը, նմանւելով Աբդիւլ–Համիդին, հենց որ որևէ շրջանի համար բարենորոգութիւնների հարց էր բարձրանում, իսկոյն հանուր Պետութեան բարենորոգութիւնների ծրագրով էր հանդէս գալիս, որն ապարդիւն էր դարձնում մանակի ուեֆորմները։ Այսպէս, 1913 թւի մարտի 15 Նահանգների կառավարչութեան նոր օրէնքն է տրւում, որը, հարկաւ, ամենևին էլ չի համապատասխանում ժողովրդի ինքնավարական կարիքներին. իսկ երբ Դուռն իմանում է, որ ռուսական դեսպանութիւնը հայկական բարենորոգութիւնների նախագիծ է պատրաստում ներկայացնելու Ենիքէօյում վեց դեսպանութիւնների յանձնաժողովին, նա երեք օրում պատրաստում է ամբողջ Կայսրութեան համար բարենորոգութիւնների իր նախագիծն, որը և ներկայացնում պետութիւններին,—ու մի այնպիսի անհեթեթ նախագիծ, որը յաճախ տարակուսանք էր առաջ բերում և նրա երկեալ պաշտպանի—վերյիշած Ենիքէօյեան յանձնաժողովի գերմանական դեսպանութեան ներկայացուցչի մէջ։

Երկրում նման անիշխանականութեան տիրապետութեան ժամանակ երիտասարդ–Թրքական պարագլուխները հնարաւոր էին գտնում, սակայն, իրենց թոյլ տալ և որոշ փարթամութիւն ի դէմս պանիսլամականութեան կամ, յամենայն դէպս, համաթիւրքութեան։ Իդրինի անսպասելի առումը, չնայած Եւրոպայի արգելքին, ըստ երևոյթին, գցում է այդ մարգկանց մի իւրատեսակ խաղախական պսիխոզայի մէջ։ Նոքա մոռացութեան են տալիս Մակեդոնիայի, Ալբանիայի ու Թրակիայի մի մասի կորուստն ու յիշում միայն Իդրինի յետգրաւումը։ Մուսուլմանական մոլեռանդութիւնն ու տաճկական ազգայնամոլութիւնը պատում են նոցա աչքերը կրկնակի մշուշով։ Պոլսում առաջ է գալիս «Մուսուլմանական միութեան» կազմակերպութիւնը և յարութիւն է առնում «Պանխալամական լուսաւորութեան ընկերութիւնը»։—Մեդինայի համալսարանի ծրագիրն է քննւում. գաղտնի գործակալներն ուղևորւում են դէպ Հնդկաստան ու Եգիպտոս։ Միւս կողմից պանթիւրերը հիմնում են միայն Ստամբուլում երեք ակումբ և սկսում են եռանդուն քարոզ յանուն Թիւրքական ցեղերի միացման։

Այսպիսով, Էնվերի, Թալաաթի և Ջեմալի Թագաւորութիւնն ամեն բանում կտրականապէս նմանւում էր Աբդիւլ–Համիդի պետութեան։ Կիրառուում միանգամայն անխուսափելի, գլխաւորապէս տնտեսական ու ֆինանսական բարենորոգութիւնների. բռնակալութիւն ու անարեկում՝ որպէս կառավարչութեան միակ սկզբունքներ. պանիսլամականութիւն՝ որպէս մէկն արտաքին քաղաքականութեան պատուանդաններից. և, վերջապէս արտօնութիւնների շնորհումն այլացեղ ազգարնակութեամբ շրջաններին, միայն

Եւրոպական պետութիւնների ճնշման տակ, ու այն էլ որոշակի տրամադրութեամբ՝ խոստացածն ի կատար չածել,—ահա հակառակ գծերը հաւիդեան ու բալաաթեան կարգերի։ Եւ երբ մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան 1914 թուի յունուարի 26-ին ռուս հաւատարմատար Կ. Ն. Դուլկովիչի հետ միասին ստորագրեց այն ակտը, որով Տաճկաստանը պարտաւորւում էր դիմել պետութիւններին հայկական բարենորոգութիւնների նոտայով, հին սուլթանը, որ դիտում էր այս տեսարանը Բոսֆորի ափում բիլլերբեյի դեղեցիկ պալատի պատուհաններից, կարող էր լիակատար իրաւունքով բացականչել.—«Ալլահը մեծ է. սրա համար չարժէր կառավարութիւններ փոխել»։

Ահա թալաաթ-հաւիդեան «կայսրութեան» այդ անձն ու քայքայւող մասսայի մէջ են խոթում իրենց ցուռկները գերմանական ղինւորական «Գերհեն» ու «Բրեսլաու» նաւերը։

II. ԵՐԻՏԱՍԱՐԴ-ԹՒՐՔԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ։

Արեւմտեան բոլոր կուլտուրաներից տաճկական կեանքի վրայ ազդել է միայն ֆրանսիական կուլտուրան։ Ֆրանսիական հոգևոր ու աշխարհիկ դպրոցների ցանցը, վաղուց ի վեր տարածած Թիւրքիայում, ֆրանսիական արդիւնաբերական ու երկաթուղագծային ձեռնարկութիւնների ահագին թիւ, վերջապէս, աւանդական ֆրանս—տաճկական քաղաքական բարեկամութիւնն ու մինչև անգամ զէնքի եղբայրութիւնը Ղրիմի պատերազմի ժամանակ—այդ բոլոր հանգամանքներն ուղղում էին ամեն քիչ-շատ մտածող տաճկի հայեացքը դէպ Ֆրանսիա և սովրում էին աւել կամ պակաս չափերով ծանօթանալ նրա լեզուի հետ։ Ֆրանսիական կուլտուրական ազդեցութիւնը միակն էր, որ կռւում էր Թիւրքիայում չերիաթի մութ ոյժերի հետ։

Առանձնապէս իրենց մօտ էին զգում Ֆրանսիային, ի հարկէ, տաճիկ ազատականները. և երբ սկսւում է գաղտնի երիտասարդ-Թրքական շարժումը, քաղաքական էմիգրացիան ուղևորւում է ուղիղ դէպ այդ երկիրը. Պարիզում հրատարակւում էր Ահմեդ-Ռիզայի խմբագրութեամբ երիտասարդ-Թրքական Մեշվերեթ թերթը. դրա հետ միասին ֆրանսիական քաղաքական տրակտատները, խստօրէն արգելւած Աբդիւլ-Համիդից, յամենայն դէպս ներմուծւում էին Թիւրքիա ու զարթեցնում արևելեան ծոյլ միտքը։

Մեծ հմայքով էր օգտւում մշտապէս Տաճկաստանում և

Անգլիայի անունը, բայց բացառապէս որպէս պետութեան ամբողջութեան պաշտպանիչ. Անգլիան Թիւրքիայում կուլտուրական ազդեցութիւն անապայմանօրէն չի ունեցել։ Իսկ տաճիկ ազատամիտները Ֆրանսիայի հաւատար երկրպագում էին և նրան, որպէս բարձր քաղաքական իդէալների կրողի։

Նման պայմաններում Աբդիւլ-Համիդի գերմանասիրական քաղաքականութիւնը չէր կարող համակրութեան հանդիպել տաճիկ աւելի կիրթ հասարակութեան կողմից, որը անհաշտ էր բռնակալական կարգերին։ Ի հարկէ, գերման լեզուն ու գերման «քաղաքակրթութիւնն» ակամայից պատւաստում էին Գերմանիա ուղարկած տաճիկ սպաներին, կամ պոլսական զինւորական դպրոցի իւնկերներին, որոնք զիտութիւնների կուրսը լսում էին գերման մարզիչների մօտ։ Բայց զինւորական շրջաններից դուրս գերմանական ազդեցութիւնը չէր տարածւում։ Ճիշտ է, գերմանացիք վերջին տասնամեակին Տաճկաստանում քիչ գերմանական դպրոցներ չեն բացել, առաւելապէս Պաղեստինում, բայց թիւրքերը դժկամակութեամբ էին յաճախում այդ դպրոցները։ Ընդհանրապէս պիտի ասել, որ գերմանական բնաւորութիւնն իւր խնայասիրութեամբ, մանրակրկիտութեամբ ու կոպտութեամբ չէր կարող տաճկի սրտին մօտ լինել, ու բոլորին է յայտնի, որ տաճիկ զինւորներն ամբողջ հոգով ատում էին իրենց գերմանացի մարզիչներին։ Այսպիսով, Աբդիւլ-Համիդի ժամանակ գերման բաղաքակրթութեան տաճկական կեանքը թափանցելու մասին խօսք լինել չի կարող [1]։ Իսկ տաճկական հոգերը գերմանացիներով բնակեցնելը, Բաղդադեան երկաթուղու և ուրիշ շահաւէտ մենաշնորհների նոցա ձիջելն, ընդհանրապէս Գերմանիայի տնտեսական մուտքը Թիւրքիա կատարւում էր, ի հարկէ, ոչ յօգուտ տաճիկ ժողովրդի, այլ միայն Աբդիւլ-Համիդի։ Վիլհելմի հետ ունեցած անձնական տեսակցութիւնից յետոյ, որը չխորշից երկու անգամ երկրպագութեան գնալ սուլթանին, այս վերջինը լաւ գիտէր,—որ ոչ մի տեղ նա չի հանդիպի այնպիսի ուժեղ քաղաքական պաշտպանութեան, որպիսին նա կգտնի գերմանական կայսեր մօտ, ի հարկէ, քանի ինքը կիշատաբի նրա բոլոր ցանկութիւնները տնտեսական շրջանում։ Այսպիսով, առաջացաւ անձնական դաշնակցութիւնը ժամանակակից աշխարհի երկու խոշոր բռնակալների։

Նման պայմանների տակ աւելորդ է երկարօրէն կանգ առնել երիտասարդ-Թիւրքերի դէպ գերմանացիները տածած զգացմունք-

---

[1]) Ես ինչ եմ տալիս ինձ յենւել իմ սեփական փորձին.—իմ Թիւրքիայում անցկացրած 16 տարիների ընթացքում ես չհանդիպեցի Թիւրքերի մէջ եւ ոչ մի հատ ոչ-գիւնւորականի, որը խօսէր գերմաներէն։

ների վրայ նոցա պատմութեան մինչ—յեղափոխական շրջանում։ Ու այդ զգացմունքներն իրենց մասին յայտնեցին հէնց որ Աբդուլ-Համիդի վրայ առաջին յաղթանակը տարուեց ու սահմանադրութիւնն ազդարարուեց։

Գերմանիայի և Աւստրիայի յայտնի կողմնակից մեծ եալտքոս Ֆերիդ-փաշայի հրաժարականը Թիւրքիայում ունեցած գերմանական քաղաքականութեանը տուած առաջին հարուածն էր։ Ֆերիդ-փաշան իւր հետ տարաւ աւստրօ-գերման-տաճկական դաշնակցութեան շուրջը եղած բոլոր երազները, ըստ մի քանի տեղեկութիւնների, բաւականին մօտ իրականալուս Համաձայն այդ աղբիւրների, մեր բարի միւրցշտեդեան դաշնակից Աւստրիան 1908 թուին գաղտնի պայման էր կնքել Թիւրքիայի հետ՝ որով նա պարտաւորում էր պահել statu quo-ն Մակեդոնիայում և թոյլ տալ այդ շրջանում Սուլթանի գերագոյն իրաւունքների վերականգնման։ Ընդ նոյն պայմանի Աւստրիան նոյնպէս, իբր թէ, պարտաւորուել է ստիպել Սերբիային ու Չերնոգորիային չէզոքութիւն պահպանել Թիւրքիայի Բուլղարիայի հետ ունեցած ընդհարման դէպքում. իսկ Տաճկաստանը պարտաւորուել է արգելք դնել Սանջակում սերբական քարոզին և զինել բոլոր մենաշնորհները Սալոնիկեան և Ուսքիւբեան նահանգներում միայն աւստրիական և հունգարական հպատակներին։

Համաձայն նոյն այդ տեղեկութիւնների, Թիւրքիայի նոր տէրերը չեն վաւերացրել այդ պայմանագիրը։ Ֆերիդին փոխարինում է յայտնի անգլիասէր Ռեամիլ-փաշան։ Իսկ նոր անգլիական դեսպան Sir Gerald Lowther, նոր եկած ժամանակ դուրս հանուած գնացքից ձեռքերի վրայ, սուլթանի մօտ ունեցած տեսակցութեան ժամանակ ընդգծում է Անգլիայի դէպ վերանորոգուած Թիւրքիան տածած յատուկ զգացմունքները։ Էլ աւելի ջերմ զգացմունքների փոխանակութիւն տեղի է ունենում երիտասարդ-Թիւրքերի և Ֆրանսիական կառավարութեան ու հասարակութեան մէջ։ Սակայն, բացի այս, տեղի է ունենում մի բոլորովին անսպասելի երևոյթ—մտերմութիւնը երիտասարդ Թիւրքիայի իւր դարաւոր թշնամի—Ռուսաստանի հետ։

Այդ մտերմութիւնը ստեղծուեց ոչ միայն շնորհիւ այն բանի, որ Ռուսաստանն Անգլիայի ու Ֆրանսիայի բարեկամն էր։ Շատ ուժեղ տպաւորութիւն թողեց երիտասարդ-Թիւրքերի վրայ Ա. Պ. Իզվոլսկու ջրջաբերականը, որով ապահովւում էր երիտասարդ Թիւրքիային Ռուսաստանի համակրանքն ու մինչև անգամ պաշտպանութիւնը,—մի անխուսափելի պայմանով միայն՝ որ Թիւրքիան կիրագործի իւր խոստացած բարենորոգութիւններն ու պետութեան քրիստոնեայ ազգաբնակութեան համար նոր շրջան կբանայ։ Ոչ

պակաս բարեհաճ տրամադրութիւն առաջացրեց Տաճկաստանում 1908 թ. դեկտեմբերի 12-ին մեր արտաքին գործոց նախարարի Պետական Դումայում արտասանած ճառը [1]։

Ռուս-տաճկական մտերմութեան գաղափարը կառավարչական շրջաններից հասարակական լայն խաւերին անցաւ ու անդրադարձաւ ռուս և տաճիկ մամուլի մի շարք հետաքրքիր յօդուածների վրայ։ Սկզբում Իկդամը (ի պատասխան Новое Время-ի յօդուածի), իսկ յետոյ, մի շարք տատանումներից յետոյ, և Իկդամի քաղաքական հակառակորդները—«Միութեան և Յառաջադիմութեան» կոմիտէի օրգանները՝ Թանին և Շուրայի—Ումմէթը, սկսում են ապացուցել անհրաժեշտութիւնը վերակազմած Ռուսաստանի և երիտասարդ Թիւրքիայի համար մոռանալ հին հաշիւները և բանալ նոր շրջան բարի-դրացիական յարաբերութիւնների համար. ընդ ամին նոցա կատարելապէս ընդունում էին և ռուսական՝ քրիստոնեաների և մուսուլմանների իրաւահաւասարութեան պահանջը, որպէս երիտասարդ-Թրքական ծրագրից բղխող պահանջ։ Ցիշատակած տաճիկ թերթերը սկսում են նոյնպէս համակրութեամբ արտայայտել ռուսական մամուլի կոչին՝ մէկտեղ կուի պատրաստուել ընդդէմ Աւստրիայի և Գերմանիայի և անգամ իւր գոհունակութիւնն յայտնել բալկանեան դաշնակցութեան գաղափարի առթիւ, որի մէջ և Տաճկաստանը պիտի մտնէր [2]։

---

1) «Այդ երեք պետութիւնները (Բուլղարիա, Սերբիա, Չերնոգորիա) պէտք է խելամուտ լինեն իրենց մէջ ստեղծելիք բարոյական ու քաղաքական միութեան անհրաժեշտութեան գիտակցութեանը։ Մեր նպատակը պիտի լինի—ի մի բերել այդ պետութիւններն ու միացնել նոցա Թիւրքիայի հետ իրենց ազգային ու տնտեսական անկախութեան պաշտպանութեան մի ընդհանուր դաշտիարով»։

2) Բերենք մի քանի հետաքրքիր կտորներ այդ ժամանակւայ տաճկական պարբերական մամուլի յօդուածներից։

Իկդամը 1908 թ. սեպտեմբերի 22-ին։

«Новое Время-ն մատնանշում է, հաստատելով մեր նախկին նկատողութիւնները, թէ Պետերբուրգի կառավարութեան բարեացակամ վերաբերմունքը իրականութեան է արտայայտել, այսինքն մակեդոնական բարենորոգութիւնների պահանջների յետ վերցնելուին եւ ռուս ժանդարմական սպաների յետ կանչելու միջոցով։ Բայց յետոյ լրագիրը նկատում է.—հանդէպ օրէնքի Թիւրքիան սլաւոնների եւ մուսուլմանների իրաւահաւասարութեան սկզբունքն է առաջադրել եւ Ռուսաստանն իրեն բաւարարւած կզգայ, եթէ այդ խոստումն իրականանայ գործնականում։

«Ինչ վերաբերում է մեզ, մենք մեր հերթին մեր հաւանութիւնն ենք տալիս այդ խօսքերին, այլ եւ նոցա աւելի մեծ նշանակութիւն ենք վերա-

Երիտասարդ-Թիւրքերի նման. վերաբերումը դէպ երբեակ Համաձայնութեան պետութիւնները նոցա ազատութեան մեղրամիաներին բացատրւում էր, ի հարկէ, ոչ միայն դաղափարախօսութեամբ, այլ ամենից առաջ նրանով,—որ Աւստրիան ու նրա թիկունքում կանգնած Գերմանիան լցրել էին այդ մեղրի մէջ բաւական քանակութեամբ ձիւթ թէ Բոսնիայի ու Հերցեգովինայի միացումով, թէ նոյնպէս և Բուլղարիայի անկախութիւնն յայտարարելով, որ երիտասարդ-Թիւրքերը վերագրում էին գլխաւորապէս Աւստրիայի ոտնձգութիւններին։

Իսկ այդ նոյն ժամանակ Ռուսաստանը հանդէս է գալիս իբր ֆինանսական առաջարկով, կանխելով Թիւրքիայի և Բուլղարիայի մէջ տեղի ունենալիք ընդհարումը.—այն է՝ ռուսական կառավարութիւնը հնարաւորութիւն է տալիս Սոֆիայի կաբինետին առանց անյապաղ ծախսերի վերջացնել բոլոր դրամական հաշիւները Թիւրքիայի հետ. համաձայն ռուսական առաջարկի՝ Ռուսաստանին ունեցած տաճկական պարտքի մեծ մասը, բաղկացած 1877 թւի կռւի պատերազմական տուգանքի դեռ չմուծած միանուագ դումարներից, փոխանցւում է Բուլղարիային։

Այդ օրերին, թւում էր, թէ Թիւրքիայի վրայ ունեցած աւստրօ-գերմանական ազդեցութեանը վերջ է տրւում։ Աւստրական ապրանքները ամենաանխնայ ձևով բոյկոտի են ենթարկւում դրեթէ ողջ

դրւում ու հրատիրում ենք մեր բոլոր հայրենակիցների ուշադրութիւնը նրանց վրայ։ Թէեւ այս նոյնն ասել ենք մենք չէ թէ մի անգամ, բայց, դժբախտաբար, կրկնելու կարիքն է դգացւում։

«Պատմութեան մէջ դեռ չպատահած այն երեւոյթը, թէ ինչպէս ամբողջ Եւրոպան պուխ առած Ռուսաստանին դործունէութեան նման աղատութիւն է մեզ վերապահում՝ միայն մի էական պայման յարդելն ի նկատի ունի,—որ մենք մօտ ապագայում կիրականացնենք աղատութիւնը, հաւասարութիւնն ու եղբայրութիւնը, որոնք մենք խոստացել ենք բոլոր օսմանեան հպատակներին առանց ցեղի ու հաւատի խտրութեան։ Մենք չպիտի, ինչպէս այդ առաջ է եղել, Աղթի վրայ գրենք ու գործի մէջ խախտենք։ Թէ չէ, նորէն արեւելեան հարցը յարութիւն կառնի։ Նորէն Ռուսաստանը Եւրոպայի հետ միասին կսկսեն խառնել մեր բոլոր ներքին ու արտաքին գործին ու մեր հանգիստը վրդովել։ Ինչո՞ւ ձշմարտութիւնը ծագցնենք։ Ինչո՞ւ տեսնենք միայն առաւելութիւնները մեր այսօրւայ դրութեան ու փակենք աչքերս նրա վտանգների առաջ։

Իկդամը 1908 թւի սեպտեմբերի 25-ից.—«Մենք մեծ հաճոյքով ենք տպագրում ռուսական մամուլի կարծիքները ներկայ դրութեան մասին։ Մեր խօսքերը հաստատութիւն դտան։ Ռուսաստանը, Անգլիայի նման, հաւանութիւն չի տալիս այն իրաւախախտումներին, որոնք Աւստրիան ու

կայսրութեան մէջ. բազմամարդ հրապարակական ժողովներում անխծւում է Աւստրիայի անունը, իսկ երբեակ Համաձայնութեան դեսպանատների առաջ համակրութեան ցոյցեր են տեղի ունենում, և Գոլիս գտնւող ֆրանսիական ու անգլիական քաղաքական դործիչները, նոյնպէս և ռուսական, ինչպէս, օրինակ, Ա. Ի. Գուչկովը, մեծարւում են երիտասարդ-Թիւրքերի կողմից (1909 թ. յունւար)։

Բայց այդ բոլորը երկար չի շարունակւում։

Առաջին ճեղքւածքը երբեակ համաձայնութեան ու Թիւրքիայի մէջ առաջացող մտերմութեան մէջ տալիս է անգլիական մեծ եպարխոս Ռեամիլ-փաշայի ակամայ հրաժարականը, որն առաջ է բերում Անգլիայում ուժեղ սառնութիւն դէպ երիտասարդ-Թիւրքերը։ Միւս կողմից, 1909 թւի փետրւարի 26-ին բռնկիական հարցի առթիւ տեղի ունեցած համաձայնութիւնը Աւստրիայի հետ, Դռան ու Աւստրիայի մէջ սերբիական վտանգի հողի վրայ մի որոշ դիպլոմատերմութեան հողն է ստեղծում։ Յամենայն դէպս երիտասարդ-Թրքական տիրապետութեան առաջին շրջանի վերջում, այսինքն 1909 թւի մարտի 31 յեղաշրջման նախօրեակին, եռեակ դաշնակցութեան դրութիւնը Գոլսում շատ երերուն էր, ու մասնաւորապէս Գերմանիան չկարողացաւ վերադարձնել իրեն երիտասարդ-Թրքական յեղափոխութեան հետեւանքով կորցրած դիրքերը։ Այդ պատճառով մարտի 31 յեղափոխական յեղաշրջումն ընդունւեց դերմա-

---

Բուլղարիան են կատարել, չի արդարացնում այդ քայլերն ոչ նոցա քաղաքական անհրաժեշտութեամբ եւ ոչ էլ-հասարակական կարծիքի ճնշումով։ Այդ մեզ համար ուրախալի լուր է, որը գալիս է ամրապնդելու մեր սկզբից արտայայտած այն միտքը՝ թէ հարցը պիտի լուծւի միջազդային կոնֆերանսի ճանապարհով։

«Օրը-օրին աւելի ակնբաղխ է դառնում, որ մեր ռուս բարեկամները ցուցահանում են հազար անդամ աւելի բարեացակամութիւն ու համակրութիւն դէպ օսմանեան սահմանադրութիւնը, քան աւստրիացիներն ու դերմանացիները։ Հետեւապէս, ինչպէս արդէն որոշ չափով պարզել է Новое Время-ի ու մեր մէջ տեղի ունեցած մտքերի փոխանակութիւնից, ռուսական քաղաքականութեան մէջ արդէն առաջացել է մի երջանիկ փոփոխութիւն դէպ Թիւրքիան եւ սրանից յետոյ մեր հմտութիւնից կախւած կլինի այլեւս, թէ ինչպէս կօդտւենք մենք նրանից»։

Նուռայի-Հումմերը 1908 թւի հոկտեմբերի 28-ից.—«Ռուսաստանի եւ Թիւրքիայի քաղաքական համաձայնութեան դաղափարը ծնունդ է առել առաջին անդամ ռուսական մամուլում եւ ռուսական հասարակական կարծիքի մէջ։ Այդ միտքը սկզբում արձարձւում է արմատական եւ աղատամիտ շրջաններում եւ մամուլի օրդաններում։ Բայց աստիճանաբար նա տարածւում ու ընդունւում է մնացած կուսակցութիւնների կողմից։

նական զեսպանատան և սամբուլեան գերմանացիների կողմից վատ քօղարկուած գոհունակութեան զգացմունքով։

Բայց միանգամայն անսպասելիօրէն դրութիւնը փոխուեց յօգուտ Գերմանիայի չէ թէ յետադիմական յեղաշրջումից յետոյ, այլ հենց՝ որ Աբդիւլ–Համիդը գահընկէց արեց։ Դրաւողական բանակի գլուխն էր անցել ու երիտասարդ Թիւրքիայի ժամանակաւոր դիկտատորը դարձել Գերմանիայի փորձած բարեկամ Մահմուդ–Շեֆկետ–փաշան։ Եւ իսկոյն ամբողջ պաշտօնական ու կիսապաշտօն Գերմանիան մի արտասովոր ցինիզմով սկսում է բարձրաձայն աղաղակել, թէ նա միշտ էլ համակրել է ողջ տաճիկ ազնւաբարոյ աղդութեան ու երբէք Աբդիւլ–Համիդին։ Եռեակ Դաշնակցութեան դիւանագիտական դրութիւնն աւելի ևս է ամրապնդւում, երբ 1910 թւի յունւարին մեծ եպարքոս Հիլմի–փաշայի տեղը բռնում է գերմանական դեսպան, բարոն Մարշալ–ֆոն–Բիբերշտեյնի անձնական բարեկամ Մակքի–փաշան։

Անկախ այդ զուտ արտաքին պահանջներից, կային և մի շարք ուրիշ ներքին հանգամանքներ, որոնք պայմանաւորեցին երիտասարդ–թրքական տիրապետութեան երկրորդ շրջանում Թիւրքիայի նոր հակումն երբեակ դաշնակցութեան կողմը։

Այդ պատճառներից մէկն էր չարաբաստ կրետական հարցը։ Սահմանադրական շրջանի սկզբներին կղզու վրայ արդէն տաճկա-

---

Այսօր այդ միտքն, այս ու այն դունաւորումներով ընդունւում է բոլորի կողմից՝ սկսած սահմանադրական Русскія Вѣдомости-ից ու վերջացրած կիսապաշտօնական Новое Время-ով։ Այդ ցոյց է տալիս, որ ամենաազատամիտ ու ամենապահպանողական ռուսները նոյն մտքերն են ցուցադրում դէպ Թիւրքիայի հետ ունենալիք համաձայնութիւնը։ Ռուսների նման առաջարկը շատ սիրտ ուրախացնի տաճկական հասարակական կարծիքը, որին յայտնի է, որ միայն ուժեղ ժողովուրդների բարեկամութիւնն են հայցում։ Ու եթէ Պետերբուրգի կաբինետը համաձայնութիւն կառաջարկի երկու երկրների մէջ եղած անկեզծ յարաբերութիւններն ամուր հաստատելու համար, այդ դէպքում պիտի մտածել, որ նման առաջարկը մեծ ուրախութեամբ պիտի ընդունւի Դուռն կողմից։ Մեր կարծիքով, ներկայ յարաբերութիւնները չեն բացատրում քաղաքական համաձայնութիւն կապելու հնարաւորութիւնը... Պորտ–Արտուրի եւ Յուսիմի օրերից Պետերբուրգի արտաքին քաղաքականութիւնը դարձել է, իրօք, խաղաղասէր։ Դրան ապացոյց ծառայում են.—համաձայնութիւնների քաղաքականութիւնն Անգլիայի հետ Հնդկաստանի, աֆղանեան սահմանի ու պարսկական ազդեցութեան շրջանների նկատմամբ. օրերս Սերբիային տուած իմաստուն խորհուրդները, այն փաստը, վերջապէս, որ ռուսական մամուլն ու ռուսական հասարակական կարծիքը խորհում են մեզ հետ ունենալիք համաձայ-

կան զօրքերը չկային, սոցա փոխարինել էին չորս հովանաւորող–պետութիւնների (Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի) գնդերը, և սուլթանի իշխանութիւնը միայն անուանապէս գոյութիւն ունէր։ Այնու ամենայնիւ, տաճիկ հասարակական կարծիքը սուլթանի նման պարզ–չինծու իրաւունքների ամենաթեթև խախտման վերաբերութեամբ էր աւելի մեծ դիւրագրգռութեամբ ու նախանձախնդրութեամբ, քան Բուլղարիայի ու Բոսնիայի վրայ ունեցած տաճկական իրաւունքների կորստին։ Այսպիսով, չորս պետութիւնները ստիպած էին երերալու կրետացիների Յունաստանի հետ ձուլելու միանգամայն բնական ձգտումների և երիտասարդ–Թիւրքերի հիւանդոտ դիւրագրգռ ինքնասիրութեան մէջ։ Իսկ Գերմանիան ու Աւստրիան, որոնք կրետական հարցի առթիւ վազուց էին դուրս եկել մեծ պետութիւնների համերգից, շարունակում էին մնալ չեզոք դիտողներ և ստեղծած դրութիւնից օգտուելու ափերը բաց չէին թողնում ձեռքերից։ Բոսնիական ճգնաժամին կրետական ժողովի քրիստոնեայ անդամներն երդւում են յունական թագաւորին։ Առաւել ևս 1909 թւի յունիսի հովանաւորող–պետութիւնների կողմից իրենց զնդերի կղզուց յետ կանչելու փաստն երիտասարդ–Թիւրքերի մէջ մեծ ցաւ է առաջ բերում։ 1910 թւին կրետական ժողովի կողմից երկրորդ անգամ յունական թագաւորին բերած երդումը, պահանջը—որ այդ

նութեան հնարաւորութիւնն եւ համակրութեամբ են վերաբերում դէպ այդ համաձայնութիւնը։ Հարեան կայսրութեան հետ, որն այդքան դրականօրէն նման խաղաղ մտածելակերպ է ցուցադրում, կարելի է համաձայնութիւն կնքել՝ Թիւրքիայի արեւելեան սահմանների, ռումելիական բարենորոգութիւնների, մշջազգային դաշնադրութիւնների եւ նեղուցների նկրկայ դրութեան պահպանման վերաբերեալ։ Տաճկական կառավարութեան իսկական քազաքականութիւնը կայանում է քազաքակրթութեան յառաջադիմութեան եւ ժողովրդական իրաւունքների պաշտպանութեան խոսք ապահովման մէջ։ Ներկայիս պետական կառավարութիւնը պատրաստ է բարեկամութեան ու համաձայնութեան ծոր մեկնելու նրան, ով կցանկանայ աջակցել նրա այդ նպատակին հասնելուն։ Իսկ Թիւրքերն էլ իրենց հերթին պատրաստ են իսկական եւ անկեզծ սիրով պատասխանելու իրենց ցոյց տւած ամեն մի բարի մտադրութեան։

Թանիր 1908 թւի նոյեմբերի 24–ից.

«... Ռուս քաղաքական շրջաններում կարծում են, որ հասել է ժամանակը միջոցներ խորհելու Բալկաններում աւստրիական քաղաքականութեան ու նրա յետեւը ծագն ող պանգերմանական ոտնձգութիւնների առաջ արգելքներ դնելու։ Այնտեղ կարծում են, թէ հասել է ժամանակը հրաժեշտը տալու անցեալին եւ ընտրելու մի այնպիսի ճանապարհ, որն

երդումը բերւի ժողովի մուսուլման անդամների կողմից և մուսուլման դատաւորներից (զադիներից), կրեատցիներից յունական պարլամենտի պատգամաւորների ընտրութիւնը—այս բոլոր փաստերը հզօրապէս զրգռում են երիտասարդ-Թիւրքերին և բերում յունական առևտրի ուժեղ բոյկոտին ամբողջ պետութեան մէջ։ Սրա հետ միասին տաճկական մամուլում աւելի ուժեղ է հնչում գայրոյթի լաթը հովանաւորող-պետութիւնների դէմ, առաջին հերթին ընդդէմ Անգլիայի, չնայած այն բանին, որ այդ պետութիւնները իրենց հաւանութիւնն են մերժել կրեատցիների բոլոր քայլերին ու անդամ ձերբակալել են Աֆէնդ ուղարկած նոցա պատգամաւորներին։ Թիւրքերը պահանջում էին՝ պաշտօնապէս ճանաչել իրենց գերիշխանութիւնը կղզու վրայ, որի մասին ոչինչ չկար կրետական սահմանադրութեան մէջ, և, չատանալով այդ, լցւում էին առելութեամբ դէպ հովանաւորող-պետութիւնները։

Ոչ պակաս շահագէտ զրութիւն, քան կրետական հարցումն էր, Գերմանիան ու Աւստրիան, իրերի բերմամբ, բռնել էին Թիւրքիայի համար անհամեմատ աւելի կարևոր՝ մակեդոնական ու բալկանեան հարցերում։ Ռուսաստանը շնորհիւ իւր պատմական առաքելութեան, միշտ ստիպւած էր իւր դէպ Թիւրքիան ունեցած բարեկամական զգացմունքները պայմանաւորել՝ տաճկական քաղաքականութեան դէպ մակեդոնական սլաւոնները ու բալկանեան

ապագայում հաշտ լինէր երկու երկրների (Ռուսաստանի եւ Թիւրքիայի) շահերին։ Եթէ ռուս քաղաքագէտներին յաջողւի համաձայնեցնել երկու պետութիւնների քաղաքականութիւնն մի այնպիսի ճանապարհով, որը հաճապատասխանէր նոցա յոյսերին ու իդէալներին, այդ դէպքում նորա մասնակցութիւնը նոցա յոյսերին ու իդէալներին, այդ դէպքում նորա մասնակցութիւնը ապահոված կլինէին իրենց համար ապագային մեծ յաջողութիւն եւ փրկած եւրոպական հաւասարակշռութիւնը լուրջ վտանգից»։

Շուրայի—Հումմեր 1908 թւի նոյեմբերի 21-ից։

«Новое Время»-ն տեսնում է, որ Թիւրքիան վերածնւում է։ Նա ասում է, որ յարաբերութիւնները Թիւրքիայի եւ բալկանեան սլաւոնների մէջ արմատապէս կփոխւեն եւ որ նոցա շահերի զուգորդման շնորհիւ նորա բոլորը կարող են մի ամբողջութիւն կազմել։—Փորր պետութիւնները միշտ «մեծ երազներ» են ունենում, վտանգաւոր են իրենց համար եւ են մեծ պետութիւնների հանգիստը խանգարող... Եթէ բալկանեան կայսրութիւնները կհրաժարւեն այդ «մեծ երազներից», այդ դէպքում Թիւրքիան պատրաստ է նոցա իւր չորս կողմը համախմբել ու նոցա հետ դաշնակցութեան մէջ լինել...

«Ինչ վերաբերում է բարեկամական համաձայնութեան եւ դաշնակցութեան Ռուսաստանի հետ, այս դէպքում Տաճկաստանը, որի քաղաքականութիւնն ու վարչութիւնը վերանորոգման են ենթարկւում, աւելի քան

սլաւոնական պետութիւններն ունեցած բարեացակամութեան ապահովում։ Իսկ Գերմանիան ու Աւստրիան, ազատ նման կապանքներից, կարող էին, կարիքն եղած դէպքում, Դռան բարեկամութիւնը ձեռք բերել—Մակեդոնիայում տաճկական կամայականութեան թոյլատրութեան գնով կամ անգամ մակեդոնացիների ընական պաշտպանների—Սերբիայի և Բուլղարիայի դէմ՝ Թիւրքիայի հետ միասին հանդէս գալով։ Նման զրութիւնը բաւականին հեշտացնում էր աւստրօ-գերմանական դիւանագիտութեան խարդախութիւնները հանդէպ Ռուսաստանի։

Բալկանեան բլոկի կամ դաշնակցութեան ռուսական գաղափարը, որի մէջ պիտի մտնէր և Թիւրքիան, սահմանադրական շրջանի սկզբներին տաճիկ մամուլի կողմից ընդունւել էր համակրութեամբ, սակայն, շատ յաճախ այդ համակրութեան մէջ արտացոլում էր և որոշ անվստահութիւն դէպի մեզ։ 1910 թւի Ֆերդինանդ Բագաւորի այցը Պետրոգրադ ու նրան այնտեղ ցոյց տւած սիրալիր ընդունելութիւնը, բաւականին անհանգստացնում են Թիւրքերին. հասկանալի է, որ աւստրիական ու գերմանական կառավարութիւնները շատագում են աւելի ուժեղացնել այդ յուզմունքը, հրատարակելով Communiqué Բերլինում տեղի ունեցած կանցլեր Բետման—Հոլվեգի տեսակցութեան մասին կոմս Էրենտալի հետ, որի մէջ ընդգծւում էր նոցա համակրութիւնը Մօտիկ Արե-

---

երը եւ է կարիք է զգում խաղաղութեան։ Հարկաւոր է վերսկսել բարեկամական յարաբերութիւնները բոլոր պետութիւնների եւ առաւելապէս ռուս հարեւանի հետ։ Новое Время-ի խօսքերը։—«Թէ ինչպէս Ռուսաստանը բարեկամական համաձայնութիւն է կնքել իւր դարաւոր Թշնամու, Անգլիայի հետ, ճիշտ նոյնպէս էլ նա կարող է դաշնակցութեան մէջ մտնել եւ նման պայմանների տակ գտնւող Թիւրքիայի հետ», համապատասխանում է, մեր խորը համոզմամբ, երկու պետութիւնների շահերին։—Ռուսաստանն, ինչպէս եւ մենք, կարիք է զգում խաղաղութեան։ Երկու կայսրութիւնների մէջ կնքւելիք դաշնակցութիւնը բղխում է հետեւեալ պարագաներից։—երկու հողմերն էլ կարիք են զգում խաղաղութեան։ Ռուսաստանն ու Թիւրքիան—հարեւաններ են։ Ռուսաստանն ունի մուսուլման հպատակներ, իսկ մենք—սլաւոն։

«Հնում Անգլիան, Ֆրանսիան եւ Թիւրքիան կողք-կողքի կռիւ են մղել Ռուսիայի դէմ։ Իսկ այսօր Ռուսաստանը բարեկամական համաձայնութեան մէջ է Անգլիայի հետ, իսկ Ֆրանսիայի հետ նրան օղակում են դաշնակցական կապերը։ Ինչպէս մենք Ղրիմի պատերազմի ժամանակ այդ մեծ պետութիւնների շարքերում կուել ենք Ռուսաստանի դէմ, այդպէս եւ այժմ, նոցա հետ մէկտեղ, պիտի լինենք դաշնակիցները Ռուսաստանի։

«Մի գերմանացի գիտնական ասել է։—առաջ անցնելու համար,

ելքում statu quo-ն պահպանելու գաղափարին և Թիւրքիայի ներքին կեանքն ամրացնելուն, կարծես թէ մէկին ու թէ միւսին վտանգ էր սպառնում։ Ռուս դիւանագիտութեանը յաջողւում է, սակայն, Բիւզանդիոնում ժամանակաւորապէս ցրել տաճկական անհիմն կասկածները։ Դրանից յետոյ շուտով դէպ Պոլիս կայացած ճանապարհորդութիւնը, նախ՝ նախարարներ՝ Դանեվի ու Միլովանովիչի, իսկ յետոյ և իրենց՝ Պետրոս և Ֆերդինանդ կայսրների (1910 թւի մարտին), չեն բերում, այնու ամենայնիւ, որևէ էական արդիւնքի, և, վերջապէս, չէին էլ կարող բերել, շնորհիւ Մակեդոնիայում չվերջացող տաճկական ահաբեկութիւների։ Միւս կողմից, պալատների վրայ տեղի ունեցած բռնութիւնների ազդեցութեան տակ՝ ռուսական, ֆրանսիական ու անգլիական մամուլն աստիճանաբար բարեկամական վերաբերումից դէպ երիտասարդ Թիւրքիան անցնում է սուր բացասականի։ Եռեակ համաձայնութեան երկրների հասարակական կարծիքի նման տրամադրութիւնը պիտի ստիպէր Թիւրքիային կամ հրաժարւել բռնի միջոցների քաղաքականութիւնից, կամ թէ իրեն Բերլինում ու Վիեննայում ապահովագրել իւր ներքին գործերին նորէն միջամտելու վտանգից։ Երիտասարդ—Թիւրքերն երկրորդ ճանապարհն ընտրեցին, այսինքն նոքա գնացին այնտեղ, որտեղ հակասալտնական քաղաքականութիւնը հանդիպում էր չէ թէ քննադատութեան, այլ ջերմ համակրանքի ու հաւանութեան։

Խրախուսելով, այսպիսով, երիտասարդ—Թիւրքերի անմիտ քաղաքականութիւնը Եւրոպայում, աւստրօ—գերմանական դիւանագիտութիւնը մղում է նոցա դէպ արկածների ուղին և Ասիայում, մասնաւորելով նոցա այն վտանգը, որը իրր թէ սպառնում է նոցա Հայաստանում—Ռուսաստանից, Արաբիայում—Անգլիայից, որը ձգտում է ստեղծել արաբական խալիֆայութիւն, իսկ Պարսկաստանում—թէ մէկից ու թէ միւսից։

Այս շրջանում յատուկ կարևորութիւն է ստանում թիւրք—պարսկական սահմանագծային վէճը։ Վաղուց ի վեր Թիւրքիան բաժանւում էր Պարսկաստանից չէ թէ սահմանային գծով, այլ այսպէս կոչած վիճելի կամ չեզոք շերտով, որի փաստական տէրերն էին սահմանագծային ցեղերը։ 1905 թւին, օգտւելով այն

պէտք է անցնելը մոռանալ։ Ազգերը, առաւել եւս նոցա ղեկավարները պիտի մոռանան ատելութեան, չարութեան, ոչնչամութեան եւ վայրագութեան մասին, որպէսզի կարողանան խաղաղութիւն շահել։ Եթէ Պետերբուրգից մեզ առաջարկեն համաձայնութիւն կամ դաշնակցութիւն, մեր շահերին ու պատին համապատասխան ձեւով, մենք կընդունենք ու կընահատենք մեր առաջարկն ամենայն անկեղծութեամբ եւ ուրախութեամբ»։

բացառիկ հանգամանքներից, որոնք ստեղծւել էին մեր՝ Ճապոնիայի հետ ունեցած պատերազմի շնորհիւ, Թիւրքերը առաջ են անցնում դէպ պարսկական անվիճելի հողերի խորքերը և արդէն 1910 թւի մօտալուտին գրաւում են չեզոք շերտից դէպ արևելք ընկած Պարսկաստանից մի խոշոր մաս (մօտ 12,000 կիլոմետր)։ Ամենափոքրիկ կասկածն անգամ չկայ, որ Թիւրքերի այդ շարժումը առաջին հերթին նպատակ ունէր Ռուսաստանի դէմ պատանդան ձեռք բերելու։ Պարսկաստանում կատարած գրաւումներն ոչ միայն ապահովում էին Թիւրքիային իւր զօրքերը Միջագետքից դէպի հիւսիս տեղափոխելու հաղորդակցութեան աւելի յարմար ճանապարհներ, այլ և մօտեցնում էին նրան Մոյին, որով և վտանգի էին ենթարկում երևանեան նահանգը։ Իսկ մեր Ադրբէյջանում երևալուց յետոյ պարսկական սահմանագծային շրջանների գրաւումը տաճիկների ձեռքով դառնում էր ուղղակի վտանգաւոր մեր Թաւրիզի գնդի համար։ Սրանից պարզ է, թէ Թիւրք—պարսկական սահմանագծային վէճն որքան մեծ նշանակութիւն ունէր թէ Ռուսաստանի ու թէ նոյնպէս և Անգլիայի համար։ Սկսած 1905 թւից ռուսական և անգլիական դեսպանները բողոքում են Դուռն առաջ տաճկական գրաւումների առթիւ։ Այդ բողոքներն ստանում են աւելի վճռական բնոյթ 1907 թւի ռուս-անգլիական համաձայնութիւնը կնքելուց յետոյ, բայց նոքա առանձին յաջողութիւն չեն ունենում մինչև ռուսական գնդի Մոյ ուղարկելը, որը կանդնեցնում է Թիւրքերի գոնէ յետագայ առաջխաղացումը։

Այսպիսով, թիւրք—պարսկական հարցը մեր հայեցողութեան ենթակայ 1909—1911 թւականների շրջանում ռուս—Թրքական և անգլօ—Թրքական փոխ-յարաբերութիւնների ամենացաւոտ տեղերից մէկն էր։ Իւր առաջխաղացման մէջ դէպ Թիւրքմենական ցեղերով բնակեցրած Ադրբէյջանը՝ գաղտնի խրախուսած Գերմանիայից, երիտասարդ—Թիւրքերը հանդիպում են Ռուսաստանի և Անգլիայի կողմից կտրուկ հակահարւածի, որը նոցա մէջ առաջացնում է դէպ այս պետութիւնները վատ քօղարկւած թշնամութիւն։

Չնայած, սակայն, իրենց խարդաւանանքների նկատելի յաջողութեան, Գերմանիային ու Աւստրիային այնու ամենայնիւ չի յաջողւում,—ոչ Հիլմի-փաշայի մեծ եպարքոսութեան ժամանակ, ոչ անգամ Խակիի—փաշայի օրերին, այսինքն ճիշտ մինչև իտալական պատերազմը, թեկել Թիւրքիային բացորոշ դէպ եռեակ դաշնակցութեան կողմը։ Ճիշտ է, Խակքի-փաշան ու Մահմուդ-Շեֆկեթը Գերմանիայի ու Աւստրիայի հետ ամենասերտ մտերմութեան անձնայմանօրէն կողմնակիցներից էին. Ֆոն-դեր-Գոլցը գրաւած էր տաճկական բանակի վերակազման խնդրով, որի մէջ

գերմանասիրական տրամադրութիւններն աւելի ու աւելի էին ուժեղանում. վերջապէս, Մակքի–փաշան 1910 թւի օգոստոսին Մարիենբադ՝ էրնոտալին ծնրադրութեան է գնում. իսկ այնտեղ տեղի ունեցած խօսակցութեան բովանդակութեան մասին կարելի է դատել այն ճառից, որը արտասանել է պատգամաւոր Բերնհեյտերը ռայխստագում Աւստրիայի, Գերմանիայի և Թիւրքիայի մէջ պատրաստուող համաձայնութեան մասին «Բոսֆորից մինչև Բալտիկ խաղաղ ամբացրած դիրք» ստեղծելու նպատակի առթիւ։ Այնու ամենայնի դաւճակցութիւն առ այժմ կնքած չէր, չնորհիւ այն հանգամանքի, որ «Միութեան և Յառաջադիմութեան» շարքերում կար հոսանք, որը վերջնականապէս չէր ուզում խզել իւր կապերն երբեակ համաձայնութեան հետ։

Որ այդ շարժումը, որի գլուխն էին անցել կուսակցութեան այնպիսի ականաւոր անդամներ, որպիսիք էին՝ Թալաաթ, Ջավիդ, Հիւսեյն–Ջահիթ և Խալիլ, այն ժամանակ բաւականին ուժեղ էր, ապացուցւում է շատ փաստերով։ Այսպէս, օրինակ, դեռ 1909 թւի գեկտեմբերին գերմանացիները տաճկական պարլամենտում Հիլմի–փաշայի դէմ նուրբ նենգութեան են դիմում, որովհետև վերջինս ընդունել էր Տիգրիսի ու Եփրատի վրայով նաւելու օսմանեան նոր ընկերութիւն կազմելու անգլիացի Լինչի նախագիծը.—Թանին թերթը։ «Միութեան և Յառաջադիմութեան» օրգանը բաց է անում գերմանական խարդաւանանքը, որը և վերջնում կատարեալ անյաղողութեամբ։ Իսկ այն ընդունելութիւնը, որը ցոյց են տալիս նոյն Հիլմի–փաշային նրա անկումից յետոյ Ֆրանսիայում, Անգլիայում և գլխաւորապէս Ռուսաստանում, կառավարութեան ու հասարակութեան մի մասի կողմից (կարող եմ յիշեցնել Новое Время-ի խմբագրատան բանկետը), ընդունւում է այն նոյն երիտասարդ–թրքական խաւերում մի առանձին բաւականութեամբ։ Շատ բնորոշ է նոյնպէս և այն, որ Սոֆիայի սլաւոնական համագումարի ռուս ներկայացուցիչները, դոցա թւում և մեր Պետական Դումայի նախագահ Ա. Ի. Գուչկովը, 1910 թւի յուլիսին Գոլով անցնելիս, շատ երիտասարդ–թրքական գործիչների կողմից համակրութեամբ են ընդունւում։ Իսկ Հիլմի–փաշայի էրնոտալի հետ ունեցած տեսակցութեան առթիւ կոմիտէի կիսապաշտօն Թանինն Աւստրիայի ու Գերմանիայի քաղաքականութեան բաւականին անհամակիր յօդած է նւիրում, որը կատարի պատասխանի է արժանանում գերմանական դեսպանատան օրգան Osmanischer Lloyd-ի մէջ։

Թալաաթի ու Ջավիդի խմբակի դէպ եռակ համաձայնութիւնը ցուցահանած նման վերաբերումը Մակքի–փաշայի նախաբարութեան սկզբնական ամիսներում, հիմնւած էր թէ Ռուսաստանի

ու Անգլիայի հզօրութեան առաջ զգացած փրկարար վախի ու թէ Ֆռանսիական դրամական ռեսկային դիմելու մշանջենական կարիքի վրայ։

Իրաւ է, այդ իսկ վերջին ասպարէզում երիտասարդ–թիւրքերին շուտով հիասթափութիւն սրերց։ Սահմանադրութեան ներմուծմամբ տաճկական ֆինանսական անտեսութիւնը չբարւոքւեց։ 1909 թւի բիւջէի պակասը կազմում էր 5,460,583 լիրա, այսինքն քառասուն միլիոն ռուբլուց աւելի մի գումարը, իսկ 1910 թւի պետական եւմտացոյցի նախագիծը կանխատեսում էր 6,800,000 լիրայի պակաս, հաւասար $58^1/_2$ միլիոն ռուբլու։ Իսկ պատգամաւորների պալատը՝ կրճատելով որոշ մուտքեր և աւելացնելով արտակարգ ծախսերը, հասցնում է իւր պակասը մինչև $10^1/_2$ միլիոն լիրայի (95 միլիոն ռուբլու), որի ծախսերի մեծ մասն ընկնում է բանակի վրայ։ Այդ պատճառով, հասկանալի է միանգամայն, որ ֆրանսիական կառավարութիւնը՝ նախ քան Պարիզի բորսայում նոր տաճկական փոխառութեան շրջանառութիւնը կթոյլատրէր, Դուռն առաջադրում է մի շարք պահանջներ, որոնք տաճկական ֆինանսների վրայ մի որոշ ֆրանսիական հսկողութիւն նշանակէին։ Ֆրանսիայի Դուռն կողմից մերժւած նման պահանջը՝ ուժեղ յուզմունք է առաջացնում առանց բացառութեան բոլոր երիտասարդ–թրքական շրջաններում, և անգամ ֆրանսասէր Թանինը սկսում է աննախանձայ կերպով յարձակուել Ֆրանսիայի «մերկանտիլ» քաղաքականութեան վրայ։ Աւստրիան ու Գերմանիան, չնայած իրենց ֆինանսական թուլութեան, կարևոր են գտնում Թիւրքիայի օգնութեան գալ,—ու 7 միլիոնի տաճկական փոխառութիւնը կնքւում է, առանց տաճկական ֆինանսների վրայ հսկողութիւն նշանակելու, կոնսորցիումի մօտ, որի մէջ մտնում են 32 գերմանական ու աւստրիական դրամատներ։

Նման ճակատագրական ժամին ցոյց տւած ծառայութիւնն, ի հարկէ, մեծապէս բարձրացնում է Գերմանիայի հեղինակութիւնը երիտասարդ–թիւրքերի մէջ և ձեռք է բերում իրեն նոր կողմնակիցներ։ Բայց գերմանացիների ճարպիկ քայլով առաջացրած ապատրութիւնը շուտով մի քիչ թուլանում է Պոտսդամի տեսակցութեամբ, որի ժամանակ Գերմանիան համաձայնութեան է գալիս Ռուսաստանի հետ, ի միջի այլոց, և Բաղդադեան երկաթուղագիծը պարսկականի հետ միացնելու խնդրի շուրջը, մաքսային հարցում ի նկատի չունենալով տաճկական գերիշխանութեան իրաւունքները. Թիւրքերին ստիպում են մի քիչ զգուշանալ և Աւստրիայի Միտրովիցայից մինչև Ուվաց Սանջակեան երկաթուղագիծը կառուցելու եռանդագին ցանկութիւնը, նոյնպէս և նոյն

Աւստրիայի յօդուտ ապստամբ ալբանացիների արած միջնորդութիւնը։ Բացի այս, եռակի դաշնակցութեան ակնհայտ դարձած ֆինանսական թուլութիւնն ապացուցում է բոլոր Թիւրքերին վաղ թէ ուշ ֆրանսիական դրամական շուկային դիմելու անհրաժեշտութիւնը։ Այդու՝ 1910 թւի վերջին պարզապէս յաղթանակում է մի քաղաքականութիւն, որը համազօր էր, մի կողմից, Խակքի—փաշայի և Մահմուդ—Շեֆկեաի գերմանասիրութեան, իսկ միւս կողմից—Թալաաթ—Ջավիդեան խմբակի դէպ երբեակ համաձայնութիւնը տածած որոշ համակիր զգացմունքների։ 1910 թւի դեկտեմբերի սկիզբներին Խակքի—փաշան ստիպւած էր պարլամենտում յայտարարելու՝ որ «դրամական հարցը» չէր կարող ձգտել ֆրանս—Թիւրքական պատմական բարեկամութեան և որ ընդհանրապէս Թիւրքիան ցանկանում է բարեկամական յարաբերութիւնների մէջ լինել բոլոր մեծ պետութիւնների հետ։—Նման յայտարարութիւն անում է և արտաքին գործոց նախարար Ռիֆաաթ—փաշան պալատում 1911 թւի ապրիլին։

Այս ազդարարութիւնները նշանակում են, ի հարկէ, միայն այն, որ Թիւրքիան պատճառ չի յարել եռակի դաշնակցութեան կառավարութիւնը դաղտուկ շատ յաճախ էր հետևում Բերլինի ներշնչումներին, ու եթէ Հիլմի—փաշայի երկրորդ նախարարութիւնից (1909 թւի ապրիլին) մինչև իտալական պատերազմն (1911 թւի սեպտեմբերը) եղած ամբողջ ժամանակաշրջանը կարելի է բնորոշել որպէս սպասողական չեզոքութեան ժամանակաշրջան, այդ, ի հարկէ, միայն մի վերապահութեամբ, որ այդ չեզոքութիւնը, թէև աննշան խանգարումներով, աւելի ու աւելի էր դառնում բարեյաջող Գերմանիայի նկատմամբ։

Փիւրֆ—իտալական պատերազմը Գերմանիային երկդիմի դրութեան մէջ էր դրել բաւեկամ Թիւրքիայի ու դաշնակից Իտալիայի մէջ։ Գանելով՝ որ նա բաւականաչափ կատարել է իր պարտքը դաշնակցի առաջ, թոյլ տալով նրան յարձակուել բարեկամի վրայ, յետագայում դերման դիպլոմատիան ամէն ջանք գործադրեց, սիրաշահելու իր բարեկամին՝ տալով նրան այժմ արդէն իր դաշնակցի հաշւին բաւականին էական փոխակերպութիւններ։ Այսպէս, օրինակ, յանձն առնելով Թիւրքիայի իտալահպատակների վրայ հովանաւորութեան խնդիրը, դերման դեսպանատունը համաձայնւում է զրկել նոցա պատերազմի ժամանակ բոլոր դաշնագրային արտօնութիւններից, այն ժամանակ, երբ 1877 թւին նոյն դեսպանատունն նման առանձնաշնորհումների կիրառումն էր պահանջում իր հովանաւորութեան ենթակայ ռուսահպատակների համար։

Ջնայելով, սակայն, այդ ու նման սիրաշահութիւններին,

գերմանական ազդեցութիւնն ամբողջ իտալական պատերազմի ժամանակ այնու ամենայնիւ տատանւում էր։ Խակքի—փաշայի նախարարութիւնը սկսում է ենթարկուել սուր դատապարտութեան։ Նոր մեծ եպարքոս Սաիդ—փաշան արտայայտում է «մեկնւացման հաղտականութեան» դէմ, իսկ երիտասարդ—Թրքական մամուլը սկսում է պատերազմի առաջին ամսում դէպ եռակի համաձայնութեան կողմը թեքուել ու յատկապէս ծեծել Ռուսաստանի հետ համաձայնութիւն կնքելու հնարաւորութեան հարցը։

Բայց այս անգամ երիտասարդ Թիւրքիան չի հանդիպում ու չէր էլ կարող հանդիպել առանձին համակրանքի ռուս հասարակական կարծիքի կողմից, որն արդէն իր հաւատն էր կորցրել դէպ նրա վերածնունդը։ Բացի սրանից, այդ պատերազմը յատուկ ուժգնութեամբ զգացնել է տալիս ռուս հասարակութեան Սև ծովում եղած մեր դրութեան ամբողջ անբնականութիւնն ու մեր առևտրի վիրաւորական կախումը Թիւրքիայի հայեցողութիւնից։ Նեղուցները պատերազմի սկզբի մի քանի օրերին բաց էին, իսկ երբ իտալացիները ռմբակոծում են Դարդանելն, այդ ժամանակ նոքա փակ են մնում մի ամբողջ ամիս (ապրիլի 5—մայիսի 5), հասցնելով ահագին վնասներ մեր հացահատիկների առևտրին։ Ի հարկէ, դժւար է բացատրել՝ կայսրութեան մայրաքաղաքի մուտքն արգիլելու համար նեղուցներն ականներով պատելու Թիւրքիայի իրաւունքը։ Բայց այդ հանգամանքն էլ աւելի ցայտուն կերպով ընդգծում է նեղուցների հարցում եղած մեր ու տաճկական շահերի անհաշտութիւնը։ Ճիշտ է, գտնւում է տաճկական հրապարակախօս, յայտնի Հիւսեյն—Ջահիդ—բէյը, որը քաջութիւն է ունենում իր թերթում յայտնելու,—որ Ռուսաստանն անգամ իր զինւորական նաւերի համար նեղուցներով անցնելու ազատ իրաւունքը պիտի ունենայ, թէև պայմանով՝ որ մի օրւայ ընթացքում մի նաւ միայն անցնի։ Բայց Ջահիդի կարծիքը համակրութեան չի հանդիպում ու նրա վրայ ընդհանուրի կշտամբանքն է տեղում, և նա դժւարութեամբ է խուսափում կուսակցութիւնից արտաքսուելուն։

Իր ճառում, արտասանած 1912 թւի ապրիլի 13, մեր արտաքին գործոց նախարարը՝ մատնանշելով Ալբանիայի, Մակեդոնիայի և Կրետայի խռովութիւնները, լիակատար իրաւունքով ասում է, որ «Իրերի դրութիւնը Մօտիկ Արևելքում չի կարելի համարել կատարելապէս բաւարար։» Ընդ ամին մատնանշում է նա, որ իւր հողի վրայ ներքին խաղաղութիւնն ապահովելու համար Թիւրքիային «ամենալաւ, գրեթէ միակ միջոցն է մնում՝ ուշադիր ու արդարացի հոգատարութիւն ցուցաբերել դէպ իւր այլացեղ քրիստոնեայ ազգաբնակութեան կուլտուրական և տնտե-

ական կարիքները»։ Մեր նախարարի այդ խօսքերը Թիւրք մամուլի ծայրայեղ անբաւականութիւնն են առաջացնում, որն այդ խօսքերի մէջ տեսնում է դարձը դէպ տաճկական ներքին գործերի միջամտութիւնը։ Այն ինչ Ս. Դ. Սազոնովը միայն ընդգծում է մեր՝ երիտասարդ Թիւրքիայի հետ ունենալիք բարեկամական յարաբերութիւնների այն անհրաժեշտ պայմանը, որը սկսած 1908 թւից ռուսական ամբողջ քաղաքականութեան հիմքն էր կազմում։ Թիւրք մամուլի քննադատութիւնը միայն ցոյց է տալիս, որ 1912 թւի Թիւրքիան, հակառակ 1908 թւի Թիւրքիայի, այդ պայմանն իրեն համար արդէն ճնշիչ էր համարում։

Եթէ այժմ յիշենք, որ հանգամանքներն այդ նոյն ժամանակ ստիպել էին մեզ Թաւրիզում և Ադրբէյդժանի ուրիշ կէտերում մեր զօրերն ուժեղացնել, որը չէր կարող, ի հարկէ, Թիւրք պանիսլամականներին չլուծել, այն ժամանակ հասկանալի կդառնայ՝ թէ ինչու Թիւրքիայում գերմանացիների ունեցած ազդեցութեան մի որոշ թուլացմանը չհետևեց մերի համապատասխան ուժեղացումը։

Վերջապես, ոչ միայն Ռուսաստանը, այլ և Ֆրանսիան ու Անգլիան, գտնելով բարեկամական յարաբերութիւնների մէջ Իտալիայի հետ, չէին կարող Դուան հաճութեանն արժանանալ այն գնով, ինչ նա էր պահանջում,—աջակցել Տրիպոլիսի վրայ տաճկական գերիշխանութիւնը պահելու նրա ձգտումին։ Այդ պատճառով եռակի համաձայնութեան բոլոր անդամները, և յատկապէս Ռուսաստանը, պատերազմի վերջերին սկսեցին մեղադրել իտալիացիներին անբարոյականութեան մէջ։ Այսպիսով՝ եռակի համաձայնութեանը չյաջողեց բռնել ժամանակաւորապէս թողած գերմանական դիրքերը, դէպի ուր, ի դէպ ասած,—դանդաղ, բայց վստահելի քայլերով վերադառնում էր բարոն Մարժալը՝ չմերժելով յաճախ իւր բարի խորհուրդը Թիւրք բարեկամին իտալացի դաշնակցի դէմ։

Իտալական պատերազմի վախճանին, 1912 թւի ամառը լուծւում է և՛ բալկանեան տագնապն այնպէս, ինչպէս ճակատագրօրէն նա պիտի լուծուէր, չնորհիւ տաճկական կառավարութեան ցանկութեան՝ չստեղծել գոյութեան քիչ—շատ տևելի պայմաններ Մակեդոնիայի քրիստոնեայ ազգաբնակութեան համար։ Թիւրքիան իրեն գտնում է բալկանեան ահեղ դաշնակցութեան առաջ։ Ճանկանալով կանխել պատերազմը՝ մեծ պետութիւնները յայտնում են Դուան և բալկանեան պետութիւններին, որ իրենց ձեռքը կվերցնեն Բերլինի պայմանագրի 23 յօդւածի հիման վրայ բարեկարգութիւնների ի կատար ածելը։ 1912 թւի սեպտեմբերի 27-ին այդ առթիւ պետութիւնների հաւաքական նոտայի Դուան յանձնելը գալիս է Եւրոպայի՝ Թիւրքիայի ներքին գործերին չմիջամտելու

շրջանին պաշտօնական հրաժեշտը տալու ու միջազգայնօրէն ընդունելու երիտասարդ-թրքական կարգերի անանկութիւնը։ Եւ այդ նոտան տալիս են ոչ միայն բալկանեան քրիստոնեաների մշտական պաշտպանները—Ռուսաստանն, Ֆրանսիա և Անգլիա,—այլ և Դուան դաղտնի սադրիչներն ու դրդիչները—Գերմանիա և Աւստրօ—Ունգարիա։

Բայց այդ միջամտութիւնը պատերազմը չի կասեցնում։ Եւրոպայի օգնութեան նկատմամբ իրենց հաւատը կորցնելով, բալկանեան պետութիւններն անմիջապէս սուլթանին են առաջադրում ապահովութեան ամենալուրջ պահանջները, իսկ Դուռը պատասխանում է մեծ պետութիւններին,—որ չի կարող հանդուրժել օտար միջամտութիւնը և որ ինքը կիրականացնի անհրաժեշտ բարենորոգութիւնները։

Դաշնակիցների առաջին փառահեղ յաջողութիւնները դնում են Գերմանիային աւելի ահաճ կացութեան մէջ, քան այն, որի մէջ նա գտնւում էր իտալական պատերազմի ժամանակ։ Մի կողմից, Թիւրքերը՝ ձևխձևած ռուսական աշակերտներից—բուլղարներից, սերբիական Creusot հրետանուց, և Ֆրանսիական զինւորական մխիթարից մարզած յոյներից, միանգամայն բնականօրէն սկսեցին տրտնջալ իրենց գերմանացի ուսուցիչների և կրուպպի հրանօթների դէմ։ Միւս կողմից, գերմանական հասարակական կարծիքն իւր հերթին զայրացած պրուսական գլխաւոր շտաբի անշնորհք աշակերտների ձևխձևումից՝ չաքաջայտեց, գոնէ մամուլում, ղէպ պարտուածներն առանձին մեծահոգի զգացմունքներ։ Բայց երկու կողմերի համար էլ այդ անդուրեկան րոպէն շուտով անցաւ։ Թիւրքերն, արդէն պատրաստած Ախաթեղափոխելու, Չաթալջայի դիրքերում մի քիչ ուշքի գալով՝ վերջնականապէս Գերմանիայի դիրքն են նետում։ Իսկ Գերմանիան, պինդ սեղմելով իւր գրկում, հաստատապէս որոշում է այս անգամ արդէն այլ ևս բաց չթողնել Թանկագին բարեկամին, այլ դարձնել Թիւրքիան իրեն ստորադաս պետութիւն։

Թիւրքիայի այդ նոր հակւելը մեր Թշնամիների կողմը բացատրւում է, ի հարկէ, ոչ թէ գերմանական դիւանագիտութեան հմտութեամբ, այլ դէպքերի անողոք տրամաբանութեամբ։ Երբեակ համաձայնութեան պետութիւնների, և յատկապէս Ռուսաստանի համակրանքն ամբողջովին դաշնակիցների կողմն էր։ Այն հանգամանքը, որ պատերազմի սկզբնական ամիսներին (1912 թւի հոկտեմբերից մինչև 1913 թւի յունւարը) իշխանութեան մօտ էին երիտասարդ-Թիւրքերի Թշնամիները, չէր կարող, ի հարկէ, որևէ նշանակութիւն ունենալ, չնորհիւ ողջ նոր կարգերի ապացուցած լիակատար անանկութեան և արմնից բղխող անհրաժեշտութեան—

զէթ եւրոպայում վերջ տալ Թիւրքական քրիստոնեանների վրայ եղած տիրապետութեան։ Այդու՝ եռեակ համաձայնութեան պետութիւնները, և մասնաւորապէս Ռուսաստանը, չէին կարող զաղտնակիցներին իրենց նեղոցների դիւանագիտական պաշտպանութիւնը մերժել անգամ Թրքական ինքնասիրութեան համար Իզմիրը Բուլղարիային զիջելու ամենահիանդուռ խնդրում։ 1912 Թւի դեկտեմբերի 8-ին ռուսական արտաքին գործոց նախարարը հեռագրում է Պոլիս՝ դեսպանին.—«կարծում ենք, որ Դուման վերջին վիճաբանութիւններն ու Պետական Խորհրդից հերթական հարցերին անցնելու ընդունած բանաձևը, պիտի վերջնականապէս ոուս հասարակութեան միահամուռ տրամադրութեան նկատմամբ եղած Թիւրքերի բոլոր կասկածները փարատեն»։ Իսկ 1912 Թւի յունուարի 2-ին Ս. Դ. Սազոնովը հեռագրում է Լոնդոն՝ կայսերական դեսպանին.—«Միևնոյն ժամանակ մենք մեր պարտքն ենք համարում մատնանշել Թիւրքիային՝ բարդութեան հնարաւորութիւնը նրա յամառութեան դէպքում ու պարզորոշ նրան հասկացնել տալ՝ որ Թիւրքիան ոչնչի վրայ յոյս չպիտի դնի, որովհետև, անգամ Թիւրքերի մասնակի յաղթութեան դէպքում՝ մենք անկարող պիտի լինենք սառնասիրտ մնալ դէպ բուլղարների պարտութիւնը»։ Ճիշտ է, 1913 Թւի յունուարի 4-ին բոլոր վեց մեծ պետութիւնների ներկայացուցիչները հաւաքական նոտա են ներկայացնում Դռան, որի մէջ նրան խորհուրդ են տալիս համաձայնել Իզմիրը զիջելու։ Բայց կասկած չկայ, որ գերմանական դեսպանութիւնը՝ լուրեր տարածելով այն մասին, որ ինքն աջակցել է այդ հաւաքական նոտայի մեղմացման, գաղտուկ խրախուսում էր Դռան դիմադրութիւնը շարունակելու։

Յունուարի 10 յեղաշրջումն ու երիտասարդ—Թիւրքերի իշխանութեան անցնելը, ի հարկէ, աւելի են ուժեղացնում Գերմանիայի ազդեցութիւնը։ Թիւրքերի ատելութիւնն այդ ժամանակ ուղղուած է զլխաւորապէս Ֆրանսիայի դէմ, որը ցանկանալով Դռան տիպել շուտափոյթ հաշտութիւն կնքելու, արգելք էր հանդիսանում Ֆրանսիական դրամատներում ձեռնարկած բոլոր տաճկական փոխառութիւններին։ Գերմանական դեսպանութիւնն ըստ ամենայնի հրահրում է դէպ Ֆրանսիան ու դաշնակիցները տածած այդ ատելութիւնը, որը բնականօրէն աւելի է ուժեղանում այն բուռն ոգևորութեան պայթիւմից յետոյ, որն առաջացնում է եռեակ համաձայնութեան երկրներում, յատկապէս Ռուսաստանում, Իզմիրի անկումը (մարտի 13)։ Վերջապէս, 1913 Թւի յուլիսին, երբ երկրորդ բալկանեան պատերազմը ստիպում է բուլղարներին Իզմիրը մաքրել, և Թիւրքերը՝ չնայած Լոնդոնի նախնական հաշտութեան, սկսում են Էնոս—Միդիա գիծն անցնել,—Գերմանիան

դուրս է կասկածից, գաղտուկ նորից նոցա քաջալերողի դերում է ասպարէզ իջնում, թէև մասնակցում է բոլոր պետութիւնների պաշտօնական բողոքներին՝ արւած Իզմիրի գրաւման առթիւ։

Բուլղարիայի հետ անջատ հաշտութիւն կնքելուց յետոյ Դուռը ստիպւած է լինում, այնու ամենայնիւ, նորից Ֆրանսիայից նիւթական օգնութիւն խնդրել, որովհետև միայն այդ երկիրը կարող էր հանել նրան գրեթէ անդրամ ֆինանսական դրութիւնից։ Եւ իրօք, 1913 Թւի սեպտեմբերին Թիւրքիայի և Ֆրանսիայի մէջ երկարաղագծային ու ֆինանսական հարցերի առթիւ, ձեռնտու երկու պետութիւնների համար էլ, նախնական համաձայնութիւն է կայանում։ Բայց այդ հանգամանքն անոյժ է լինում տաճկական քաղաքականութեան ընոյթը փոխելու ձիշտ է, ֆինանսների նախարար Ջավիդ—բէյն յանդգնում է Stamboul թերթի խմբագրին այն կարծիքը յայտնել՝ թէ Թիւրքիան միայն Ֆրանսիային պիտի հեռւի („C'est vers la France seule que nous pouvons nous orientez"), բայց գերմանական դեսպան բարոն Վանգենհեյմի խնդրից Ջավիդից գանգատւում է մեծ եպարքոսին, իսկ «Միութեան և Ցառաջադիմութեան» կոմիտէն ֆինանսների նախարարին իւր պարսաւանքն է յայտնում։

Այդ նոյն 1913 Թւին Գերմանիան հանդէս է գալիս Տաճկաստանի համար շատ կարևոր հայկական հարցով։ Այդ խնդրում վճանդաւոր ինքնավարութիւններից Թիւրքիան պաշտպանողի դերը բարդացել էր Գերմանիայի համար հայ ժողովրդի համակրանքը ձեռք բերելու ցանկութեամբ, որը Թիւրքիայի ասիական շրջաններում, գերմանացիների տպաւոյ բնակչութեան վայրում, ներկայանում է որպէս շատ ուժեղ տնտեսական գործօն։ Գերմանիան այդ պատճառով որոշում է երկդիմի խաղ խաղալ։ Ինչպէս յայտնի է, Հայաստանում բարենորոգութիւններ մտցնելու գործում Ռուսաստանն էր վերցրել նախաձեռնութիւնը իւր վրայ՝ առաջարկելով մեծ պետութիւններին—յանձնարարել Պոլսի իրենց դեսպաններին մշակել բարենորոգութիւնների նախագիծը։ Գերմանիան ուրիշներին հաւասար մասնակցութիւն էր ցոյց տալիս դեսպանատների լիազօրների ենթքէօյի կոնֆերանսում, բայց առնում էր ամենն, ինչ հնարաւոր է՝ խորհրդաժողովից ռուսական բարենորոգութիւնների նախագիծը մերժելու համար, որ Հայաստանից ազատ էր Լիւանի ու Արևելեան Ռումելիայի պէս մի արտօնեալ շրջան ստեղծել։ Որովհետև անհրաժեշտ էր նախ քան Դռան առաջադրելը բոլոր պետութիւնների համաձայնութիւնն ունենալ, այդու մենք ստիպւած էինք բարենորոգութիւնների սահմանները շօշափելիօրէն սեղմող մի քանի զիջումներ անել Գերմանիային. սրանից յետոյ ռուսական և գերմանական դես-

պաննեըն, որպէս պետութիւնների երկու քաղաքական խմբակնեըի ներկայացուցիչներ, սկսում են մէկտեղ ճնշում գործադրել Դուռն վրայ՝ նրան իրենց ընդունել հարկադրելու իրենց մէջ մշակած կրճատ ծրագիրն, որի համաձայն Հայաստանը բաժանուում էր երկու հատուածների և գտնուում է օտարերկրացի (երկու) գնեռալ ինսպեկտորների կառավարութեան ներքոյ։

Շուտով, սակայն, գերմանական դեսպանատան պնդումները թուլանում են, իսկ յետոյ և բոլորովին ընդհատուում։ Այդ նշանակում էր՝ որ գերման կառավարութեան ցանկութիւնները—ձեռք իր կողմը ոչ միայն Թիւրք դահիճներին, այլ և նոցանից տանջուած հայերին, վերջիններիս մօտ լիակատար պարտութիւն են կրել։ Գերման դիւանագիտութեան այդ բաւականին միամիտ հաշիւն այն էր, որ Դուռն իրեն երախտապարտ կմնայ բարենորոգութիւնները կրճատելուն համար, իսկ հայերը՝ նոցա Թոյլտուութեան համար, թէև թէ և նման կրճատ սահմաններում։ Այն ինչ, ռուսական նախագծի սաբոտաժն եռուն գայրոյթ է առաջ բերում տաճկահայերի մէջ Գերմանիայի դէմ։ Բերլինից հրաւիրուած գերմանացի հայագէտ, դոկտոր Լեպսիուսը, չկարողացաւ յաղթահարել հայ հասարակութեան նման տրամադրութիւնները՝ թէ Թիւրքիայում գերմանական կոռավարութեան հաշուով դպրոցներ բանալու խոստումներով եւ թէ նոյնպէս Օսմանեան պետութեան զինեալ ոյժերի հրամանատարութիւնը գերման սպաներին անցնելու հեռանկարով.—այս վերջին ռեֆորմը, պատւելի դոկտորի կարծիքով, պիտի միանգամայն ապահովէր հայերի կեանքի ու գոյքի անձեռնմխելիութիւնը։

Տեսնելով իր լարախաղացութիւնների անյաջողութիւնը, Գերմանիան բանակցութիւնների վերջում հայերի նկատմամբ ծայր թշնամական դիրք է բռնում։ Այսպիսով կանխօրէն պետութիւններին մշակած բարենորոգութիւնների նախագծով դիմելու պարտականութիւնը Թիւրքիան, համաձայն 1914 թւի յունուարի 26 ակտի, ստանձնում է միայն Ռուսաստանի նկատմամբ։

Յունուարի 26 համաձայնագրի անդէն նշանակութիւնը Ռուսաստանի համար այն է, որ այդտեղ Դուռը պատճառապես ընդունում է ռուսական նովանեաւորութիւնը տաճկահայերի վրայ, այսինքն՝ Բերլինի վեհաժողովի դաշնադրութեան 61 յօդուածից մենք նորից գալիս ենք Սան—Ստեֆանոյի 16 յօդուածին։ Մի քիչ առաջ, 1913 թւի նոյեմբերի 4/17, երկար բանակցութիւններից յետոյ, Պոլսում ստորագրւում է Թիւրք—պարսկական սահմանագծման պայմանագիրը, որի մէջ յաղթանակում էր ռուս—անգլիական տեսակէտը, այսինքն հաստատւում է մինչեւ 1905 թ. փաստօրէն գոյութիւն ունեցող սահմանը, երբ տաճիկները սկսել էին

իրենց դրաւումները [1]։ Այսպիսով, մեր դիւանագիտութիւնը ստանում է երկու խոշոր յաղթանակ՝ Պոլսում գերմանական ազդեցութեան ամենաուժեղ շրջանում։ Ի հարկէ, այդ յաղթանակների հետ Գերմանիան հաշտւում է միայն նրա համար,—որ նա դեռ եւ բոլորովին պատրաստ չէր մեզ հետ պատերազմելու և որ նա այդ բանին Թիւրքերին բաւարար չափով դեռ եւ չէր պատրաստել։ Սակայն նա շուտով անցնում է այդ պատրաստութեան։

1913 թւի նոյեմբերին գեներալ Լիման ֆոն—Սանդերսի գիւտարարական միսիան ամուր կերպով հաստատւում է Բոսֆորի ափերին, ու թէև, երբեմն համաձայնութեան բողոքների շնորհիւ, գեներալ Սանդերսն շուտով հրաժարեցւում է Պոլսի կորպուսի հրամանատարութեան պաշտօնից, այնու ամենայնիւ նա մնում է բանակի փաստական ղեկավարի դերում,—ու նրա ազդեցութիւնն էլ աւելի է ուժեղանում կատաղի գերմանասէր էնվէր—փաշայի զինուորական նախարար նշանակելուց յետոյ։

Ես ինձ թոյլ եմ տալիս յայտնելու, որպէս իմ սեփական կարծիքը, որ Սանդերսի միսիան երեւալու րոպէից, եթէ ոչ առաջ, ազդեցիկ երիտասարդ—թիւրքերի մեծամասնութիւնն ու յատկապէս զինուորականները՝ որոշում են ապագայ համաշխարհային բաղխման պահուն բալկանեան պարտութիւնների անարգանքն իրենցից սրբելու համար Գերմանիայի կողմն անցնել։ Առաջւայ պէս բոլոր պետութիւնների հետ բարեկամական խաղեր խաղալու նոցա փորձերը սկսում են աւելի ու աւելի անպատշաճ ու քաղաքական կատակերգութիւնների բնոյթ ստանալ։ Ախորժալուր ճառերի ազմկի տակ, արտասանուած՝ ռուս—տաճկական, թիւրք—ֆրանսիական, իտալօ—թրքական և ուրիշ մտերմութեան կոմիտաեներում—երիտասարդ—թիւրքերը շարունակում են կոտորել իրենց քրիստոնեայ հպատակներին—յոյներին ու սլաւոններին—ու գերման ուսուցիչների օգնութեամբ հատուցման պատրաստել։ Իսկ նոցա խոստացած հատուցումը շատ էր գայթակղեցնող,—ու մենք հաղիւ թէ սխալւենք, եթէ ասենք՝ որ Ծրագրի մէջ մտնում էր յաղթական մուտքը Թիֆլիս ու Կովկասի միացումը Թիւրքիային։

Այնու ամենայնիւ, երբ Ռուսաստանի ու Գերմանիայի մէջ պատերազմը բռնկւեց, ինքնապոյութեան բնազդն երիտասարդ—թրքական ազդայնամոլներին ներշնչեց որոշ զգուշութիւն։ Նոքա

[1] Սահմանագծային յանձնաժողովի ռուս անդամ վ. Ֆ. Միլնորսկու եւ անգլիացի—Wratislaw—ի եռանդի շնորհիւ, յաջողւում է տեղում սահմաններն որոշել միմչեւ ռուս—տաճկական պատերազմի սկիզբը, այնպէս որ այդ նոր սահմանը կարող է հիմք ծառայել ապագայ հաշտութեան բանակցութիւնների ժամանակ։

վճռում են մի որոշ ժամանակով իրենց սիրած «կեղծ-չեզոքութեան» դերի մէջ մնալ ու սպասելով Գերմանիայի վճռական յաղթանակներին՝ պատրաստուել իրենց աւելի ճեռնտու հանգամանքների տակ պատերազմի դաշտը նետուելու։

Նման զգուշութեան հարկադրում էր, ի հարկէ, և տաճկական ֆինանսների սոսկալի դրութիւնը։

Դեռ 1914 թ. յունուարին, տաճկական գործերին տեղեակ մի անգլիացի Ֆինանսիստ՝ ֆինանսական ճգնաժամի ներկայութիւնն էր հաստատում, որ իւր հերթին առաջ էր բերում վարչական ճգնաժամ։ 1914 թւի բիւջէի սպասելիք պակասն այդ ֆինանսիստն հաշուում էր 12,000,000 տաճկական ֆունտ։ Կառավարութիւնն,—ասում է նա, ինչպէս Աբդիւլ—Համիդի ամենավատ ժամանակներին, աշխատում է իւր սպանների ու պաշտօնեաների սովի դատապարտման գնով մանկութիւնից ազատուել, թողնելով նոցա ամիսներ շարունակ առանց ռոճկի։ Մինչ այժմ Թիւրքիային՝ քայքայիչ փոխառութիւնների ու հարկային լծի շարունակական մեծացման շնորհիւ, յաջողւել էր մի կերպ իւր օրը քարշ տալ ու իւր պարտքերի տոկոսները վճարել։ Իսկ այժմ,—եզրակացնում է անգլիացին,—ըստ երևոյթին, վերջին սահմանն է հասել ու հնարաւոր է, որ պետական մեքենան կատարելապէս դադարի գործելուց։

1914 թւի առաջին կէսին ֆինանսների նախարար Ջավիդը գործադրեց բոլոր միջոցները համոզելու համար մեծ պետութիւններին, որպէսզի նոքա համաձայնագրեր կնքեն Թիւրքիայի հետ՝ նման արդէն Ֆրանսիայի հետ կապածին, որոնք թոյլ տային Թուրքիային մաքսային տուրքերը մինչև 15% բարձրացնել և մենաւաճառութիւններ մտցնել։ Այդ բանին հասնել, սակայն, նրան չյաջողւեց։ Բայց Ջավիդ—բէյը փոխառութիւն կնքեց Ֆրանսիայում, որի մի մասը Թիւրքիան կարողացաւ մինչև պատերազմն իրականացնել։

Բայց և այնպէս տաճկական ֆինանսները չեն կանոնաւորւում։ 1914 թւի սեպտեմբերի վերջին, այսինքն ճգնաժամի ճիշտ սկիզբին՝ մեր յիշատակած անգլիացին, որը մօտ էր կանգնած տաճկական ֆինանսներին, հաստատում է, որ, չնայած Ֆրանսիայի փոխառութեան, բոլոր աղբիւրները սպառւել են.—երկրագործութիւնը լիակատար քայքայման մէջ է. ազգաբնակութիւնը ծիւրւում է հարկերի տակ. Dette Publique եկամուտներն օգոստոսին իջնում են՝ 350,000 լիրայով, իսկ մաքսային եկամուտները—300,000-ով։ Գանձարանն անոյժ է վարչութեան օրգանների կանոնաւոր աշխատանքն ապահովելու...

Պետական գանձարանի նման դրութեան հանդէպ երիտասարդ

թիւրքերի մեծամասնութեան անկեղծ ցանկութիւնը—մի որոշ ժամանակ հետու մնալ համաշխարհային աղէտից՝ կասկածներ չէր յարուցանում։

Սակայն Թիւրքը ենթադրում է, իսկ գերմանացին—կարգադրում։

Ինչպէս յայտնի է, Դուրը, իւր չեզոքութեան մասին ասած հանդիսաւոր ազդարարութիւններից յետոյ, սկսում է ամենացինիկ կերպով խախտել այն՝ յօգուտ Գերմանիայի։ Դարդանելը ներս թողած «Գեբենն» ու «Բրեսլաուն» ոչ միայն զինաթափ չեն արւում, այլ մուծւում են տաճկական նաւատորմղի կազմի մէջ, ու չնայած ծովային նախարարի ռուսական դեսպանին տւած «ազնիւ խօսքին»՝ գերմանական նաւախումբը չի հեռացւում, այլ ընդհակառակը, լրացւում է գերմանական նաւաստիներով։ Դուրը համոզում է, որ գնել է այդ նաւերը, որը, սակայն, ըստ գործող միջազգային օրէնքների, նա այդ բանը պատերազմի ժամանակ բացարձակօրէն անելու իրաւունքը չունէր. բայց անգամ և այդ վստահացումը սուտ էր.—ոչ այլ ոք, եթէ ոչ ինքը՝ գերմանական պետական—գիւանագիտը եազդին յայտնում է Բերլինի յունական դեսպանին՝ որ վաճառում, իբր, տեղի չէ ունեցել Դարդանելում «Գեբենն» ու «Բրեսլաուն» երևան գալու ժամանակից տաճկական «չեզոք» երկրային ջրերն օրը-օրին աւելի ու աւելի են դառնում որպէս գերման զինուորական-ծովային գործողութիւնների պատսպարան։ Արդէն իրենց երևալու առաջին իսկ օրը գերմանական նաւերը քննութեան են ենթարկում Դարդանելում կանգնած ֆրանսիական և անգլիական նաւերը։ Յետոյ «Բրեսլաուն» գնում է ռումինական և բուլղարական նաւահանգիստներն ու այնտեղից, օսմանեան դրօշի տակ, բերում կանգ առած գերմանական առևտրական նաւերը, որոնք, հասնելով Բոսֆոր, նորէն բարձրացնում են գերմանական դրօշակ։ Բոսֆորի մէջ, Բէյկոսի մօտ, կանգնած էր գերմանական «Կորկովադօ» առևտրական նաւը, օժտւած բարձրհոսեռադրով՝ որը միշտորդ էր ծառայում գերմանական ազմիրալ Սիւշոնի և Բերլինի մէջ. այս քիչ է՝ գերմանական դեսպանատան կից հիմնւում է „Etappen—Kommando“ յատուկ կառավարչատունը, որը գրաւում է յօգուտ գերմանական կառավարութեան գերմանական նաւերի վրայ գտնւող ռուսական, ֆրանսիական և անգլիական նաւերը ու նոցա փոխարէնը տալիս սահմանագրեր։

Միևնոյն ժամանակ Գերմանիայից ու Աւստրիայից՝ մեզ բարեկամ ու չեզոք երկրների—Ռումինիայի և Բուլղարիայի—նեղուցներով դէպի Գոլիս էր գնում մեր թշնամիների անձնական և նիւթական այժերի անընդհատ հոսանք,—գալիս էին գերմանական սպանիք ու զինուորներ, ռազմային իրեր, սկաններ, հրանօթներ

ու պաշարեցին։ Գերմանական հրամանատարութեան փոխն է հնչում Բոսֆորի ու Դարդանելի ամրութիւններին, և Օսմանեան պետութեան ամբողջ բանակն ու նաւատորմիղը գերմանական հրամաններին է ենթարկուում։ Մի խօսքով, այն, ինչ չյաջողեց Գերմանիային անել Բելգիայում, յաջողեց նրան՝ Ցանկաստանում։—Նա զրաւեց առանց դիմադրութեան չեզոք պետութեան մի մասը մայրաքաղաքով հանդերձ։

Պատմութիւնը կը վկայէ, որ երբեակ համաձայնութեան պետութիւնները, չնայած Թիւրքիայի նման զրգռեցուցիչ ընթացքին՝ գործադրել են իրենցից կախուած բոլոր միջոցները, որպէսզի չեռ պահեն նրան պատերազմ յայտարարելու հակառակորդական քայլից. և այդ այն դէպքում, երբ իրենց գերմանացի նոր դաշնակիցների ազդեցութեան տակ միանգամայն երես առած Թիւրքերն ամեն տեսակի ճնշումների էին ենթարկում Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի հպատակներին, պատերազմական կարիքների համար զբաւում էին նրանց ունեցուածքը, իսկ երբեմն և բանտ էին նետեցնում առանց որևէ շարժառիթի։

Մի կողմից՝ չեզոքութեան բոլոր նման խախտումների դէմ համաձայնութեան դեսպանութիւնները դուրս էին գալիս աւել կամ պակաս սուր բողոքներով, նախազգուշացնելով Թիւրքերին՝ որ նոքա վտանգի են ենթարկում իրենց գոյութիւնը։ Միւս կողմից՝ համաձայնութեան պետութիւնները ընդ առաջ են գնում նախարարութեան չափազանց անդամների ցանկութեան և իրենց համաձայնութիւնն են տալիս տնտեսական և իրաւական զիջողութիւնների վերացման մի պայմանով միայն,—որ Թիւրքիան ժամանակից դատաստանական կազմակերպութեան կանցնի և կը հետևի ապագայում իսկական չեզոքութեան, որն առաջին հերթին պիտի արտայայտւի «Գեբենի» ու «Բրեսլաուի» գերմանական նաւերը Թուրքերին յանձնելու մէջ։ Համաձայնութեան պետութիւնները անգամ պարտաւորուած են Թիւրքիայի անկախութեան ու անձեռնմխելիութեան տուած իրենց խոստումները[1])։

Տաճկական կարիներում, յայտնի է, սակայն, ծայրայեղ հոսանքն ու Իւռը օգոստոսի 27 նոտայով աղաղակում է դեսպանատներին իր նախաձեռնութեամբ թէ տնտեսական ու թէ իրաւական զիջողութիւնները վերացնելու մասին։ Այս նոտան առաջ է բերում բոլոր—անգամ գերմանական և աւստրիական դեսպանատների զժգոհութիւնը. բայց, մատնակցելով բողոքներին՝ այս

[1]) Այդ բանակցութիւնների մանրամասները կարելի է գտնել ռուսական «Նաբնջադոյն» եւ անգլիական «Կապոյտ» գրքերի մէջ, որոնք վերաբերում են Թիւրքիայի հետ պատերազմելու նախընթաց շրջանին։

վերջիններս ղեկավարում են, ի հարկէ, միայն կասկածը փարատելու նպատակով, հաստատելու՝ որ իրենք չեն հակաօրէն միջոցը Դաան նեբշնչողներից։—Հետևեալ բողոքին նոքա այլ ևս չեն մասնակցում։ Համին ընկնելով, Իւռը փակում է յետոյ օտարերկրեայ պատասաններն ու միջազգային սանիտարական խորհուրդը։ Այնու ամենայնիւ համաձայնութեան պետութիւնները շարունակում են իրենց խաղաղասէր քաղաքականութիւնը. երբ Իւռն դժում է, որ իւր քմահաճ ցանկութեամբ չի հասնի նպատակին՝ առաջարկում է համաձայնութեան պետութիւններին բանակցութիւններ սկսել,—վերջիններս չեն հրաժարւում այդ առաջարկից և շարունակում են բանակցութիւններն ուղիղ մինչև պաշտօնական խզումը։

Երբեակ համաձայնութեան պետութիւնների նման վարուելակերպութիւնը թելադրւում էր նոցա, ի հարկէ, ոչ այնքան Թիւրքիան կորստից փրկելու ցանկութեամբ, որքան նոցա ձգտումով—չունենալ մի աւելորդ, թէկ ոչ առանձինն վտանգաւոր, հակառակորդ ևս։ Յամենայն դէպս, տաճիկ բախտախնդիրները՝ մերժելով համաձայնութեան պետութիւնների՝ Թիւրքիայի անկախութեան ու անձեռնմխելիութեան տուած խոստումը, ծանր յանցանք են գործում իրենց հայրենիքի նկատմամբ։ Ես չեմ կարող այստեղ չյիշատակել անգլիական դեսպան սեր Լիւիս Մալլերի թուռնոտ խօսքերն, ասած այդ առթիւ Թալաաթ-բէյին։—«Ես լսել եմ, որ տաճիկ կառավարութիւնը նշանակութիւն չի տալիս գրաւոր յայտագրին, որը ներկայացրել ենք ես ու իմ ֆրանսիացի և ռուս պաշտօնակիցները նրա անձեռնմխելիութեան նկատմամբ։ «Ես շատ էի զարմացած նման վերաբերմունքից, բայց ինքս անհատապէս որոշ թեթևութիւն զգացի. որովհետև Թիւրքիայի անկախութեան և անձեռնմխելիութեան նման խոստումն համազօր է այն բանին, երբ դուք մէկին ապրելու վստահացումն էք տալիս այն ժամանակ, երբ նա որոշել է ինքնասպան լինել»[1])։

Բայց ահա էր պատկանում այդ ժամանակ իշխանութիւնը Օսմանեան պետութեան հայրենիքում։

Ոչ սուլթանին, ի հարկէ, այդ 33-ամեայ բերդապետութեան մէջ զատած, բարեհոգի ու անկամ ծերունուն։ Ոչ պարլամենտին՝ որն այդ ժամանակ չկար և ընդհանրապէս կորցրել էր ամեն մի նշանակութիւն։ Ոչ կառավարութեան գլուխ անցած՝ մեծ եպարքոս պրինց Սաիդ Հալիմ-փաշային։ Այդ զատարկ, անապարհ ու ծոյլ մարդու ամբողջ դերը կայանում էր երբեակ համաձայնու-

[1]) Blue Book, Events leading to the rupture of relation with Turkey (1914), № 64.

թեան դեսպաններին խոստումներ տալու մէջ, որոնք յետոյ խախտուում էին Էնվերի ու գերմանացիների կողմից։ Մի, իրօք, ողբերգական դէր։ Անգլիական կապոյտ գրքում կարելի է կարդալ, թէ պատուելի հեպիսկոպոսի պրինցն որպիսի դառը ճշմարտութիւններ ստիպուած է եղել լսելու համաձայնութեան դեսպաններից և, մասնաւորապէս, սեր Լիւիս Մալլեթից՝ որը քանիցս ապացուցել է նրան,—թէ Պոլիսն իւր չբնակչութով զօրաբանակի է վերածուել և որ նա, Սաիդ Հալիմն, ոչ մի ազդեցութիւն չունի դէպքերի ընթացքի վրայ։ Նոյն տեսարաններն են կրկնուել մեծ եպարքոսի և համաձայնութեան միւս դեսպանների միջև։ Ամէն պրինցը շաւաղունում, բարկանում, խրոխտ ազդարարում էր՝ որ Թիւրքիայի իսկական տէրն ինքն է միայն, և որ նա չի թոյլ տայ պատերազմելու,—բայց սրանով ամէն ինչ էլ սահմանափակւում էր։ Ես կարծում եմ, որ Սաիդ–Հալիմին, որն, իրօք, մեզ հետ պատերազմ չէր ցանկանում, չի կարելի անգամ նրան վերագրել վերջինիս ուշացնելը։ Նա շատ էր գնահատում իւր դիրքը, որպէսզի կարողանար համարձակ պատերազմի կողմնակից կուսակցութեան դէմ դուրս գալ։ Ու պատերազմը յայտարարելուց նա գործերին մօտ ձեաց, հակառակ ֆինանսների նախարար Ջաւիդ–բէյին։

Իշխանութիւնն այդ ժամանակ չէր գտնւում նոյնպէս և «Միութեան ու Յառաջադիմութեան» կոմիտէի ձեռքին, այդպէս չէր, յամենայն դէպս, սկսած զօրահաւաքի օրից։ Բայց անգամ և դրանից առաջ, ըստ արժանահաւատ աղբիւրների, կուսակցութեան պարագլուխները—Էնվերը, Թալաաթը, Ջեմալն ու Խալիլը միշտ չէին գտնում կարևոր կոմիտէին իրենց քաղաքականութեան գաղտնիքներն հաղորդել։ Մայրաքաղաքում և շրջաններում եղած մի քանի հարիւր կոմիտէական գործիչների օլիգարխիան կամաց–կամաց փոխարինւում է մի բանի անհատների օլիգարխիայով։ Ֆինանսական նախարար և գեներալիսիմուս Էնվեր–փաշա, ներքին գործոց նախարար Թալաաթ–բէյ, ծովային նախարար Ջեմալ–փաշա, մեբուսների պալատի նախագահ Խալիլ–բէյ, ֆինանսների նախարար Ջավիդ–բէյ—ահա Օսմանեան պետութեան ողբերգութեան տաճիկ գլխաւոր գործող անձինք։ Սոֆիայի դեսպան Ֆեխտի–բէյին, Բերլինի դեսպան Մահմուդ–Մուխտար–փաշային, «Միութեան և Յառաջադիմութեան» գլխաւոր քարտուղար Միդհաթ–Շիւքրիին պատմութիւնը կլցնէին երկրորդական տեղեր, ինչպէս և երբեմնի հռչակաւոր կոմիտէական գործիչներ՝ դոկտոր Նազիմին, Հիւսեյն Ջահիդին, էմբէր Սաբրիին։

Իմ յիշատակած հինգ անձնաւորութիւններից թերևս միայն ֆինանսների նախարար Ջավիդ–բէյն էր օժտուած պետական գործչի որոշ տաղանդներով և ընդունակ դիտակցելու՝ թէ երբեակ համա-

ձայնութեան հետ եղած պատերազմն որպիսի սոսկալի անակնկալների կարող է հնարաւորել նրա հայրենիքը։ Դեռ նոր ստորագրած լինելով Պարիզում Ֆրանսիայի հետ ֆինանսական և երկաթուղագծային համաձայնագիրը, ձեռնտու երկու կողմերի համար էլ, Ջավիդ–բէյը չէր կարող պատերազմ ցանկանալ Հանրապետութեան հետ, առանց որի ֆինանսական աջակցութեան Թիւրքիային անխուսափելի անհնարինութիւն է սպառնում։ Ես նոյնպէս սիրում եմ հաւատալ, որ ֆինանսների նախարարի սրտից 1909 թւի ապրիլեան գիշերւայ յիշողութիւնը չի անցել անհետ՝ երբ Պոլսի առաջական դեսպանատան անդամները փրկում են նրա կեանքն, ուղեկցելով նրան—իրենց անձը վտանգի ենթարկելու գնով—երիտասարդ–Թիւրքերի դէմ ըմբոստացած զինուորների շարքերով դէպ Բոսֆորում կանգնած դեսպանական «Կոլխիդա» զբօսանաւը։ Այսպէս թէ այնպէս, Ջավիդ–բէյը թուում էր ամենից համոզուած ներկայացուցիչն այն չափաւոր հոսանքի, որը ցանկանում էր օգտագործել բոլշէն բացառապէս պաշտպանական լուծը տապալելու համար։ Բայց Ջավիդի քաղաքական ազդեցութիւնն այդ ժամանակ ուժեղ չէր։ Նա, իրօք, կապուած էր բարեկամութեամբ Թալաաթի հետ։ Բայց Էնվերը, Ջեմալն ու Խալիլը նրան չէին սիրում, իսկ գերմանացիներն անում էին բոլորը նրան, որպէս ֆրանսիամէրի, վարկաբեկելու համար։ Յամենայն դէպս, խաղաղութիւնը պահպանելու համար Ջավիդի գործադրած աշխատանքները, ըստ նրա խօսքերի, յաջողութեամբ չէն պսակւում. յօգուտ ֆինանսների նախարարի է խօսում և այն հանգամանքը՝ որ մեր ծովեզերքի վրայ տեղի ունեցած Թիւրք–գերմանական նաւատորմղի պատերազմից յետոյ նա իսկոյն և նի հրաժարական է տալիս։

Ինչ վերաբերում է մեբուսների պալատի նախագահ Խալիլ–բէյին, նա արդէն խաղացել է այս ճգնաժամի մէջ աւելի քան կասկածելի դեր։ Որպէս Զմիւռնիայի նախկին իրաւաբան, լսած լինելով իրաւաբանական որոշ դասընթաց Ֆրանսիայում, Խալիլ–էֆէն առանց դժուարութեան երիտասարդ–Թիւրքերի մէջ ակնառու իրաւագէտի համբաւն էր ձեռք բերել։ Այդ պատճառով և նրան է յանձնւում դեսպանութիւնների հետ բանակցութիւններ վարելու միտքն այն պայմանների մասին, որոնցով նոքա կ'համաձայնէին դադարեցնել թշնամութիւնները։ Խոստանալով դեսպանութիւններին՝ որ նա կ'մշակի ottomerkezçiliğin մի այնպիսի կազմուածագիրք, որը միանգամայն կապահովի նոցա դրութիւնը, և որ մինչև նրա մշակումն իրաւական դադարների վերացման օրէնքը չի գործադրուի,—Խալիլը չի կատարում իւր խոստումներից ոչ մէկը և ոչ միւսը։ Դատաստանական դադարներն

փաստօրէն վերացում ևն, իսկ Թալիլի ներկայացրած ռատեր-կրացիների կաճուցագրի նախագիծը միայն հատատում էր վերջիններիս լիակատար ենթարկուելը տաճկական օրէնքներին, թողնելով նոցա միայն որոշ արտօնութիւններ՝ ամուսնական, ընտանեկան և ժառանգական իրաւունքի սահմաններում։ Կարելի է այդ իսկ պատճառով մտածել, որ Թալիլի առաքելութիւնը բանակցութիւնը ձգձգելու մէջ էր կայանում, որոնց ընթացքում Թիւրքերը դաշնագրային կարդերը կազմալուծման ենթարկելով էին զբաղուած։ Յամենայն դէպս, ըստ միանգամայն վստահելի տեղեկութիւնների, Թալի-բէյն ճգնաժամի վերջին օրերին երբեակ համաձայնութեան հետ պատերազմի անպայմանօրէն կողմնակիցն էր և, ըստ երևոյթին, մասնակցում էր Բարան Վանգենհեյմի մօտ տեղի ունեցած խորհրդակցութիւններին Պալատի նախագահ, հակառակ Ջաւիդի, որոշում է, ինչպէս երևում է, գերմանական հոսանքին յարել և, պիտի որ, գերմանացիների հետ տարած բանակցութիւնների ժամանակ՝ արդէն տաճկի երեք դլխաւոր բախտախնդիրների՝ Էնվէրի, Թալաթի ու Ջեմալի, իրաւաբանական խորհրդատուն է ծառայում։

Այս վերջիններից ծովային նախարար Ջեմալ-փաշան, հակառակային դէնքերալ, Աբդուլ-Համիդի ժամանակ Բաղդատի նահանգապետ, բոլորովին չէր պատկանում Թալաթի և Էնվերի խառնուածքի տէր երիտասարդ-Թիւրքերի շքախմբին։ Բալկանեան պատերազմի ժամանակ Ջեմալ-փաշան աչքի ընկաւ իր քաջութեամբ։ Ցետոյ, նշանակելով Պօլսի զինուորական նահանգապետ, նա ցոյց տուաւ, ինչպէս ես արդէն մատնանշեցի, շատ մեծ ընդունակութիւններ լրտեսութեան ասպարիզում, իսկ Մահմուդ Շեֆկիդ-փաշայի սպանութիւնից յետոյ մօրեց ահաբեկման սեփականը՝ դրեթէ անհնարին դարձնելով երիտասարդ-Թրքական կարդերի դէմ նիւթած յետադայի ամէն մի փորձ։ Տիրանալով, վերջապէս, ծովային նախարարի պորտֆելին՝ Ջեմալ-փաշան փորձից ԹԷ Էնվերի ու ԹԷ Թալաաթի նկատմամբ անկախ դիրք բռնել։

Տագնապի ժամանակ Ջեմալ-փաշայի բռնած դիրքը բացատրւում էր բացառապէս սրիսածախնդրական դրդուածներով։ Դեռ պատերազմից շատ առաջ՝ Էնվերին հակառակ լինելու հնարիւ Ջեմալ-փաշան ընդգծում էր իր ֆրանսիասիրութիւնը, որի արտաքին արտայայտութիւններն ունելի են ուժեղանում, Ֆրանսիայում ճանապարհորդելու ժամանակ նրան ցոյց տուած փառահեղ ընդունելութիւնից յետոյ։ Ձգնաժամի սկզբին Ջեմալը, քանի այդ դեռ հնարաւոր էր, աշխատում էր համաձայնութեան դեսպանների մէջ այն պատրանքը վառ պահել՝ ԹԷ ինքը նոցա կողմն է։ Գուցէ նա անկեղծ էր, երբ իւր խոստումներն ու անգամ ազնիւ խօսքն էր տալիս՝ ԹԷ «Գնգենից» ու «Բրեսլաուից» Գերմանցիները պիտի հեռացնեն Բայց, տեսնելով՝ որ այլևս անոյժ է գերմանասիրական հոսանքը յաղթահարելու, Ջեմալ-փաշան շատ է հարկւում Գերմանացիների կողմը, յետաձգելով Էնվերի հետ կռիւն աւելի յարմար րոպէին։ Այստեղ էլ նա ցուցահանում է կատաղերզու մի նոր, աւելի քան ոչ սովորական տաղանդ։ Հոկտեմբերի 16 երեկոյեան նա Թուղթ էր խազում Պոլսի ակումբում, երբ նրան հաղորդում են տաճկական նաւատորմի Օդեսայի վրայ յարձակելու մասին։ Ծովային նախարարը ցոյց է տալիս արտասովոր զարմանք ու յուզմունք, որին հաւատում է ամբողջ քաղաքը։ Այն ինչ նա մասնակցել էր Բարան Վանգենհեյմի մօտ տեղի ունեցած պատմական խորհրդակցութեան, որտեղ Թիւրքիան պարտաւորւել էր անյապաղ ասպարէզ իջնելու։

Ներքին գործոց նախարար Թալաաթ-Բէյին պիտի, իհարկէ, ճանաչել, որպէս ամենախելօք դէմքը երիտասարդ-Թրքական ժամանակաշրջանի իրաւունքով Թալաաթին և ոչ Էնվերին էր պատկանում «ազատութեան հերոսի» տիտղոսը,—իհարկէ, երիտասարդ-Թրքական։ Տէր լինելով շատ խելք կրթութեան ու Սոլունում հետազրաթիւային վարչութեան մասը պաշտօնեայի կոչումն ունենալով, շնորհիւ կենդանի ընտաւր խելքի ու միանգամայն բացառիկ եռանդի՝ նա կարողանում է Աբդուլ-Համիդի թագաւորութեան վերջին հանդիսանալ ու յետագայում երիտասարդ-Թրքական կուսակցութեան տիրապետութիւնն երկրի վրայ պահպանում է մի նշանաւոր չափով Թալաաթի կազմակերպչական ընդունակութիւններով ու երկաթեայ ձեռքով։ Կարբոնարիի իսկական տիպարն էր դա, իսկ նախարարական պաշտօնում աւազակախմբերի պարապետների մասնութեան շարունակողն իր քաղաքական հակառակորդներին արագ ու արմատապէս չեզոքացնելու խնդիրներում։ Ոչ շատ անց, իր քաղաքական թշնամուն բանտարկութիւնից ազատելու խնդրին ներքին գործոց նախարարը գրաւիչ քմծիծաղով հետևեալն է պատասխանում.—Restituer—non, tuer oui.»

Ինչպէս և իւր գրեթէ բոլոր ընկերները, Թալաաթը շատ շուտով բոլոր օսմանեան ժողովուրդների իրաւահաւասարութեան մասին երազող ազատականից գարձաւ տաճկական լեռնականութեան մէջ է նրա մեծ մեղքն Օսմանեան կայսրութեան առաջ։ Բայց իւր սկզբնական տաճիկ ժողովրդին սիրում էր նա, ու ես անկասկած եմ նրա արտաքին քաղաքականութիւնը բացատրել շահախնդրական կամ այլ անձնական դրդուածներով։

Երիտասարդ-Թրքական տիրապետութեան առաջին տարի-

ները Թալաաթը կարծում էր, թէ Թիւրքիայի շահերը մտերմութիւն են թելադրում երբեակ համաձայնութեան հետ։

Երբ Թիւրքիան կարևոր գտաւ ծայրայեղ ազգայնամոլական քաղաքականութեան հետևել ու նման մտերմութիւնն անհնարին դարձաւ, Թալաաթը ստիպուած եղաւ Գերմանացիների վրայ յենուել։ Այնուամենայնիւ, ըստ իմ համեստ կարծիքի, նա երբէք էլ Գերմանիայի հետ ֆորմալ դաշնակցութեան կողմակից չէր, այլ պաշտպաններից էր անկախ քաղաքականութեան։

Իսկ վերջին տագնապի ժամանակ արդէն նա, ըստ երևոյթին, Ջաւիդի համախոհներից էր և ցանկանում էր մի ուժեղ անկախ ազատական չեզոքութեան մէջ մնալ՝ քաղելով նման դրութիւնից բոլոր հնարաւոր օգուտներն, այն է—վերացուելի իրաւական ու տնտեսական դաշնագրերի,

Ու չնայած այդ բոլորին, Թալաաթն, անկասկած, ներկայ է գտնուել Բարոն Վանգենհեյմի մօտ տեղի ունեցած պատմական նիստին, ուր Թիւրքիայի բախտն է որոշել։ Ես կաթծում եմ, որ նա Ռուսաստանի հետ պատերազմելուն իր համաձայնութիւնն է տուել՝ խոզճը բռնադատելով ու վատ նախազգացումներով ճիշտ է, Թալաաթը—յայտնի ազգայնամոլ է, պանիսլամական ու Բալկանեան պատերազմի վրէժը երազողներից. բայց նա այն Թիւրքերից է, որոնք գիտեն Ռուսաստանի հզօրութիւնը հաշուի առնել, Նա կ'գերադասէր նրա վրայ յարձակուել միայն վերջինիս Գերմանիայից կրած պարտութեան դէպքում։ Բայց արդեօք հանդիսանալ անժամանակ պատերազմին նա, սակայն, չէր կարող։ Ջօրաւուքի օրանից փաստօրէն ամբողջ իշխանութիւնն անցաւ Գենեռալիսիմուս Էնվերին, ու քաղաքացիական դիկտատորը, չցանկանալով պատմութեան բեմից իջնել՝ ժամանակաւորապէս իր դլուխն է իջեցնում զինուորական զեկավարի առաջ։

Ես այժմ անցնում եմ Թիւրքիայի ակամայ ստեղծուած երրորդութեան ամենատխրահռչակ անդամին—Էնվերին։

1908 թ.ին ոչ որի յայտնի 26-ամեայ սպան, ինչպէս և մակեդոնական բանակից նրա ընկերների մեծ մասը, պատկանում էր երիտասարդ-Քրքական յեղափոխական կազմակերպութեան։ Մի երջանիկ դիպուած նրան աչքի է ձգում։ Որպէս ադիւտանդը գեներալ Ինսպեկտոր Հիւսէյն Հիլմի-փաշայի՝ նա իմանում է բացուած դաւադրութեան մասին և այդու, առանց ժամանակ կորցնելու, մի խումբ զինուորների հետ դէպ սարերը բարձրանում ու այնտեղից ապստամբութեան դրօշը պարզում, կանխօրէն իր անունը նրա վրայ կեռտելով։ Դժուար է ասել՝ թէ փառքի որդիթի բարձրութեան կ'հասցնէին ժողովրդական ոգևորութեան ալիքները երիտասարդ Էնվեր-Բէյին, եթէ նա այդ ժամանակ մտնէր

Սաամբուլ։ Բայց արդեօք ինքն էր այդ ժամանակ դեռ շատ համեստ, թէ «Միութեան և յառաջադիմութեան» կոմիտէն խոչընդոտ հանդիսացաւ՝ այսպէս թէ այնպէս Էնվերը նոր Հռոմում յաղթականն մուտքի չարժանացաւ։ Դրա փոխարէն, Էնվերը զինուորական գործակալի պաշտօնով Բերլին գնաց ի դէպս շատ ձեռնտու վիճակի կայսեր համար, որը, իհարկէ, բոլոր միջոցները գործադրեց իւր թագաւորի—Վիլհելմի հին բարեկամ—սուլթան Աբդուլ-Համիդի—դէմ ապստամբած երիտասարդ տաճիկ սպային կախարդելու համար։ Սակայն այս անգամ Էնվերին չ'վիճակուեց երկար մնալ Գերմանիայում։ 1909 թ.ի մարտի 31-ի յեղափոխական յեղաշրջման հենց լուրն առնելուն պէս՝ նա դէպ Սոլուն ալացաւ, ապրիլի 13-ին Մահմուդ-Շեֆկեդ-փաշայի բանակի հետ մէկտեղ մտաւ Սաամբուլ, աչքի ընկաւ խռովարար զինուորներից զօրանոցները յետ գրաւելու ժամանակ ու այսպիսով ազատութեան գործին նա աւելի շօշափելի ծառայութիւններ մատուցեց, քան այդ 1908 թ.ին էր։ Պիտի մտածել, որ հենց այդ մրրկածուփ ազատամարտութեան օրերին էր՝ որ Էնվերի գլխում Նապոլեոնեան երազը ծնունդ առաւ։ Միթէ նա չ'փրկեց Կոնվենտը, այսինքն—կոմիտէն, բայց երիտասարդ-Թիւրքերն ամբողջովին այդ տեսակէտը, դեռ ևս չունէին. Մահմուդ-Շեֆկէտն առժամապէս խաւարացրել էր երիտասարդ փառասէրի աստղն,—ու 1909 թ.ի ապրիլեան 13-ը Էնվերի համար այն հեռանկարը չունեցաւ, ինչ 1795 թ.ի Vendémiaise 13-ը ունեցաւ Բոնապարտի համար,—«ազատութեան հերոսը» սուլթան Աբդուլ-Համիդի գահընկեցութիւնից յետոյ նորէն վերադարձաւ Բերլին զինուորական գործակալի կոչումով դերմանական կայսեր «արքազան» անձնաւորութեան մօտ մնալու համար։

Իտալական պատերազմը տաճկական Նապոլէոնի թեկնածուի առաջ նոր հեռանկարներ է բանում։ Իհարկէ, Տրիպոլիսի պաշտպանութիւնը չի ծածկում Էնվերին այն անթառամ փառքով, որով պսակուում է Նապոլէոնը Եգիպտոսում։ Այնուամենայնիւ չի կարելի բացատրել՝ որ Էնվերն էր ոգին այդ պաշտպանութեան, որը նրա անունը փառքով է շրջապատում ողջ մուսուլմանական աշխարհում։ Երբ պատերազմն է սկսում Բալկանեան դաշնակցութեան հետ, Էնվերը, կրկին հետևելով նոյն աշխարհակալի օրինակին, վերադառնում է հայրենիք։ Կարելի է մինչև անգամ նմանութիւն գտնել Դիրեկտորեան ոչնչացնող 1799 թ.ի Բրումերի 19 յեղաշրջման ու Քեամիլ-փաշայի կաբինետը տապալող 1913 թ.ի յունուարի 10 ըմբոստացման մէջ,—թէև Բրումերի 19-ի յեղաշրջումն անցել է առանց իւր հպատակի ձեռքով զինուորական նախարարի սպանութեան։ Բայց այստեղ էլ նմանութիւնը կանգ է առնում։ Տաճկական յեղաշրջման չի հետևում Մանրենգոյի ճակատամարտն, այլ

միայն—Բուլղարներից դատարկուած Իզմիրի անարիւն գրաւումը։ Սակայն, բանտն այս անգամ էլ Էնվերին նրա մատուցած ծառայութիւններից աւելի է վարձատրում։ Տաճկական բանակն և ժողովուրդը կարիքն էին զգում զէթ խարուսիկ յաղթութեան ու գոհունակութեամբ վերագրում են Իզմիրի գրաւումն ազգային հերոս՝ Էնվեր—բէյի կորովին ու հանճարին։ Իսկ 1913 թւի զեկտեմբերին արդէն Էնվեր—փաշան նշանակւում է Թիւրքական պատուիրակութեան զինուորական նախարար։

Էնվերի այս համառօտ կենսագրականից դժուար չէ համոզուել, որ Նապոլէօնական նրա մէջ քիչ բան կայ։ Դա միայն բախտաւոր արկածախնդիր էր, քաջ, անգութ՝ պրուսացու պէս,—առանց որ և է բարոյական տուեալների, առանց հանճարի նշոյլի։ Բայց տաճկական ճգնաժամի պատմութեան համար շատ կարևոր է այն հանգամանքը, որ Էնվերն, անհասկած, 1914 թւի ամառն իրեն համարում էր գոնէ Թիւրքիայի առաջին կոնսուլը։ Թոյլ զառամեալ սուլթանն, իհարկէ, հաշւի մէջ չէր մտնում,—ի դէպ Էնվերը շուտով նրա ազգակիցն է դառնում, ամուսնանալով կայսրական տան պրինցուհու հետ։

Տաճկական զօրահանգէսի բոպէին Թիւրիայի փաստաբան տեսն անհասկած Էնվեր—փաշան էր։ Զեմալի մացրած ահաբեկութիւնից յետոյ՝ երիտասարդ—Թիւրքերի թշնամիները չքացել թագնուել էին։ Այդու նա կարող էր իւր ամենափառասէր միտումների իրականացման մասին երազել, իսկ բռնկուած հերոսական պատերազմը նրան պիտի թւար ամենայարմար առիթն այդ բանի համար։ Տարւով գերմանական միլիտարիստական ոգով,—Էնվերը կուրօրէն հաւանում էր Գերմանիայի յաղթանակին ու նրա օգնութեամբ՝ պանթիւրքութեան երազների իրականացման հնարաւորութեան։ Այդ պատճառով էլ նա նա ներկայացաւ որպէս Բարոն Վանգենհեյմի ամենաջերմ աջակիցը Թիւրքիան երբեակ համաձայնութեան հետ պատերազմի դիրքը նեսելու գործում։

Իրենց հերթին Գերմանացիները, թէև միանգամայն հասատում էին Էնվերի նւիրածութեան, այնուամենայնիւ միջոցներ են ձեռնարկում Գալսում մի այնպիսի դրութիւն ստեղծելու, որը նոցա ապահովէր նման յուզումնալից շրջանում բոլոր հնարաւոր պատահարներից։ Մի քանի հազար Գերմանացի սպաներ ու զինուորներ չէին կարող, իհարկէ, ըստ ամենայնի խարսխել Գերմանական տիրապետութիւնն Օսմանեան պետութեան մայրաքաղաքում։ բայց «Գերմանիա» ու «Բրեսլաուի» ներկայութիւնը միանգամայն է փոխում դրութիւնն ու ուժգնօրէն առաջ մղում Թիւրքիայի «եգիպտացումը»։—լինելով ուժեղ ամբողջ տաճկական նաւերը կարող էին երկու ժամուայ ընթացքում Գալիսը փլատակ-

ների կոյտի վերածել։ Գերմանական դեսպան բարոն Վանգենհեյմը իրեն յատուկ կոպիտ ցինիզմով չի յապաղում ընդգծելու ստեղծած դրութիւնը։ Զրաւականանալով մեզ գրգռել՝ տաճկական մինիստրական խորհուրդը սեպտեմբերի սկզբներին որոշում է նաւատորմիղն Սև ծովը չուղարկել։ Բայց այդ չէը խանգարում Գերմանական դեսպանին գրեթէ ամեն օր ուղարկել այնտեղ իւր նաւերը, իսկ մեծ եպարքոսին էլ՝ հետևեալն ազդարարել։—«Գերմանական նաւերն միայն մինչև մի որոշ ստիճան ենթարկւում են Թիւրքերին ու նոքա նշանակած են ծառայելու չէ թէ տաճկական, այլ գլխաւորապէս գերմանական շահերին»։

Ինձ այժմ մնում է պատասխանել այն հարցին, թէ ինչու Թալաաթ, Զեմալ կամ ուրիշ հայրենասէր-սպայ Սիցիլեան ընթրիքի կամ Բաղդադիմէոսեան գլուխ պէս Գերմանացիների ջարդ չկազմակերպեցին։ Անկասկած է, իհարկէ, որ Թալաաթը կանգ չէր առնի Էնվերին չէզոքացնելու խնդրի առաջ՝ եթէ այդ գոնէը կարևոր հայրենասիրական նպատակով, ինչպէս իւր ժամանակին, Էնվերի համաձայնութեամբ, առանց երկար ու բարակ կշռադատելու նրա զինուորական նախարար նաղիմ—փաշային ցած իջեցրեց պատմութեան բեմից։ Ճիշտ նոյնպէս Թալաաթ կամ Զեմալ չէին քաշուի Գալիս ներս խուժած Գերմանացիների ջարդին անցնելու, եթէ այդ նոցանից հանգամանքները պահանջէին։ Բայց դրութիւնն այնպէս էր, որ Էնվերի ու Գերմանիայի դէմ յարուցած շարժումը համակրանք չէր վայելի տաճկական սպայութեան շարքերում,—որոնք թէ հիմնաւորապէս մշակուած էին Գերմանական սպանեղծով ու՝ այլ գործակալներով ու թէ ենթակայ՝ Գերմանական փոռանդեղ յաղթութիւնների շուրջը պատող շինծու լուրերի մոլորութեան, որոնց տարածողն էր գերմանացիներից կաշառուած թիւրքական մամուլը[1]։ Դաշնակիցներից Էնվերի ու գերմանական սպա-

1) Ըստ պետպանութեան հաւաքած լուրերի, այդ շրջանում տաճկական ծերթերը Գերմանիայից ու Աւստրիայից հետեւեալ զումարներն են ստացել։—

ԹԵՐԹԻՐԻ ԱՆՑԻՆՆԵՐԸ։	Գերմանիայից ստացած դրամների գումարը։	Աւստրիայից ստացած դրամների գումարը։
Իկդամ	2,500	1,000
Սաքախ	2,000	1,000
Թաճին	2,000	1,000
Թասիմիրի Էֆքար	2,000	500
Թերջուման	500	500

(Տե՛ս ռուսական Նարնջագոյն դիրքը, № 33)

Ներքի զէմ կազմակերպած յարձակումին ամենալաւ դէպքում կարող էր տանել դէպ ներքին քաղաքացիական կռիւը, որի ելքն անյայտութեան մէջ էր պատած, ու որի առաջին հաւանական զոհերը Թալաաթն ու Ջեմալը պիտի լինէին։ Այդ պատճառով տարօրինակ երկորդութիւնը չ'զայրացուեց,—ու 1914 սեպտեմբերի 28 գերմանական դեսպանատան տեղի ունեցած պատմական նիստին բոլոր երեքն էլ Թիւրքիան Գերմանիային յանձնեցին, երկուսը, թերևս անդիտակ արածին ու պայմանը պատեհ ժամին խախտելու յոյսին դիտաւորութեամբ, իսկ Էնվերը — միանգամայն գիտակցաբար ու լի հաւատով դէպ իւր քաղաքականութեան հանճարեղութիւնը։ Այսպիսով, «ազատութեան հերոս» կոչեցեալի վրայ է ընկնում հայրենիքի կործանման ամենածանր պատասխանատուութիւնը։

III

ՈՂՐԵՐԳՈՒԹԻՒՆԸ ՏԱՃԻԿ ԺՈՂՈՎՐԴԻ

Երիտասարդ Թիւրքիայի ամբողջ պատմութիւնը խորը ողբերգութեան քամին է փչում։ Կուի դրօշը բարձրացնելով Աբդուլ—Համիդի բռնապետութեան դէմ, երիտասարդ—թիւրքերն ենթարկեցին իրենց հայրենիքը նախ՝ լուռնականական ակումբին—«Միութեան և յառաջադիմութեան» կուսակցութեան կոմիտէին, իսկ ի վերջոյ—Էնվերի բռնակալութեան։ Նպատակադրելով Թիւրքիան մուսուլմանական աստուածպետութիւնից վերածել իրաւական պետութեան,—նոքա չ'վերցրին նրանից շերիաթի կապանքները, տարուեցին ամենավտանգաւոր պանիսլամականութեամբ ու չ'մերժեցրին դատաստանի ու վարչութեան մէջ քիչ-շատ շօշափելի բարենորոգութիւնները։ Գրելով իրենց դրօշակի վրայ «օսմանականութիւն»,—նոքա բոլոր այլացեղ ժողովրդներին յուսահատութեան հասցրին, իսկ մի քանիսիներին էլ ապստամբութեան դիրքը նետեցին։

Իսկ այն ինչ երիտասարդ—Թրքական յեղափոխութեան առաջին ամիսներին կարելի էր ուրիշ ելքի սպասել։ Եւ, իրօք, Եւրոպան, ու մասնաւորապէս Ռուսաստանը չ'պիտի ափսոսան՝ որ նոքա երիտասարդ—Թիւրքերին ժամանակամիջոց են տուել իրենց ինքնանկախ գոյութեան իրաւունքն ապացուցելուս Այդպէս աւելի լաւ։ Այժմ պատմութիւնը չի ասի՝ Թէ տաճիկ ժողովրդին իւր սուլթանների մեղքերի համար հնարաւորութիւն չ'տրուեց աշխատելու իւր կենսունակութիւնն ապացուցելուս

Այո, առաջին օրերին ու ամիսներին երիտասարդ-Թրքական

յոյզերը գեղեցիկ էին։ Դժւար էր կասկածել տաճիկ երիտասարդ սպաների վառ հայրենասիրութեան մէջ, դժւար էր երիտասարդ-Թրքական պարագլուխների անկեղծութեանը չ'հաւատալ։ Պատմութիւնն այդ կ'ընդունի։ Բայց նա ստիպւած պիտի լինի նոյնպէս ընդունել՝ որ տաճիկ հասարակական կեանքի նման փթթումն շարունակւեց շատ կարճ ժամանակ—մի քանի ամիս միայն—ու վերջացաւ ռէակցիայի պարտութիւնից յետոյ 1909 թ. ապրիլին։ Մի շատ զբաղեցուցիչ երևոյթ տեղի ունեցաւ։ Երիտասարդ-Թիւրքերն Աբդուլ—Համիդի ռէակցիան խորտակեցին, բայց փոխանակ յանուն իրաւունքի և ճշմարտութեան իրենց յաղթանակն օգտագործելու, նոքա աստիճանաբար իրենց բոլոր դաղափարներին դաւաճանեցին։

Ինձ թւում է, որ երիտասարդ—Թիւրքերի նման յաւալի էւոլիւցիայի բոլոր բարդ պահանջները կարելի է մի գլխաւորի վերածել,—երիտասարդ—Թիւրքերը չաւին գէթ մի տաճիկ իրօք խոշոր, չասենք արդէն մեծ գէմք, իսկ այն ինչ Թիւրքիայի փրկութեան համար հարկաւոր էին հանճարն ու երկաթեայ կամքը Գետրոս Մեծի։ Հենց որ 1909 թւի մարտի 31 յետագիմական յեղաշրջումը ցոյց տւաւ երիտասարդ—Թիւրքերին, թէ նոցա ու ժողովրդի մէջ անդունդն է տիրապետում՝ նոքա իսկոյն թողին իրենց երկրի մութ ոյժերի հետ կուելու ամեն մի ցանկութիւն։ Ու դարձան մութ եւ իրենք։

Երիտասարդ-Թիւրքերը—գրեթէ բոլորն էլ առանց կրթութեան մարդիկ են եւրոպական մտքով։ Բայց նոքա բոլորը, թէպետև մակերեսային, ծանօթութիւն ունէին ֆրանսիական յեղափոխութեան պատմութեանը, գլխաւորաբար ըստ Լուի Բլանի, ու շատ էին սիրում համեմատութիւնները նրա դործիչների հետ։ Եւ իրօք, պիտի ընդունել Թալաաթի դուռ ոռբեսպիերեան պատրաստակամութիւնն յանուն հասարակական բարիքի զոհաբերելու իւր համաքաղաքացիներից իւրաքանչիւր մէկի կեանքը։ Կարելի է, թերևս, Ջավիդի մէջ գտնել Նեկէերի որոշ գծերը, կարելի է ասել՝ Թէ Հիւսեյն Ջավիդի զալաին երբեմն յաջող նմանւում էր Կամիլլ Դեմուլենի գրչին, և ընդունել՝ որ լրտեսութեան ապարիզում Ֆուշէն կարող էր դասը վերցնել Ջեմալից։ Բայց այդ բոլորը քիչ էին Թիւրքական պետութիւնը վերակազմելու համար։ Կռիւը տաճիկ ժողովրդի սոսկալի տգիտութեան ու կրօնական մոլեռանդութեան հետ վեր էր միջակ մարդկանց ոյժերից, որոնք իրենց որպէս Ֆրանսիական մեծ յեղափոխութեան հերոսներն էին երևակայում, իսկ իրօք միայն Bourreaux էին։ Նոցանից լաւերին փչացրեց առաջին հանդիպումն իշխանութեան, նոցա յետևից ահաբեկիչն շարւեցին ուրիշները,—ու յանուն դաղափարների մղող

կռիւը շատ շուտով փոխանակուեց անհատական շահերի շուրջը մղուող կռիւի, վերջին հաշուով առեղծելով՝ անիշխանականութիւն, բախտաւոր արկածախնդրի դիկտատուրա ու ենթարկուելի օտարի լծին։ Ու այն երիտասարդ-թըրքական սպաները, որոնք յանուն Թիւրքիան Եւրոպական միջամտութիւնից ազատելուն 1908 թուին սպառամբութեան դրօշն էին պարզել, այսօր—շահամոլախտի պինուորներ էին գերմանական գլխաւոր շտաբի ձեռքին։

Ողբերգութիւնը տանկական ժողովրդի կայանում է նրանում, որ նա համաշխարհային բեմում իր երեսն դալու օրուանից իւր գոյութիւնն արդարացնելու համար կուլտուրայի տեսակէտից ոչինչ չի արել։ Ուրիշ ժողովուրդների կեանքի մէջ մտել է նա միայն արցունքների և արեան հեղեղներով, նա բերել է նրանց այլացեղների ու այլադաւանների սարկութիւն, ու միայն ստրկութիւն։ Տիրապետելով հին կուլտուրական ցեղերին—յոյներին, արաբներին, սլաւոնական ժողովուրդներին, դրաւելով սքանչելի քաղաքը, աշխարհի մայրաքաղաքը՝ տաճիկ ժողովուրդը ճահճացել է։ Ընդունելով հաւատն իրենցից ցեղով տարբեր ազգերից, նա չ'կարողացաւ ազգային մուսուլմանական եկեղեցի ստեղծել։ Աղքատ տաճկական լեզուն հրաժարւում է վերացական մտածողութեանը ծառայելու ու դրեթէ իւր ամբողջ պաշարը վերացական հասկացողութիւնների քաղում է արաբական բանասիրութեան ովկիանոսից։ Բայց և դիմաւորելով արաբական մտքի փառահեղ հոգուտով, զարգացնելով պարսկական բանաստեղծութեան գանձարանից գողացուած թանգարժէք քարերով՝ տաճիկ ժողովուրդն այնուամենայնիւ չ'ծնեց և ոչ մի մեծ գաղափար։ Ջլսեց աշխարհը նրանից նոր ձայն ու երգ, չ'տեսաւ նոր դէմք ու ձև։ Չկատակեց տաճիկ ժողովուրդն իր յետնորդ սերունդներին և ոչ մի անուն բանաստեղծի, նկարչի, քանդակագործի, երաժշտագէտի, դիտնականի, որը հիացումով ու սիրով կրկնեը մարդկութիւնը։ Դա-դատարկագոյն—ժողովուրդ է։ Նրա պատմական միսեան միայն աւերներն է եղել, իսկ աւերելու համար—չի պահանջւում ոգի։ Բայց ազգային կեանքի հիմունքները ստեղծելու համար ոգի հարկաւոր է, ու հենց այդ է՝ որ Թիւրքիան չունի։ Եւ իզուր էին աշխատում մի ժամանակ երիտասարդ-Թիւրքերը նրա մէջ այդ ոգին մացնել։ Նոքա իրենք մարմինն էին նոյն մեռած մարմնից։

Եւ այժմ այդ անկեանք, լճերա զանգւածը դեղավարում է Գերմանիան։ Նա, իհարկէ, չի ցանկանում նոր կեանք ներշնչել Թրքական պետութեան։ Նրան հարկաւոր է միայն պատերազմի ժամանակ գալվանացնել Տաճաստանը։ Եւ այդ պատճառով Գերմանիան դիմում է Թիւրքերի բոլոր պապենական ընազդներին և, ի միջի այլոց, աշխատում է նոցա երեակայութիւնը գրգռել սըբ-

բազան պատերազմի հին ուրուականով։ Ու ահա Գերմանիայի հենց այդ քաոսնելի խաղն իսլամի հետ ու այդ խաղին Թիւրքիային ենթարկելն ինձ թւում է աւելի քան բնորոշ թէ առաջինի ու թէ վերջինի համար. Այդ պատճառով ես ինձ թոյլ եմ տալիս քիչ երկար կանգ առնելու նրա վրայ։

Այսպիսով՝ մեր դէմ տարւում է սրբազան կռիւ—ջիհադ, մեր դէմ՝ «անհաւատ» Ռուսների, Ֆրանսիացիների, Անգլիացիների, որպէս իսլամի թշնամիների. բայց ինչպէս բացատրել՝ որ այդ կռիւը տարւում է մի նոյնքան «անհաւատ» գեաուրի, Գերմանական թագաւորի հետ, ու նրա զեներալների ղեկավարութեան ներքոյ։ Մթթէ մարգարէի հաւատացեալ որդիների և անհաւատների զէնքի նման եղբայրութիւնը բղխում է դուրանից ու չերքէթից։

Այդ հարցի պատասխանն ես նախ և առաջ սկսեցի փնդրել այն կոչի մէջ, որը դեռ մեզ հետ պատերազմելուց մի ամիս առաջ պանիսլամական կազմակերպութիւնների անունից ցրում էին Գոլսում։ Այդ կոչի ընթեռնումը, սակայն, իմ կասկածներն աւելի ուժեղացրեց։ Այդ կոչի մէջ ապացուցւում է,—որ սրբազան պատերազմը պարտադիր է, որովհետև բոլոր երկրների մուսուլմանները եղբայրներ են ու պարտական՝ մէկ—մէկու օգնութեան գալու։ Եթէ մուսուլման ժողովրդներից որևէ մէկը հալածւում ու կեղեքւում է մի ուրիշից՝ անհաւատ ժողովրդից, բոլոր երկրների մուսուլմանները պիտի աշխատեն ազատագրել նրան։ «Առաւել ևս Խալիֆը, տեղապահը մեր Մահմետ Մարգարէի (Թող Ալլահի օրհնութիւնը նրա վրայ լինի), ու Խալիֆայութեան բնակավայրում ապրող մուսուլմաններն եթէ կեղեքւում են անողորմ անհաւատներից, սրբազան պատերազմի արդէն այդ ժամանակ պարտադիր է դառնում ընդհանրապէս բոլոր հաւատացեալների համար։ Կոչն այնուհետև մատնանշում է այն հալածանքները, որոնց ենթարկւում են մուսուլմանները՝ Հնդկաստանում, Ռուսաստանում, Պարսկաստանում, Եգիպտոսում, Ալժիրում, Թունիսում, Մարոկկում, և աւելացնում, որ «հենց Խալիֆայութեան մայրաքաղաքն այլ և այլ պատրւակների տակ յաճախ վտանգի է ենթարկւում անհաւատների կողմից»։ Ու անհաւատ թշնամիները, որոնք ցանկութիւն ունեն Իսլամի կրակը մարելու, անուանապէս կոչւած են.—դրա՝ Անգլիացիները, Ֆրանսիացիները ու Ռուսները են։

Այսպիսով՝ կոչը պարզորոշ ուղղւած է երեակ համաձայնութեան դէմ։ Բայց հենց նոյն տեղում բերւած են դուրանից և հետևեալ քառեակները.—«Դուք, հաւատացեալներ... Օգնութիւն մի հայցէք Սուրբ Գիրքն ընդունողներից... Մի բարեկամանաք քրիստոնեաների հետ... Նա, ով նոցա բարեկամ կ'ընտրի՝ կ'նմանւի

նոցա, ու Ալլահը կ'դադարի մոլորւածների ուղեցոյցը լինելուց...» Այս քառակներից պարզօրէն երևում է, որ սրբազան պատերազմին գերմանացիներից՝ որպէս քրիստոնեաներից, օգնութիւն չ'պիտի հայցել. ընդհակառակը՝ կոչի ընթերցումն աւելի շուտ այն մրցաքին է բերում, որ համայն տիեզերքի մուսուլմաններն իրենց սրբազան պարտքը կ'կատարեն, եթէ գերմանացիներին դուրս վռնդեն Խալիֆայութեան հայրենիքից։

Ինչպէս բացատրել կոչի նման հակասական բնոյթը։ Ինչպէս կարող էին գերմանացիք, որոնց բացայայտ ներշնչման տակ կազմւել է նա, թոյլ տալ իրենց համար նման վտանգաւոր խմբագրութիւն։ Միթէ՞ ճոխ բոլորը իսլամն են ընդունել եւ այդու՝ ճոցա ճկատմամբ անկիրառելի են դուրանի բառեակները։

Ոչքան էլ այդ ենթադրութիւնն, առաջին հայացքից, հրէշաւոր թւայ,—այնուամենայնիւ մանանաչաց հակասութեան պատճառն անկարելի է գտնել։ Ի դէպ՝ աւելի յաճախակի են լսւում Թիւրքիայից եկած լուրերն այն մասին, թէ գերմանացիները ներշնչում են կայսրութեան մուսուլմաններին,—որ ինքն՝ իրենց Կայսեր—Հաջի—Մահմետ—Վիլհելմն առաքինի մուսուլման է դարձել։ Վերջապէս, չ'պիտի զարմանալ՝ երբ մարդիկ, որոնք թոյլատրելի են գտնում աղնւութեան տեսակէտից միաժամանակ երկու հաստատութեան մէջ գտնւել, համարեն թոյլատրելի և խղճի տեսակէտից միևնոյն ժամանակ երկու աստուածների ծառայել։ Իրենց հայրենիքում գերման գիներալները, սպաներն ու գինւորները, հասկանալի է, շարունակում են համարւել բողոքականներ կամ կաթոլիկներ։

Բայց, միւս կողմից, դժւար է մտածել—որ նման սրբապիղծ վերաբերմունք դէպ իրենց հաւատը մօտ լինէր մուսուլմանների սրտին։ Այդու՝ հետաքրքրական է դառնում պարզել իրեն համար,—թէ որպիսի՞ վերաբերմունք ունին դէպ ներկայ «սրբազան պատերազմը» նոքա, որոնք իրենց հոգու խորքում Ֆոն—Սանդերսին, Ֆոն—դեր—Գոլցին ու բարոն Վանգենհեյմին չեն համարում ուղղափառ մուսուլմաններ։

Ինչպէս յայտնի է,—Իսլամը հիմնւած է ոչ միայն Ղուրանի այլ և Սուննայի (աւանդութեան), Իջմայի (մուսուլմանական հասարակութեան համաձայնութեան) և քիասայի (դիտական աստւածաբանների սրբազան կտորների մեկնաբանման) վրայ։ Մուսուլմանական սրբազան իրաւունքի վերջին աղբիւրն առանձնապէս աւելի տարածուն է առանում. և, իհարկէ, ինչպէս ուղղափառներին, նոյնպէս ու առաւել ևս մեզ՝ անհաւատ գիաւորներիս, դժւար է իսլամի իմաստն ըմբռնել, առանց նրա մեծ ուսուցիչների հեղինակութիւններին դիմելու։

Այսպիսով՝ ցանկանալով պարզել ինձ համար անցուդարձերի իմաստը, սրբազան պատերազմի էութիւնը՝ յայտարարւած Թուրքի Վիլհելմի հետ խալիֆ Մահմետ—Րեշադից,—ես բայց եմ առնում յայտնի մուսուլման պետականագէտ Մավերդիի աշխատութիւնը, որը ծնւել է Խիջրի 364 թւին Բասրայում և մեռել—Խ. 450 թւին (այսինքն 1058 թւին Քրիստոսի ծննդից յետոյ) Բաղդադում, Աբբասիդների ժամանակ։ Այդ աշխատութիւնը կոչւում է «Էլ—Ախքամ—էս—Սուլթանիէս, այսինքն—«Սուվերէն իշխանութեան կանոնները [1])»։ Ու ահա որպիսի տեղեր, զարմանալիօրէն համապատասխանող Թիւրքիայի ներկայ կացութեան, ես գտայ առաջին գլխում խալիֆայութեան դաշը կնքելու մասին»։

Գործունէութեան ազատութեան բացակայութիւնը (Խալիֆի) թղխում է երկու դրութիւնից,—արդելքից ու բռնադատութիւնից։ Ասում են, որ արգելքն այն ժամանակ գոյութիւն ունի՝ երբ Խալիֆը գտնւում է իր հպատակներից որևէ մէկի ազդեցութեան տակ, որը փաստօրէն իւրացրել է իշխանութեան իրականացումը, թէպետև արտաքուստ նա չի արտայայտւում ոչ անհնազանդութիւն, ոչ անհամաձայնութիւն իրերի նման դրութիւնն ինքնին չի խանգարում, որպէսզի ստրկացած միապետն էլի Խալիֆ մնայ, ու չի անպրպատնում նրա իրաւասութիւնների իսկութեան վրայ (Վալայ, 65). սակայն, պիտի ուշադրութեան առնել այն մեկի գործողութիւնների բնոյթը, ով տիրապետում է Խալիֆի վրայ, և տարբերել՝ եթէ այդ մարդու գործողութիւնները հաշտ են հաւատի հրահանգների և արդարութեան պահանջների հետ, այդ դէպքում Խալիֆին թոյլատրւում է չ'խանգարել այդ մարդուն՝ որպէսզի նա իւր սկսած գործերի աւարտումը և ընդունած որոշումների անթերի իրականացուն ապահովի ու խուսափի շերիաթի գործերի կանգ առնելուց, որն ազգի համար ճնասակար խռովութիւն կարող է առաջ բերել։ Բայց եթէ այդ մարդու գործողութիւնները համաձայն չեն հաւատի և արդարադատութեան հիմունքների հետ, այդ դէպքում հանդուրժել այդ բոլորը Խալիֆին չի թոյլատրւում. նա պարտական է իրեն օգնական փնտռելու, որը թէ կապտիչի ձեռքերը կաշկանդէր ու թէ իշխանութեան շահագործմանը վերջ դնէր։

Մավերդիի այդ կտորի վրայ միայն էնվեր—փաշայի ուշադրութիւնը կարելի է հրաւիրել։ Նա կարծես թէ յատկապես նրա

---

[1]) Տես ֆրանսերէն թարգմանութիւնը Կոմս Օստրորոգայի մեկնութիւններով։ El-Ghkam Es-Soultaniqa, Fraité de Droit Pullic Musulmam d'El-Mawerdi, traduct et annoté par le Comte Léon ostroróg, Paris, 1901).

համար է գրուած. Մավերդին շարունակում է.—«Երբ Խալիֆայութեան դաշն կնքելուց յետոյ բռնութիւն է ստեղծւում, այն ժամանակ ամբողջ ժողովուրդն է պարտական խալիֆի ազատագրուելուն աջակցելու, որպէս հետևանք այն պարտադիր օգնութեան՝ որը նա է ստանձնել դաշնագրութեան ուժով։ Գերի—Խալիֆը շարունակում է մնալ Խալիֆայութեան տէրը մինչ այն,—քանի դեռ յոյս կայ նրան ազատելու, քանի դեռ հնարաւոր է նրան գերութիւնից փրկելու կռուի կամ փրկանքի միջոցով։ Իսկ եթէ ազատագրելու յոյսը կորած է համարւում, այդ դէպքում պիտի տարբերել,—թէ արդեօ՞ք Խալիֆը գերութեան մէջ է հերձուածող—մուսուլմանի, թէ՞ անհաւատների մօտ»։

«Երբ խալիֆը գերութեան մէջ է անհաւատների մօտ ու այլեւս յոյս չ'կայ նրան փրկելու՝ այդ դէպքում նա զրկւում է Խալիֆայութեան վրայ ունեցած իւր իրաւունքներից, իսկ ընտրողները հաւատարմութեան երդումն են բերում նոր խալիֆին»։

Ինձ թւում է այնուամենայնիւ, որ սուլթան Մահմետ—Ռեշադը գերութեան մէջ է չէ թէ մուսուլմանների, այլ անհաւատների մօտ։ Եւ այդ պատճառով՝ եթէ չ'բացասենք Մավերդիի շատ մեծ հեղինակութիւնը, այդ դէպքում բոլոր մուսուլմաններն ինչպէս մի մարդ պէտք է ոտքի կանգնեն և ազատեն նրան Գերմանացիներից։ Իսկ եթէ մուսուլմաններն այդ բանի համար շատ են թոյլ և յոյս չ'կայ Վանգենհեյմի ու Էնվերի ձեռքերից սուլթանին փրկելու՝ այդ դէպքում նոքա պարտական են մի այլ տեղ, ասենք թէ Բաղդադում, նոր խալիֆ ընտրելու։ Յամենայն դէպս անհաւատների գերի—Խալիֆը չի կարող մուսուլմաններին այդ անհաւատների թշնամիների դէմ սրբազան պատերազմի կանչել։ Նման անհեթեթ կոչն, ըստ երևոյթին, բացատրւում է նրա վրայ գործադրուած բռնադատութեամբ և մուսուլմանների համար, իհարկէ, նա պարտադիր համարւել չի կարող…

169

* * *

Մինչ մեծ ու անջնջելի անարգանքի դուռը հասցրեց Թիւրքիային Գերմանիան։ Նա նրա հետ վարւեց աւելի վատ, քան Բելգիայի։ Նա Բելգիայից նրա հողը խլեց, բայց փայլում է աւելի վառ փայլով Բելգիական ժողովուրդն ու նա այսօր էլ՝ ինքնանկախ, պետութիւն է թէպէտև անհող։ Թիւրքիային Գերմանիան կաշկանդել է ոչ միայն ֆիզիքական ուժով, ոչ միայն «Գեբենով» կամ Սանդերսով։ Նա կատարելապէս ենթարկել է նրան իւր

այսօրւայ ամօթաբեր մտայնութեան, նա նրան կոպիտ ուժի երկրպագութիւնն է պատւաստել, շոյել նրա բոլոր ստոր արիւնըռուշտ բնազդները, նա լցրել է նախնական անգթութեամբ օծուած թիւրքի արեան մէջ թոյնը նրբացած գերմանական բարբարոսութեան և, վերջապէս, նա սովորեցրել է Թիւրքիային իւր հաւատի հետ խաղալ։ Չէ, Գերմանիան չի պղծել Թիւրքիան. օսմանների պետութիւնը բաւականաչափ ապականուած է եղել, երբ գերմանացիների գիրկն է ընկել։ Բայց Գերմանիայն արել է այն ամենը, ինչ իրենից է կախած, թիւրքական քայքայման պրոցէսն արագացնելու մտահոգութեամբ։

Սարսափելի չէ Ռուսաստանի համար այդ «սրբազան պատերազմը»,—Ռուսաստանի, որը, սրբազան պատերազմն է մղում։ Վիլհելմը—ողորմելի կատակերգութիւն է, ու Էնվեր-փաշան արդէն ճաշակել է, թէ կանաչ դրօշը որքան քիչ է ոգևորում նրա հրոսակներին ռուսների դէմ մղած կռւում։ Բայց ոչինչ, բացի աւելորդ խայտառակութիւնից՝ այս նիւթումից Գերմանիայի համար չ'պիտի դուրս գայ։ Բայց ի՞նչ արժէք ունի այն ժողովուրդը, որը նման ծաղրանքն է տանում իւր հաւատի վրայ, և ի՞նչ վիճակի է նա արժանի։

Ես ինձ թոյլ եմ տալիս պատասխանելու այդ հարցին, ինկատի առնելով և իմ անձնական տպաւորութիւններն ու յիշողութիւնները։ 16 տարի առաջ ես եկայ Օսմանեան կայսրութեան հայրենիքը՝ ամբողջապէս տոգորուած Պետրոգրադի alma mater-ի մեծահոգի գաղափարներով ու Սորբոննի վսեմ պատգամներով։ Իմ միջազգային credo-ն միանգամայն ընդգրկւում էր այն ժամանակ Բելգիական յայտնի գիտնական Լօրանի հետևեալ սքանչելի խօսքերով.—«Toutes les nations sont de Dieu»—բոլոր ժողովուրդներն են Աստուածանից։ Իւրաքանչիւրն ունի իւր սեփական միսիան այս աշխարհում, իւրաքանչիւրն իւր խօսքը պիտի ասի գալիք սերունդներին։ Ես գիտէի, իհարկէ, որ ազգերն, ինչպէս և մարդիկ—գործում են՝ և՛ սխալներ, և՛ յանցանքներ։ Բայց ես կիրառում էի ժողովրդների նկատմամբ Դոստոևսկու մեզ կտակած մեծ խօսքերը, թէ—պատժիր յանցագործին, առանց մարդու անձնաւորութիւնը ստորացնելու։ Ու ազգերի գալիք դատարանը, իմ երևակայութեան մէջ, պիտի որ պատժէ յանցապարտ ժողովրդներին, միայն թէ առանց ստորացնելու նոցա ազգային դէմքը, առանց դիպչելու նոցա աստուածային էութեան։

Տաճկական տիրապետութեան ժամանակ ես շրջեցի Մակեդոնիայի դաշտերն ու գիւղերը, ու ամենը, ինչ ես այնտեղ տեսայ՝ իմ սիրտը լցրեց խորն ատելութեամբ դէպ սլաւոնների հարստահարիչներն ու մարդասպանները։ Բայց ես տեսայ նոյնպէս,

թէ ինչպէս քրիստոնեաների հետ միասին Աբդուլ-Համիդի ահաբեկումից տառապում են և իրենք թիւրքերը ու ես տրամադրւեցի ուժիմի սոսկումը վերապրել, գլխաւորապէս, կարմիր սուլթանին։ Ու այդ պատճառով՝ երբ երիտասարդ-թիւրքերը մի համարձակ շարժումով թօթափեցին իրենցից այդ խայտառակ լուծը, երբ խանդավառ տաճիկ սպանները բուլղարական չեռնիկների գիրկը նետւեցին, երբ սիրոյ ու եղբայրութեան կոչը համայն թիւրքիայում հնչեց—ես զգացի մեծ թեթեւութիւն։ Ես հաւատացի—չէ թէ վերածննդին, այլ տաճկական ոգու ծնունդին։ Ես մտածեցի, որ Օսմանեան կայսրութեան միւս ժողովրդների ազատութեան ու երջանկութեան համար՝ անհրաժեշտ. չ'պիտի համարւի տաճիկ ժողովրդի մահը։ Ինձ թւաց, թէ այդ ժողովուրդն ականջալուր եղաւ, վերջապէս, քաղաքակիրթ աշխարհի ձայնին—պատրաստ նրան իւր իրաւահաւասար անդամը ճանաչելու, երէ միայն նա կ'ապացուցի՝ որ կարող է ինքն իրենով ապրելու, իւր հիւթերով, առանց քրիստոնեայ ժողովրդների արիւնը ծծելու։

Նոցա համար, որոնք ինձ այս թռուցիկ ակնարկը կարդալու պատիւը մատուցին, աւելորդ է ասել՝ որ իմ պատրանքները շուտով չքացան։ Չ'պիտի,—կ'ասէր արդեօք Լորանը, եթէ մինչ մեր օրերըն ապրէր, Բելգիայի մխացող փլատակների վրայ.—«L'Allemagne est de Dieu!»?, կ'ընդունէր նա արդեօք ժամանակակից Գերմանիայի աստուածային էութիւնը։ Իսկ ինչ ինձ է վերաբերում, —ես որոշում եմ խօսել իմ մասին, իհարկէ, միայն այն պատճառով՝ որ թերևս իմ էւոլիւցիան ինքնին որոշ հետաքրքրութիւն ներկայացնի որպէս էւոլիւցիա մի մարդու, որն ականատես է եղել թէ համիդեան կարգերի ու թէ երիտասարդ-թրքական գիւցազներգութեան,—ես այժմ Լորանի այդ ֆորմուլան կ'փոխեմ հետեւեալ խմաստով.—ժողովուրդները կարող են «Աստուածանից» համարւել, միայն քանի դեռ չեն կորցրել Աստուածային պատկերը։ Իհարկէ, իւրաքանչիւր անգամ ամենափոքրիկ ժողովուրդը—լինի դա չերեմիսական թէ վոտեացական—կատարում կամ կատարել է երևէ, մեզ ոչ միշտ հասկանալի, իւր պատմական միսիան, և այդու՝ անհրաժեշտ է։ Բայց պատմական անհրաժեշտութեան գիտացումը մարդկանց և ժողովրդների սրտերում զուգակցւում է իւր արածների համար պատասխանատուութեան զգացումի հետ։ Ժողովուրդները չեն կարող սառնասրտօրէն դիտել՝ թէ ինչպէս մէկն իրենցից ոտնահարում է բոլոր Աստուածային ու մարդկային օրէնքները, ինչպէս նա իջնում է աւելի ցած այն մակարդակից, որն ընդունւած աւեալ շրջանից որպէս բարոյական minimum։ Նման ժողովուրդն այդ ժամանակ արդէն Աստուածային չէ, ու չի կարող հանդուրժելի լինել։ Աստուածանից է—կռիւը նրա գէմ, անդոք

կռիւը, մինչ նա նորէն չի ընդունի պատկերն Աստուծոյ կամ չի խորտակւի։

Տաճիկ ժողովուրդն արդէն վաղուց է ի կատար ածել իւր կործանարար միսիան։ Պատմութիւնը ցանկացաւ, որպէսզի նա վերջ դնի քայքայւող Բիւզանդիային, բայց նա թոյլ չի տայ տաճիկ մեռած սեղմումին կենսունակութեամբ լի ժողովրդների յոյժ հզօր աշխանդելու վերջին անգամ տաճիկ ժողովրդին վերապահութեամբ թողնւեց գոյութեան իրաւունքը։ Այժմ նա կորցրել է այդ իրաւունքը—թէ Գերմանիայի ու թէ իւր սեփական մեղքի շնորհիւ։ Տաճիկ ժողովուրդը կեանքի ձայնը չլսեց ու թոյլ տւաւ, որպէսզի գերմանական ձեռքը նրան դեպ խորխորատը հրի։ Շատ անգամ է կարմիր կիսալուսինը բարձրացել համաշխարհային պատմութեան ասպարիզի վրայից։ Այժմ նա նորից է պակասում։ Ու մենք բոլորեքեան յոյս ունենք, մենք բոլորս հաւատում ենք, մեր մէջ ամեն ինչ է ասում,—որ Եւրոպայում այլևս տաճկական նորալուսին չ'պիտի լինի։